

ՄԻՈՆ



ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ
A PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM

2017

ՅՈՒՆԻՍ-ԴԵԿՏԵՄԵՐ





Ի Ո Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**Պաշտօնաթերթ Երուսաղեմի Հայ Պատրիարքության
ՆՈՐ ՇՐՋԱՆ**

2017

ՅՈՒՆԻՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 6-12

2017

JULY - DECEMBER

No 6-12

S I O N

VOL. 89

**A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM**

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

90-ԱՄԵԱԿ ՄԻՈՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սուրբ Աթոռոյս պաշտօնաթերթ՝ Միոնի 90-ամեայ այս հանգրուանը դարձեալ երախտագիտութեան, յարգանքի եւ սիրոյ զգացում մը կ'արթնցնէ մեր հոգիներուն մէջ, հանդէպ անոնց՝ որոնք սկսան Միոնի նոր շրջանը, հոգ չէ թէ երբեմն յաջող եւ երբեմն վարանոտ, սակայն հոն միշտ կ'արտացոլար ծառայութեան դրական ոգին ու բարի մօտեցում մը: Թերեւս սկսած գործը միշտ չունեցաւ ակնկալուած նոյն արդիւնքն ու թափը, արդարացնելու կրօնական, գրական եւ բանասիրական պաշտօնաթերթի մը հետ կապուած ակնկալութիւնները, սակայն Միոն տուած է ինչ որ կարողացած է: Եթէ Միոն չէ յաջողած լիովին տալ ինչ որ պարտ էր, միւս կողմէն սակայն ըրած է ա՛յն ինչ որ կրնար ընել, ա՛յն ինչ որ իր պարտքն էր: Եթէ ոչ ակնկալուածը՝ գոնէ տուած է կարելին, համաձայն տարիներու պատճառած անակնկալներուն: Միով բանիւ եթէ Միոն չէ յաջողած իրականացնել իր նպատակը, գոնէ որոշ չափով արդարացուցած է իր գոյութիւնը:

Երանաշնորհ Դուրեան Պատրիարքի օրով ձեռնարկուած վերանորոգչական եւ կրթական գործը, զոր հանգուցեալ Պատրիարքը կոչած էր «Սուրբ վրէժխնդրութեան գործ», որ պատասխանն էր Օսմանեան Թուրքիոյ Հայոց բնաջնջման ծրագրին, Դուրեան Պատրիարք Սրբոց Յակոբեանց Տպարանի վերաբացումով, Ժառանգաւորաց վարժարանի վերակազմութեան եւ Միոն պաշտօնաթերթի նոր շրջանի հրատարակութեամբ կու գար իրականացնել իր այդ մեծ ծրագիրը, որ միաժամանակ հայուն յաւերժութեան յիշեցումն էր Թուրք կառավարութեան:

Իննսուն տարիներ առաջ Միոնի առաջին խմբագրականի համաձայն՝ պաշտօնաթերթը գլխաւորաբար հանդէս պիտի գար իբր կրօնական, բանասիրական եւ որոշ չափով գրական թերթ մը: Կրօնա-բարոյական նիւթերէն զատ, Միոնի էջերը տեղ պիտի յատկացնէին մատենագրական նիւթերու, սակայն հակառակ այս բոլորին մասնագիտական առումով Միոն չեղաւ զուտ կրօնական, գրական եւ բանասիրական թերթ մը, որ իբր պաշտօնաթերթ կամ Պատրիարքարանի հանդէսը ըլլալէն աւելի եղաւ անոր ոգին, ուր օգտաշատ այլ յօդուածներու եւ նիւթերու կրօնական եւ իմացական սնունդին հետ կը ձգտէր գոհացնել բարձր ճաշակը ընթերցողներուն, շնորհիւ իր յօդուածագիրներուն, որոնք բոլորն ալ միշտ տէր եղան իրենց յօդուածներուն:

Իննսուն տարիներ առաջ սկսող Պատրիարքարանիս պաշտօնաթերթի սատար հանդիսացան այդ օրերու եկեղեցական եւ ազգային կարեւորագոյն դէմքերը, Դուրեան եւ Գուշակեան Պատրիարքաներ, Մ. Եպս. Աղաւնունի: Զառասնական թուականներուն արդէն Միոնի տիրական ու մղիչ ոյժը կը հանդիսանայ Եղիշէ Արք. Տէրտէրեան, որ իր խմբագրականներով, քարոզներով եւ մանաւանդ բանաստեղծութիւններով կու գար ճոխացնելու եւ միաժամանակ նոր երանգ մը տալու պաշտօնաթերթին: Եկեղեցական յօդուածներու շարքին այդ օրերուն եղան նաեւ նշանաւոր աշխարհական գրողներ, նման Նիկոլ Աղբալեանի, Ֆրեստերիք Յ. Մուրուտի եւ Գառնիկ Ֆնտզլեանի, որոնք Միոնը յաջողեցան վերածել պատմա-բանասիրական թերթի մը, որովհետեւ Միոնի այս աշխատակիցները հմուտ բանասէրներ ըլլալու կողքին էին նաեւ հաւատքի մարդիկ, զինուած այդ օրերու ժամանակակից գիտութեամբ, բայց միշտ առյցուն Քրիստոնէական ոգիով:

1930-ական թուականներուն, ամբողջ եօթը տարիներ, Միոնի տիրական դէմքը դարձաւ Թորգոմ Պատրիարք Գուշակեան, որուն օրով Միոն կը զգենուր բոլորովին նոր ու բազմակողմանի նկարագիր, աւելի մտաւոր եւ կրօնական հանգամանք, որուն նպատակն էր այդ հունով պատրաստել Ս. Յակոբի ծառայողներու ապագայ սերունդները: Իսկ իր օ-

րերուն Միոնի գրական բաժինն այ կու գար ճոխանալ, յանձինս Յ. Օշականի, Վ. Վահեանի, Շ. Ռ. Պէրպէրեանի եւ Արսէն Երկաթի նման տիտանեան գրողներ կու գային կրօնական բոյրին հետ Միոնին տալու գրական համը, իսկ քիչ ետք ասոնց պիտի գար միանալ փաղանգր Հայաստանեան եւ ինչու չէ նաեւ Սփիւռքեան բանասեր-մտաւորականներու, յանձինս՝ Հ. Աճառեանի, Մեսրոպ Մագիստրոսի, Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի, Արշակ Ալպոյաճեանի եւ ուրիշներու, որոնք կու գային Միոնի ընծայելու նոր ու բաւականին բարձր վարկ մը եւ հմայք:

1940-ական թուականներուն, հակառակ՝ Բ. Համաշխարհային պատերազմին եւ ապա երկիցս վանական ներքին խնդիրներու, Միոն կարելի եղածին չափ ոչ միայն մնաց կանգուն, այլ Պատրիարքութեանս պաշտօնաթերթին իրենց մասնակցութիւնը կրցին բերել նաեւ՝ Վահան Թէքէեան, Ղեւոնդ Եպս. Դուրեան, Գարեգին Եպս. Տրապիզոնի, Մ. Տամատեան, Մ. Ս. Կիրճեան, Յակոբ Դպիր եւ այլ արտասահմանցի եւ տեղացի գրողներ: Հետեւաբար կու գանք մեր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնները յայտնել մեր պաշտօնաթերթի 90-ամեայ կեանքը պայծառացնող անցեալի եւ ներկայի բոլոր մտաւորականներուն եւ գրողներուն, անոնք՝ որոնք վերստեղծեցին եւ բարեյաջող կերպով անոր նաւը հասցուցին մինչեւ մեր օրերը, սակայն կու գանք յիշեցնելու թէ Միոն պիտի շարունակէ մնալ ու պահել իր կրօնական, գրական եւ բանասիրական հանգամանքը, միշտ յոյսն ու վստահութիւնը դնելով մերօրեայ հայրենի եւ Սփիւռքեան մտաւորականութեան վրայ: Ուրեմն մեծ ակնկալութիւններով մեր նոր օրերու մտաւորականներէն:

Ն. Ա. Մ.



ԱՅՐԻ ԿՆՈՁ ԼՈՒՄԱՆ

Երուսաղէմ: Գարնանամուտի մեղկ առաւօտ մըն էր, արեւը հագիւ սկսած էր լուսաւորել հորիզոնը, բայց եւ այնպէս դէպի Սրբութիւն Սրբոց՝ Սողոմոնի Տաճար առաջնորդող փոշոտ զառիվերը արդէն լեցուն էր երկսեռ ուխտաւորներով: Տաճարի զոհասեղանէն բարձրացող զոհերու ծուխը վարագուրած էր երկինքը, եւ արդէն անդամալոյծներ եւ հաշմանդամներ կարգի կը սպասէին օգտուելու Տիրոջ սեղանին բարիքներէն: Այդ աղօթողներու եւ ուխտաւորներու դանդաղ յառաջացող շարքին մէջ կային հարուստներ եւ ինչու չէ միաժամանակ աղքատներ, որոնք կու գային յօժարակամ իրենց Աստուծոյն՝ Եհովային ընծայաբերելու իրենց սիրտէն բղիսածը:

Հաւատացեալներու շարքը կ'անցնէր Տաճարի բակէն, ուր արդէն փերեզակներ, լումայափոխներ եւ ամէն կարգի վաճառողներ գրաւած էին իրենց տեղերը, պատրաստ առեւտուրի: Այդ բարեպաշտ հրեաները անցնելով բակէն, նախ վայրկեան մը կանգ կ'առնէին Տաճարի մուտքին, հիացումով ու յուզումով դիտելու Սողոմոն թագաւորի կառուցել տուած սրբավայրը, ու գլուխին ծածկելով կը մտնէին ներս: Ոմանք, կիներ առանձին շարքով, մինչ այր մարդիկ սպիտակ շալը ուսերնուն, բոպէ մը կանգ կ'առնէին, եւ ետ ու առաջ շարժելով կարճ աղօթք մը արտասանելէ ետք կը դիմէին դէպի մայր մուտքին երկու կողմերը գտնուող մետաղեայ գանձանակները: Այդ գոյգ գանձանակները ունէին փողի նմանող բերաններ, ուրկէ հաւատացեալներ կը նետէին իրենց նուէրները, եւ ուրկէ անդադար կը լսուէր նետուած գումարին արձագանքը:

Այցելուներէն ոմանք զետեղելէ ետք իրենց նուէրը գանձանակին մէջ դուրս կու գային Տաճարէն, մինչ ուրիշներ՝ մոռնալով հանգամանքը սրբավայրին, կը մնային իրենց տեղերը եւ կը սկսէին բարձրաձայն խօսակցութիւն մը իրենց բարեկամներուն եւ կամ ծանօթներուն հետ: Աղմուկը իվացուցիչ կ'ըլլար, որուն միւս կողմէն կու գար միանալ գանձանակ նետուած պղնձեայ կամ ոսկեայ դրամներուն ձայնը:

Անշուշտ սրահին մէջ, գանձանակներուն մօտ կանգնած էին երիտասարդ քահանաներ, որոնք հետաքրքիր, բազէի աչքերով կը դիտէին շարքը նուիրատուներուն: Երբ մօտեցողը ծանօթ, հարուստ քաղաքացի մը ըլլար, ան իր նուէրներուն առատութեամբ եւ գումարին մեծութեան համաձայն կ'արժանանար այդ պահակ քահանաներու շողոմ ժպիտին եւ գլխու թեթեւ խոնարհումով՝ ողջոյնին: Մեծահարուստներու առատ եւ յաճախակի նուիրատուութիւնները անկասկած կը տպաւորէին այդ նորելուկ կրօնականները: Ու անշուշտ զարմանալի պիտի չըլլար, որ անոնք նոյնիսկ ժամանակ չունենային նշմարելու, մանրակագմ, միջին տարիքի, համեստ զգեստներով Այրի կինը, հաւանաբար տէր՝ մի քանի փոքր երեխաներու, եւ որ տակաւին ամիսներ առաջ կորսնցուցած էր իր հիւանդ ամուսինը: Անշուշտ այդ երիտասարդ քահանաները երբեք ուշադրութիւն պիտի չդարձնէին այդ աղքատ ու անոք կնոջ տալիք նուէրին, որ բաղդատած հարուստներու նետած ոսկիին ու արծաթին՝ հաւասար էր ոչինչի:

Այդ օրը սակայն, այցելուներուն մէջ կար մէկը, որ արդէն տուած էր իր նուէրը, ու հիմա ընկերակիցներուն հետ անկիւն մը կանգնած կը դիտէր ոչ թէ մարդիկ ինչ կամ որքա՞ն դրամ կը նետէին գանձանակ, այլ աւելի ան կը դիտէր անոնց նուիրատուութեան ձեւը, ոմանք ամբարտաւան ու ցուցամոլ կերպով, մինչ ուրիշներ պարտականութիւն մը կատարածի զոհունակութեամբ: Ան կը տեսնէր ամէն ինչ, ու տեսաւ թէ ինչպէս Այրի կինը գլխիկոր մօտեցաւ գանձանակներէն մէկուն, եւ իր անգոյն ու մաշած դրամապանակէն հանեց մնաս մը, փոքրագոյն դրամը այդ օրերուն, եւ վախվխելով ու ամչնալով հոն դրաւ իր նուէրը, ապա անցաւ միւս գանձանակին ու հոն եւս զետեղեց մնաս մը, որովհետեւ Հրէական օրէնքի համաձայն կարելի չէր երկու մնասէ նուազ դնել Տաճարին գանձանակներուն մէջ այն խոր հաւատքով, որ եթէ գանձանակներէն մէկուն մէջ դրած իր նուէրը չհասներ տեղ, զոնէ միւսը

ծառայեր իր նպատակին...: Անշուշտ այդ անոթ ու Այրի կնոջ գանձանակ նետած դրամներուն ձայնը պիտի գար խեղդուելու հարուստներու տուած աւելի շոյալ ու ծանր դրամներու արձագանգէն: Անկասկած ոչ ոք պիտի նշմարէր այս, ի վերջոյ ի՞նչ տարբերութիւն կրնար ընել աղքատ կնոջ մը երկու մնասները:

Սակայն հոն գտնուող Աստուածորդւոյն ամենատես աչքերէն բան չէր խուսափեր: Ան գիտէր կարդալ մարդոց սիրտերն ու միտքերը, որուն համար ալ անտեսեց փառասէր եւ ցուցամոլ կեղծաւոր հարուստները: Ան այնքան տպաւորուած էր այդ Այրի կնոջ ըրածէն, որ անմիջապէս գայն առանձնացուց ամբոխէն, եւ յուզուած ըսաւ իր աշակերտներուն թէ այդ Այրի կնոջ նուէրը Աստուծոյ Տան համար շատ աւելի կարելոր էր քան միւս բոլորը, այսպէս կոչուած մեծահարուստներու եւ դիրքի տէր եղող մարդոց նուէրները, որովհետեւ անոնք տուած էին եւ կու տային իրենց աւելորդէն, մինչդեռ այս խեղճ կինը տուած էր «գոյի չափ», իր բոլոր ունեցածը, եւ հաւանաբար իր այդ արարքով այդ Այրի կինը տակաւին կը գրկէր իր զաւակները իրենց ամենօրեայ հացէն...: Յետոյ, այդ կինը թերեւս առաջին հերթին մասնաւոր գործ մը չունէր ապահովելու հասոյթ մը, որուն տասանորդը կարենար տալ Տաճարին: Եւ ամէն կասկածէ վեր էր, որ անոր տուած երկու մնասները իր ունեցածին տասանորդէն աւելի էր: Սակայն անոր զգացումը կը թելադրէր իրեն տալ ի՞նչ որ կրնար, բայց անպայման բան մը տալ, ու ան տուաւ առանց նայելու իր շրջապատին, ան տուաւ նայելով ո՛չ թէ Փարիսեցիներու, Սադուկեցիներու եւ Դալիթներու տուածին քանակին կամ ձեւին, այլ աւելի՛ թելադրուած իր սիրտէն:

Նաեւ, թերեւս այդ Այրի Կինը, երբ կ'ընէր իր նուիրատուութիւնը, իր մտքին մէջ ունէր ուրիշ բան մը, թէ իր նուիրուածութեամբ կ'ուզէր պարգապէս ցոյց տալ թէ ինք ներած էր Աստուծոյ իր ամուսնոյն կանխահաս մահուան համար: Հաւանաբար այս մէկը շատերու սրբապղծութիւն թուի, սակայն թող վայրկեանի մը համար գործածենք մեր սիրտերը, փոխան մեր ուղեղներուն հասկնալու այս նոր այրիացած եւ սիրտը դառնութեամբ լեցուն կնոջ: 11րդ դարէն եկած պատմութիւն մը կ'ըսէ, թէ ինչպէս երբ Մոնկոլ ոյժեր գրաւելէ ետք հայկական քաղաք մը, քարոսքանդ կ'ընեն գայն ու կը սպաննեն քաղաքին բնակչութեան մեծ մասը: Սակայն Մոնկոլ հրամանատարը կը նկատէ, որ վերապրողները հաւաքուելով իրենց քարոսքանդ եղած եկեղեցիներու աւերակներուն վրայ կ'աղօթեն: Երբ ան հարց կու տայ հայու մը թէ ի՞նչ կ'ընէին, հայը կը պատասխանէ. «Կ'ուզենք ցոյց տալ Աստուծոյ թէ մենք ներած ենք իրեն»:

Թերեւս ասոր հետ այդ Այրի Կինը նաեւ կ'ըսէր. «Կը վստահիմ Աստուծոյ»: Այդ օրերուն աղքատ այրի կիներ խոցելի էին, եթէ մանաւանդ իրենց ամուսինները իրենց չէին թողած որոշ գումար մը կամ կալուածներ, որոնցմով կարենային հոգալ իրենց ընտանիքին կարիքները: Աստուածորդին յստակօրէն հասկցուց իր աշակերտներուն այդ Այրի կնոջ դրութիւնը, աւելցնելով թէ ան տուած էր իր ամբողջ ունեցածը, բոլորովին ապաւինելով Աստուծոյ ամենառատ գութին իր ամենօրեայ կարիքներուն համար: Ան կը ներէր Աստուծոյ՝ միաժամանակ ապաւինելով Անոր, սակայն ասոնց կարգին ան ցոյց կու տար թէ կը հաւատար Աստուծոյ գործին, եւ իր չնչին նուէրով նեցուկ կը կանգնէր ու մասնակից կը դառնար Տաճարին ընթացիկ նորոգութեանց եւ գործին: Ամէն կասկածէ վեր էր, որ Այրի Կինը սիրով եւ հաճոյքով դրաւ իր լուսնի գանձանակին մէջ, որովհետեւ ան ունէր այն հաճելի զգացումը, որ ինք այլեւս մաս կը կազմէր ինքն իրմէ վեր բանի մը:

Անկասկած պատճառ մը կար, որ այդ կինը իր երկու մնասները տուաւ Աստուծոյ գործին՝ քան թէ իր եւ իր զաւակներուն: Թերեւս ան կարելոր գաղտնիք մը գտած էր: Թերեւս Տաճարի գանձանակը նետուած դրամը կարելոր դեր մը կը խաղար իր վիշտի ապաքինման: Ան այդպէսով յաղթահարած էր իր սրտի կսկիծը, որովհետեւ հաւատացած ու վստահած էր Աստուծոյ: Ան այլեւս վստահ գիտէր թէ կար Մէկը, որ կը դիտէր զինք, որուն համար ալ ան երբեք տեղի չտուաւ ու շարունակեց վստահիլ եւ հաւատալ: Դոյնձեայ այդ երկու մնասները,

գորս ան դրաւ զանճանակ, աշխարհի վրայ իր ԱՄԲՈՂՁ ունեցածն էր, եւ տակաւին ան մեծ սիրով ու պատրաստակամութեամբ կը վերադարձնէր զանոնք Աստուծոյ, վստահ՝ որ անոնք եկած էին իրմէ: Ան անդրադարձած էր այն իրականութեան, որ աւելցուքէն, խեղերանքներէն տրուածը կարելի չէր նկատել, այսպէս ըսած՝ սիրոյ նուէր մը, հետեւաբար չէր կրնար ընդունելի ըլլալ Աստուծոյ կողմէ, նման Կայէնի նուէրին, ասոր համար իսկ ան տուաւ ինչ որ ունէր, իր ամբողջ ունեցածը: Այս է իրաւ հաւատքը: Եւ զարմանալի չէր, որ Քրիստոս զովեց այդ անոք, Այրի կինը:

Աստուածորդին՝ Մարկոս Աւետարանիչի բերնով կու գայ մեզի ըսելու, «Մի՛ յուսահատիք, Հայր Աստուծոյ աչքը ձեր վրայ է: Ան ձեզ չէ մոռցած եւ երբեք ձեզ ջանճնէր կեանքի յորճանուտներուն, այնքան ատեն, որ մենք կը վստահինք Իրեն:

Ն. Ա. Մ.

PATRIARCH YEGHISHE DERDERIAN'S VIEWS ON THE ARMENIAN PEOPLE AND THE ARMENIAN CHURCH

Written By
Patriarch Yeghishe Derderian

Transl. by: Fr. Krikor Maksoudian

Few nations have persistently and continually struggled for survival as the Armenian nation. And if on the external front that struggle has not always been crowned with success, it has left a profoundly heartfelt mark inwardly [on our people] and has, over the course of many centuries, gloriously adorned our history with art[istic creativity], spirit and beauty.

All the powerful states of the past have been destroyed and shattered to pieces on the highway of history: first, because of the onslaught of powerful external forces that they could not endure; and, second, because they had internally--that is morally--fallen apart and were already wasted. The moral aspect, however, has been our strong point thanks to our profound Christian faith and our impregnable yearning, as well as our right, to be at peace with ourselves.

It is not only in recent times that we have given victims on our way: namely, apostates, traitors, those wishing to save their skin, those running after distant and drifting glory—people whose disgraceful processions have forever relinquished the fullness of our nation and the glory of our Church to seek in other folds tranquility, profit and protection that they covet at the price of, and in spite of, their nation[al identity] and their past.

Based on these spiritual realities, we believe that the Armenian Church is the ultimate place where an Armenian would feel himself at home with another Armenian more so than anywhere else. The Armenian Church, at all times and at all odds, is the spiritual and even physical institution where the Armenian soul can be sheltered from exterior influences; it is a stage where the Armenian public can connect with the real dream of its people.

Though in essence a religious institution, within her own [fold] the Armenian Church has always held her national character in a predominant position. This means that religion and community life [among the Armenians] are identical. In our national history this stands out as a beautiful and heartening spectacle, and indicates that in the private sphere the church does not have a detaching impact on the children of the Armenian people but stands out as a true bond unifying religious faith

and public life as a single social unit.

Despite the unrest caused by political circumstances, the conversion of the Armenian people to Christianity and the application of Christian values to daily life stand out as a tangible reality that persists in a singular and unique manner throughout our history.

A century had hardly elapsed in the life of our people since that first day when—enlightened by Christianity our national instincts were molded into a national identity—political storms more than once rattled our existence from its roots. But thanks to our powerful inherent spiritual vigor we always succeeded in gathering the broken fragments and remained faithful to our own values, refusing to give them up for foreign influences that would detach us [from our past].

For us the term “National Church” is not a religious attribute that is opposed to the Church of Christ.

If the Church is a regulated form of spiritual life here on earth, our Church is called “National” not in order to suggest a theological concept but a historical fact, within whose context our nation became the instrument and Christianity her moving force.

We are proud of our Church, the greatest creation of the Armenian people. Designed, molded, nourished and developed through centuries of historic and political circumstances, the Armenian Church has toiled and suffered martyrdom in order to preserve intact the spiritual profile of her people and the legacy inherited from the Gospel.

The Church, which is founded on divine and universal principles, must keep away from all ideas that in any way or form embrace political and partisan ways of thinking. Notwithstanding this, the term [ARMENIAN Church] is as dear to us as a religious designation, which we have wished to see woven into the fabric of our religious life through a kind of a national instinct.

This phenomenon, as conjectured, predates that period in our history when the primitive Church lost her unity, as the Western and Eastern Churches had the understandable urge to describe the nature of their [institutional] image with specific titles.

The Latin West preferred to call itself “Catholic” (universal) while the Greek East adopted [the term] “Orthodox,” the first in consideration of the extensiveness of the Roman Empire and the second, because of its pretention of being the only one that possessed the truth in regard to doctrinal and dogmatic matters.

As for the Syriac, Egyptian and other ancient but smaller churches, they were gradually confined under the mere banner of their ethnic names, since despite the important and illustrious role that they had in many ways played in the earlier period of church history, awareness among them of their past faded away, and because of unfortunate political circumstances they lost their language, the most distinctive sign of national awareness, and could not see their identity bloom into a profusely blazing national ideal.

Finally, churches that came into being as a result of the great Reformation movement were born from negative reactions against an establishment that professed to be universal. They are all recognized by a general designation, namely Protestant, a description that is simply a reminder of their historic origin.

The name of our Church was formulated over the course of time and in a way that brings to mind the circumstances of the emergence of the above churches, now those of one and now of the other; but more precisely, a combination of all their circumstances put together. As a place name (“Church of Armenia”) or a national name (“Armenian Church”) Armenian could be a descriptive title for our Church, but from the perspective of our national sentiments and historical awareness it would be more correct if we apply to it the term National. This word expresses with greater precision and more implicitly what the other four titles, either individually or all together, would specify. This is because the Armenian Church is a living organism that can—through her spirit, aspiration and character—symbolize, more than any other institution, what has been and still is the most national trait in the life of the Armenian people.

A national role-model, a national character and traditions, national language and literature, intellectual and moral impact on national life, a national psyche and national art -all of these served as incentives responsible for the emergence of feelings and inspirations that molded in the Armenian soul the mystery of the Gospel and the spirit of Christianity, at first with the creation of a hierarchical institution intended to be the receptacle and guardian of the sublime faith in the divine truth in order to acquire in return [from that institution] an instantaneous reassurance for the protection of their existence and their preservation.

For many centuries, in our [national] life religious feelings and the concept of nationhood have stood out as twin forces, intertwined since the first century of the Christian era and reinforcing each other. This shows that the [Armenian] Church from very early times was the place where the vision of faith and the ideal of a homeland/nationhood merged, and from the very first ... one was inspired and complemented by the other.

An uplifting image symbolizing the principle and spirit of indivisibility of Nation and Church is furthermore such a reality that the Church among us is one and the same as the people. Even in the ecclesiastical realm there is no sharp dichotomy between clergy and laity, a situation generally present in other nations [and churches].

For example, while in the Church of Rome the clergyman is an officer dedicated to the propagation of faith, and in the Greek Church to preaching and officiating sacred rituals, the Armenian priest, either in contrast or in addition to the above two functions, is at the same time an educator, leader, father and a brother to his people.

One, Holy, Universal and Apostolic - these are the true attributes of Christ’s Church in theological context. From a theological perspective, the Armenian Church, because of her ancient claim on orthodoxy, holds the right to be always recognized by these titles, since it was founded by apostolic evangelization and is based on the unity, holiness and universality of the Christian faith that Christ’s Church had in the first centuries of Christianity. But the name that reflects her historic identity should be Church of Armenia, Armenian Church or Armenian National Orthodox Church.

Besides her role both in the Christian Church in general and in Armenian life, the Armenian Church has played two other major roles, cultural and political. These two roles have been forged over [a long] time, beginning with the days when Christianity was first introduced into Armenia. But the greatest virtue of the Armenian Church lies in its originality and in the fact that it has served as an anchor for our national survival, as a bulwark with standing all internal and external assaults at the price of her blood. In the gloomy days of yesterday the Church also became the birthplace of our

soul. Though we were frequently deprived of state and government institutions, we came to possess a solid establishment that unified our blood, language, history, religion and traditions; as stated, it became the birthplace of our soul.

For people living a civilized life there is, besides a tangible homeland, such a thing as the birthplace of the soul, namely a people's cultural heritage and her bygone civilization. The birthplace of the Armenian soul is the Church, because in the consciousness of the Armenian people civilization began with Christianity and Armenian art flourished thanks to Christianity. This was especially true when, because of difficult circumstances during our captivity, we were denied, both on foreign soil and specifically in a homeland that was no longer ours, the blessings of a real homeland. The Armenian Church, the birthplace of our soul, took its place. The Church has embraced us to her bosom like the Ark of the Covenant or a religious ideal, stimulating our community life and acting as its protector.

A captive people without a homeland can survive, if it has a religious ideal. It has been observed, and is worthy of notice, that our political setup, both in her fortunate and less fortunate days, was always inseparable from the religious authority. The Patriarchal See of the Armenian Church, the most heartening symbol of the Armenian Church, moved to wherever the state capital was located. This phenomenon cannot be explained only by administrative expediency. The real reason for it must be sought in the religious and ideological spirit rooted in the character of our people ever since the beginning. It became a more prevailing drive in her soul during the Christian era.

Our literature was religious not only at the time of its inception but also for the most part throughout her long history; it is as if were a kind of "Discourse with God." Our national and social life, enlightened with Christian awareness, the pursuit of righteousness and liberty, became interminably our national and religious identity through centuries of anguish. The Church always remained as the major agent that cultivated its development. For the most part, we owe to the Armenian clergy all of the following: literature, national life and the Church that made our heart focus on the religious ideal blooming in our soul.

The idea that desertion from the National Church always opens before us the gates of [national] degeneration is neither a fable nor a myth. This sad reality has been well established from A.D. fifth century on and even now. Those who have more or less studied our history know that first the Byzantine and then Roman [Catholic] fanaticism snatched from the bosom of the National Church many myriads of Armenians, engulfing and burying them forever in the abyss of degeneration.

The national work that the Armenian Church did in the past, and is doing now, is the mandate of her soul. On the other hand, the Armenians who leave the Armenian Church receive their inspiration and direction from a different ethos, and, despite what one may wish to say, that ethos looks with distrust at ours.

We obviously cannot deny there is Armenian blood and soul in these people; but we wish to point out only one fact, that is, the lukewarm national spirit [in them], which, we believe, is the result of the de-nationalizing Roman [Catholic] spirit, confronting which has always been a priority in our healthy awareness.

All knowledgeable Armenians know that the identity of the Armenian people and the truth stay pure in their Church, the institution that our forefathers built stone by stone right through the eternal and the evanescent.

If our Church and our public are one and the same, and if the Armenian Church is the only guardian and protector of our identity, these are [consequences that] had not been the Church's goal; they are only side lines resulting from the circumstances of her activities and occasionally because of the lack of a more proper national institution that could not be maintained due to political calamities. This matter indicates neither denial nor negligence of the real mission of the Church, which is very religious.

Again, The Armenian Church is the place where Armenian people's most noble traits, spiritual values and wonderful capabilities to build converge. In short, through her genius our Church has fulfilled her mission many times and rescued her ship from so many dangers. Her sound reasoning, her wisdom to adapt herself to circumstances, her beautiful graciousness for not losing sight of herself have been qualities that have equipped our people with tools to create her history under the magnificent structure of her Church and reach our own times.

The Armenian Church has for centuries been our mother and tutor and still remains to be so especially in these times. Leaving her and becoming estranged from her is the very denial of our history, our ethos, our nationality and finally all the things that constitute the expression of an Armenian identity. Nationality is ethos. Our national ethos can flourish only in our Church.

It is indeed true that Christianity by and large has a universal nature, but she is not opposed to the existence of different nationalities living under her protection. Moreover, she supports them to preserve their distinctive existence. Especially as a religion of enlightenment of the soul and conscience, Christianity has always encouraged and cultivated among [different] nations affiliated with it intellectual and social aspirations for liberty, providing all of them the opportunity to have their own alphabet and literature. From this perspective the continuity of contemporaneous development of literary and national traditions such as those of the Armenians, Georgians, Caucasian Albanians, and Slavic tribes is a historical fact in the East.

The same can also be stated about many present-day Western nations, among whom one cannot disregard a simultaneous development in literature and a distinctive national/political way of life.

Christianity has preserved the Armenian people, who holds on to her faith not only with religious fervor, but also with apolitical instinct, finding in it an energy that corresponds to her national instinct of self-preservation and her ethos. The Armenian Church is the quintessence of the union of this religious fervor and political instinct.

As for the concept of a national church, it is, as we said, nothing more than a nation's awareness that the Church has preserved or salvaged her identity. We call the Armenian Church, our Holy and Apostolic Church, NATIONAL, as it truly is. We do not assign to the word "national" a theological significance, since that word is not one of the four attributes of the church; [the use of the word] is confined to a historical understanding.

The Armenian people, namely the Armenian people's national instinct for self-preservation, molded the Armenian Church only with the spirit of the spiritual and moral freedom that is in the Gospel. In that sacred undertaking, if the nation was the agent or, more precisely, the instrument, Christianity was its source of power.

Three centuries before the time of St. Gregory the Illuminator, Christianity spread in Armenia and

was established thanks to missionary evangelization. This is a fact that has been demonstrated beyond any doubt. Yet, it is also true and accurate [to say] that the faith of the Gospel began as an organized entity, as a separate hierarchy and as the Armenian Church from the time of St. Gregory the Illuminator, since Gregory was the very person who organized and sealed it as it is known to us.

The nature of St. Gregory the Illuminator's vision itself reveals that from the day of her inception the Armenian Church was conceived in the mind of its architect as a national Church, that is to say, a religious institution whose mission would also include the security and safety of a politically imperiled nation reinforced by moral and spiritual salvation.

This principle was step by step--but always with an accumulated yield--put into effect during the times of St. Gregory and his family members, who succeeded him[as chief-bishops of Armenia] over the ensuing two centuries: first, at the time of [Gregory's elder son] St. Vrtanes, when brave warriors martyred for their Christian faith and their people were canonized at his order; then, at the time of [Gregory's great-grandson] St. Nerses, when the Church authorities selflessly embarked on the colossal task of reinforcing the nation's morality by establishing benevolent institutions; and finally, in the days of Sts. Sahag and Mesrob, with the miraculous advent of the Golden Age of national revival thanks to the invention of the Armenian alphabet and the creation and development of Armenian literature.

All of this--that is, all the hard work and effort to achieve a national ideal from the time of the Illuminator's vision to that of Sahag --were carried out in Vagharshabad, the last capital of the [ruling Armenian] Arsacid dynasty, which had now, through a celestial regulation, become the capital of the [ecclesiastical] hierarchy of the nation and thereby a spiritual womb for the revival of the entire Armenian people.

In so far as Armenian sentiments are concerned throughout Armenian history Etchmiadzin has always been held in high esteem from the very first, and has become increasingly more appealing. It is not at all a tale nor a myth that this splendid name holds a profound meaning; at the very least it represents the vision experienced by a great illustrious heart where in the great soul of the nation dwelled and palpitated intensely on one occasion. The point in time when that vision was conceived happened to be one of the most important psychological moments for a nation with a deep and inflexible faith in her future.

In the imagination of our people, the lantern [symbolizing] the nation's hope, whose flame is replenished by the Saint's [Illuminator's] tears—symbolizing the grief of the nation—remains extinguishable on the summit of Mt. Arakadz. And Holy Etchmiadzin, frequently like a mother in grief who loves her children, always speaks to her children, to the Armenian people scattered all over the world, [touching them] with the sweetness of past memories, with the sanctity of her traditions, with the radiant anointment of her Chrism, by means of the sacred letters of her encyclicals, through her pontifical legates promoting the homeland, with the distribution of her blessings and with all of her heartwarming affection.

The Sahag-Mesrob movement is nothing other than a national movement created to oppose degenerative and anti-Armenian sentiments. The invention of the Armenian alphabet was the fruition of that struggle and its chief tool.

What was in Sahag's and Mesrob's undertaking that provided the Armenians with a personal and national identity, a spiritual fulfillment and character? It was something that was absent in the previous centuries; it was the Holy Scriptures in Armenian, Armenian literature and Armenian

Ritual—the core of the new national and religious movement.

Those afflicted with ailments of mind, palate and stomach who see poison in the union of religion and nation will never be able to understand and appreciate the Fifth Century [in Armenia], the Golden Age that nationalized our Church and made it Armenian. If the slogan of previous centuries was to convert the Armenians to Christianity, that of the fifth century was to make Christianity Armenian. The spiritual and national triumph of the fifth century was therefore the mandate of the resistant vigor of the Armenian people and of her impregnable dream to be self-sufficient. It was especially the triumph of a national Christianity [forged] for the purpose of driving away Syriac and Greek influences and of raising a barricade against Persian intrigue inside [the country]. Whatever was Armenian was appreciated, acceptable and appealing. The loss of independence, like the condition of an ailing person who seeks healing, frequently gives birth to such a great passion of patriotism.

The translation of the Holy Scriptures to Armenian gave birth to the Armenian Ritual, and ritual is of course the implacable enemy of alienation. It is the attainment of a “We” that is cast as one body, one heart and one mind—a distinct national entity. This new tool—the triumphant awareness of Armenian-ness—eliminated Syriac and Greek influences; it would henceforth have the knowhow and the capability of standing tall against outsiders, be it Persian, Greek or Roman, when the occasion occurred.

By introducing letters as opposed to foreign scripts, the Bible[in Armenian] as opposed to Bibles [in foreign languages], [the Armenian] ritual as opposed to rituals [in foreign languages], Sahag and Mesrob created the Armenian “We,” by means of which they molded our Church, the National Church.

If there is an indisputable reality in the life of the Armenian people, it is her frequent outburst to find spiritual independence. The Golden Age is symbolic of that extraordinary effort of the Armenian people to shake off the yoke of the foreign mind and to generate her own spiritual independence. The demand of this historic yearning showed that Armenian identity had a dynamism that could integrate and synthesize ideas; and that it was not a weak entity that disintegrated under the influence of foreign ideas.

As for the broad-minded stance of our Church—which ... [some] would consider as evading the truth—it stands out as the glorious accomplishment of the Armenian ecclesiastical mind and as the victory of its spirit. This is one of the traits of our national character. First, the Armenian Church is open-minded towards other churches—an open-mindedness that is conservative rather than unrestrained, whose shining and imposing representative is St. Nerses Shnorhali [the Grace-filled]. Second, any institution that does not keep pace with the times and within the limits of the truth loses a great deal of its special attributes. Christianity has always reconciled itself with sound knowledge that existed before it and with intellectual movements that surfaced afterwards. She frequently embraced and fused elements in them that were essential, correct and healthy, dismissing innovative trends that were alien, and she remained the only victor on the scene. Christianity owes her power and triumph to this capability.

From this perspective, the Armenian Church is perhaps the only one in the entire Christian world that, despite the onrushing calamities and unfortunate situations rising before her, has not only set aside woes brought on by the times, but has also been progressive and flexible in paying equal trib-

ute to the times and to the truth. Our forefathers did what was necessary to reconcile the times with the truth for the purpose of forging a comprehensive world view. The one who is an enemy of Christ's Church and disloyal to it is he who has no need for rebirth and wishes to sit idle on its past heritage, thus preventing the growth and progress of the human soul and mind. Behold, flexibility of this kind is another aspect of Armenian Church's liberalism.

All the faithful and brave leaders of the Armenian Church have always held the conviction that whatever is profoundly holy and sacred, whatever is rational and divine that can stimulate truthful and healthy minds, and whatever ennobles a human being is everlasting. Neither science would contest it nor civilization trample it under foot; not even godless fanaticism would walk over it. The Armenian Church with all of her own faithful children knows that she has found the "hidden treasure" (Col 2:3) and has chosen "the best part" (Luke 10:42) that has hitherto preserved her and will preserve her forever.

We are proud of not only our national Church but also of the open-mindedness of our Church—the greatest creation of our people that has, during the course of centuries, acquired form and shape under historic and political circumstances, toiled and suffered martyrdom in order to shield the spiritual identity[of her people] and the heritage received from the Gospel.

AN APPEAL TO OUR OWN

Children of the Armenian Church,

Bear in mind that your Mother Church is the conscience of [our] nation. Her walls have been reinforced and cemented with the blood of her children. The lamp of her faith is always replenished with her tears.

Bear in mind that the Armenian Church is the sanctuary where Armenian life was taught [to seek] goodness and perfection. She is the treasure house where the graces of our soul and mind were and are still preserved. And, above all, she is the ark of salvation withstanding the bloody tides of our history.

Never exchange her for anything else of value; Her, whose architect was the Illuminator, whose chief sacristan was St. Mesrob, whose diligent attendant was St. Sahag, whose prayerful priest was St. Gregory of Nareg and whose melodious poet was St. Nerses the Grace-filled!

Do not look at her present modest state. After running into many adversities, she did not fall apart. She did witness many storms, but always beamed her light on those holding on to her and extended [over them] her protection, which is perhaps not an arm equipped with worldly power but one that has always been a source of spiritual consolation and faith supporting her physically tortured and subjugated children. Looking at her present state of weakness do not think that she has ceased from carrying out her compassionate role. Do not look at her ragged cloths. She was once a queen clad in purple who covered her children's wounds with the shreds of her robe.

Love your Mother Church, cleanse yourselves in it and search your spiritual refreshment in the treasures of her greatness, and if needed, be ready to tear your close and with the best pieces cover and adorn the Mother of the entire Armenian people.

Do not cause grief to your Mother, and do not become estranged children of the Armenian Church.

Those who forsake the Mother Church, giving in to newly formed marriage ties or responding to a misinterpreted religious emotion or personal gain, are first of all betraying their blood ties, their forefathers, their calling and their nation.

You can rest assured that those Armenians who leave the Armenian Church receive inspiration and guidance from another spiritual source that looks askance at ours. All those who snatch naive and willing children from the bosom of the [Armenian] nation by means of proselytizing snares in order to lead them to degeneration are traitors. Let them be aware that they will summon Armenian people's centuries-old protest in regard to blood and faith and, more so, they will invite upon themselves the forewarning of a bloody curse.

Furthermore, all those children of our Church who, driven by sad vengeful and meaningless family motivations, either directly or indirectly, willingly or unwillingly support this physical, religious and national tradeoff and destruction of our people are traitors before our history, as well as our present and future existence.

Armenians,

Beware of not only all kinds of fleece-clad wolves and venerable monsters, but also those who, despite their concern for personal motives and their anxious expectation for far-fetched hopes, are either willingly or unwillingly striking the axe at [the roots of] our Church's physical, national and religious being.

The latter amaze us because they lack the most reassuring trait in the character of our race, namely, the healthy instinct for self-defense. In this state, they get the courage to add yet a new wound to the much pierced heart of our people.



**ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՈՐՊԷՍ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ**

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼԵԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

1375 թ. Կիլիկիայի հայոց թագաւորութեան անկումից յետոյ, այնուհանդերձ, հայկական մի շարք լեռնային մանր իշխանութիւնների յաջողվեց պահպանել իրենց կիսանկախ գոյութիւնը ողջ միջնադարի ընթացքում:

Արեւելեան Հայաստանում նման ինքնավար իշխանութիւններ պահպանուել էին Միւնիքում և Արցախում: Վերջինիս մասին տակաւին 1307 թ. Հերթում Պատմիչը գրել է, որ երբ թաթար-մոնղոլները «կալան գմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափխազաց՝ որ ի Վիրս, և բաց ի գաւառէ անտի թագաւորութեան Հայոց, որ ռամկօրէն կոչի Հալօյէն (Արցախ – Ա. Մ.): Այս երկու նահանգք գղէմ կալան Սարակինոսաց, և ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա»¹:

Հայկական կիսանկախ իշխանութիւններից առաւել հզօրը Արցախի մելիքութիւններն էին, որոնց ինքնիշխան տիրակալները՝ մելիքները, մի քանի դար շարունակ հանդիսացել են հայոց ազատագրական պայքարի դրօշակակիրներ: Ամբողջ միջնադարի ընթացքում իր աշխարհագրական նպաստաւոր դիրքի շնորհիւ Արցախը կարողացել էր դիմակայել օտար ներխուժողների ատերաժութիւններին և հիմնականում պահպանել իր քաղաքական ինքնուրոյնութիւնը: Արցախում մելիքները թէւ ընդունել էին նուաճողների գերիշխանութիւնը, բայց ներքին կառավարման հարցերում, այսինքն՝ հարկահաւաքման, դատավարութեան և այլն, ունէին գործելու լիակատար ինքնուրոյնութիւն: Նրանք ունէին նաեւ զօրք պահելու իրաւունք: Վերոնշեալ նահանգներում մելիքական իրաւունքը թէւ հաստատուում էր Իրանի շահի հրովարտակով, սակայն այն, ըստ էութեան, ուներ ժառանգական բնոյթ: Այդ հանգամանքը նպաստում էր մելիքական տների զօրացմանը:

Թէւ XVI–XVIII դդ. Արեւելեան Հայաստանում կային բազմաթիւ մելիքութիւններ, սակայն այդ իշխանութիւններից առաւել անուանի էին Արցախի հինգ՝ **Գիւլիստանի, Ջրաբերդի, Խաչէնի, Վարանդայի և Դիզակի** մելիքութիւնները, որոնց էլ վիճակուած էր մեծ դեր խաղալ ուշ միջնադարի Հայոց պատմութեան մէջ: Արցախի մելիքութիւնների սահմաններն էին.

1. **Գիւլիստան**, որը սկսւում էր Կուրակ (Քիւրակ) գետից, Գանձակի սահմաններով և տարածւում մինչև Թարթառ գետը: XVII դ. սկզբից Գիւլիստանի տիրակալները **Մելիք-Քեզլարեաններն** էին, որոնց նստավայրերն էին Գիւլիստանի բերդը, և Թալիշ գիւղի մօտ, Հոռեկա վանքի դիմաց գտնուող ապարանքը:

2. **Ջրաբերդ**, որը սկսւում էր Թարթառ գետից և տարածւում մինչև Խաչէն գետը: Գաւառն իր անուանումը ստացել է մելիքանիստ ամրոց Ջրաբերդի անունից: Գաւառի տիրակալներն էին **Մելիք-Իսրայէլեանները**, որոնց նստավայրերն էին նաեւ Հին Մոխրաթաղի ապարանքը և Մայրաքաղաք (Քաղաքաստեղ) բերդավանը:

3. **Խաչէն**, որը սկսւում էր Խաչէնագետից և տարածւում մինչև Կարկառ գետը: Խաչէն գաւառի տիրակալները Առանշահիկ հնագոյն իշխանական տոհմից սերուած **Հասան-Չալալեաններն** էին: Հասան-Չալալեանների իշխանանիստ ամրոցներն էին Թարխա-նաբերդը (Խոխանաբերդ) և Կաչաղակաբերդը:

4. **Վարանդա**, որը սկսւում էր Կարկառ գետից և տարածւում մինչև Բիրս-Դիզակիայտ լեռնագօտին: XVII դ. սկզբից Վարանդա գաւառի տիրակալներն էին **Մելիք-Ճահնագարեանները**, որոնց իշխանանիստը Աւետարանոց (Չանախչի) բերդաւանն էր:

5. **Դիզակ**, որը սկսւում էր Դիզակիայտի լեռնային գօտուց և Իշխանագետից ու

տարածում մինչև Արաքս գետը՝ Խուդափերինի կամրջի մօտ: XVIII դ. սկզբից Դիզակ գաւառի իշխողներն էին **Մելիք-Եզանեանները (Մելիք-Աւանեաններ)**, որոնց ամրոցը գտնւում էր Տող աւանում:

«Արցախը տեղագրական, լեռնագրական և բնական տեսակետներով մի աշխարհագրական ամբողջութիւն է կազմում,– իրաւացիօրէն նկատել է Լէօն,– որն ամբողջական կերպարանք է տալիս այդ երկրի կեանքին: Այսպիսով, թէև Արցախը բաժանուած էր մի շարք մանր լեռնագաւառների, սակայն, ընդհանուր առմամբ, ներկայացնում էր մի խիստ բնորոշ, ընդգծուած ամբողջութիւն՝ տնտեսական, ազգագրական և լեզուական տեսանկիւնից»²:

Հայկական ինքնավար այս իշխանութիւնները XVII դ. վերջերից փորձել են թօթափել պարսկական լուծը, իսկ 1724–1735 թթ. մարտնչել են Անդրկովկաս ներխուժած օսմանեան զօրքերի դէմ, ինքնաբերաբար դաշնակցելով Իրանին: Այդ թուականներին տարածաշրջանում ստեղծուած իրավիճակը լուսագոյնս ներկայացրել են Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանն ու Արցախի մելիքները՝ 1723 թ. Նոյեմբերի 1-ին Պետրոս I-ին յղած նամակում. «Թագաւորն Պարսից յոյժ նուագեցաւ, և ոչ իսկ երեւի, և իշխանութիւն օսմանցոյն տակաւին առ մեզ ոչ է հասեալ»³: Եւ հէնց կենտրոնական իշխանութեան բացակայութեան այդ պայմաններում է, որ Հայոց Սղնախները, որպէս ռազմաքաղաքական միաւորումներ, իրականացրել են իրենց երկրամասի կառավարումը և անվտանգութեան ապահովումը: Սղնախները գործել են հրամանատարների խորհրդի գլխաւորութեամբ: Իր ազատութիւնը պաշտպանելու նպատակով լեռնաշխարհի հայութիւնը դիմել է կենաց և մահու պայքարի: Հայ զինուորականութիւնը Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանի, Աւան և Թարխան իւզբաշիների գլխաւորութեամբ տեւականօրէն դիմադրել է օսմանեան կանոնաւոր բանակին:

Գնահատելով թուրքերի դէմ մղուած պայքարում հայերի բազմաթիւ ծառայութիւնները՝ Իրանի Նադիր շահը 1736 թ. ճանաչել է Արցախի մելիքների ինքնիշխանութիւնը և վերահաստատել նրանց դաշնային ինքնավարութիւնը՝ Իսամայի **մելիքութիւններ** (պարսկերէն՝ «Մահալ-է խամսէ») անունով: Իսկ Դիզակ գաւառի տիրակալ Մելիք-Եզանը նշանակուել է Իսամայի մելիքութիւնների ընդհանուր կառավարիչ: Նա ուղղակիօրէն ենթարկուում էր Նադիր շահի եղբայր Իբրահիմ խանին, որը նստում էր Ատրպատականի Թաւրիզ քաղաքում: Այդ մասին Մելիք-Եզանը իր ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրութեան մէջ գրում է. «Շահ Նադիր զօրեղ թագաւորը իր զօրքով եկաւ, երկիրը օսմանլուի ձեռքից առաւ: Նրան էլ այնքան ծառայութիւն մատուցեցի, որ նա քրիստոնէայ ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Իսաչէնի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրայ, ինձ որպէս խան և բէկլարբէկի կարգեց»⁴: Մելիք-Եզանի մօտ էին հաւաքուում Արցախի հինգ մելիքութիւնների հարկերը և նրա միջոցով յանձնուում շահական գանձարանին: Այսպիսով, Անդրկովկասում Զարթի-Կախեթի վրացական վալիութեան կողքին, առաջին անգամ ստեղծուում էր նաեւ «Մահալ-է խամսէ» անուանուող հայկական առանձին բէկլարբէկութիւն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արաքսի ափը ձգուող յարակից տարածքները: **Հայ իրականութեան մէջ Արցախի մելիքութիւնները մնացել էին այն միակ ոյժը, որոնց հենքի վրայ հնարաւորութեան դէպքում կարող էր վերստին յառնել Հայոց պետականութիւնը:** Պատահական չէ, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «Հայոց թագաւորաց ազնիւ զինուորաց մնացեալ ժառանգք»⁵:

1752 թ. Վարանդայի տիրահռչակ Մելիք-Շահնազար Բ-ի թողուութեամբ Արցախում հաստատուեց քոչուր Ջեւանշիր ցեղի սարքջալլու ճիւղի ցեղապետ Փանահ խանը: Իսամայի մելիքները ստիպուած էին նոր մարտահրաւերների դիմակայելու Արցախում Փանահ խանի յայտնուելուց յետոյ: Հէնց Փանահի ժամանակներից սկսուեց այլացեղ և **այլակրօն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ:** «Ղարաբաղի նորահաստատ խանութեան համար կարելուք քաղաքական հարց էր մահնեղական ազգաբնակչութիւն

կազմելը երկրի այն կողմերում, ուր չկար այնպիսի տարր, որը պիտի խանական իշխանության նեցուկը դառնար: Փանահ խանը, դաւանանութեամբ սողոսկելով զուտ հայաբնակ Խամասայի երկրի սիրտը, շուտ զգաց, որ Շուշու ժայռերը դեռ բաւարար հիմք չեն տիրապետութիւն հաստատելու համար, – իրաւացիօրէն գրում է Լեօն, – և նա շտապեց թուրք թափառական ցեղեր գրաւել դրսից՝ հարեւան խանութիւններից, խոստանալով նրանց զանազան արտօնութիւններ: Այսպիսով, Վրաստանից և այլ տեղերից Ղարաբաղ փոխադրուեցին փիւսեան, կարաչարլի, ջինլի, դեմիրչի-հասանլու, դըզըլ-հաջիլի, սաֆի-քիւրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենգերլու և այլ շատ թափառական ցեղեր: Հօր օրինակին հետեւելով, Իբրահիմ խանն էլ ամէն ջանք գործ էր դնում՝ դրսից բերելու նոր մահմեդական տարրեր»⁶: Թուրք-թաթարական քոչուոր ու կիսավայրենի ցեղախմբերի բնակեցումը Ղարաբաղի տարածքում **իսկական չարիք դարձաւ արցախահայութեան համար:** Այդպիսով, Արցախում բնակուող միատարր ու միաձոյլ հայութեան մէջ մտաւ օտարասեռ էթնիկ տարրը: Խաշնարած ցեղերի՝ Արցախ ներթափանցելուց յետոյ ընկած ողջ ժամանակաշրջանը հազեցած է եղել բնիկ հայերի և եկուոր էթնիկ տարրերի հակամարտութեամբ: Բերուած ցեղախմբերը, առաջին հերթին, Փանահ խանի համար յուսալի դաշնակիցներ էին Արցախի՝ իրեն չենթարկուող մելիքութիւնների դեմ պայքարի ժամանակ: Սակայն, ըստ էութեան, Փանահ խանին այդպէս էլ չաջողուեց իր իշխանութիւնը տարածել Դիզակի, Գիւլիստանի և Ջրաբերդի մելիքութիւնների վրայ:

Փանահ խանի մահից յետոյ (1763 թ.) նրա որդին և յաջորդը՝ Իբրահիմ խանը (1763–1806), ստիպուած էր դեռ երկար պայքար մղելու այդ Հայկական ինքնիշխան մելիքութիւնների դէմ: Դեռ աւելին, նորահաստատ խանութեան դէմ այդ մելիքութիւնների ջնարող պայքարը հաշուի առնելով է, որ 1780-ական թուականներին Ռուսաստանում մտադրուել էին Արցախի հիման վրայ վերականգնել Հայոց պետականութիւնը՝ վերացնելով Հայոց հողում հայ մելիքներից մէկի աջակցութեամբ դրանից 30 տարի առաջ ստեղծուած Ղարաբաղի խանութիւնը:

Իբրահիմ խանը 1786 թ. թունաւորելով սպանել է Գանձասարի կաթողիկոս Յովհաննէս Հասան-Չալալեանին և կողոպտել Հայոց ազգային-ազատագրական շարժման կենտրոն Գանձասարի վանքը: Սակայն, Ղարաբաղի խաներին չաջողուեց վերջնականապէս ճնշել այստեղ մնացած մելիքների դիմադրութիւնը:

Վէճերը նրանց միջեւ շարունակուեցին ընդհուպ մինչեւ 1813 թ., երբ Ռուսաստանի և Պարսկաստանի միջեւ կնքուած Գիւլիստանի պայմանագրի համաձայն Արցախն անցաւ Ռուսաստանին: Արցախի մելիքների զօրաջոկատները շօշափելի ներդրում են ունեցել ռուսական բանակի յաղթանակներում՝ դրանով նպաստելով իրենց հայրենիքի միաւորմանը Ռուսաստանին:

Ամփոփելով՝ նշենք, որ այնքան ժամանակ, քանի դեռ մելիքութիւններից մէկի տիրակալի սրտում բուն չէր դրել դաւանանութեան ախտը, ըստ էութեան ազատ էին նրանք և ինքնիշխան, իսկ երբ Վարանդայի Մելիք-Շահնազար Բ-ի թողտուութեամբ Արցախում հաստատուեց վաչկատուն սարքալլուների ցեղապետ Փանահ խանը, վերջինիս և նրա որդուն՝ Իբրահիմ խանին յաջողուեց զգալիօրէն թուլացնել Արցախի մելիքութիւնները: Եւ **միայն Արցախյան հերոսական ազատամարտի շնորհիւ յաջողուեց սրբագրել Մելիք-Շահնազարի թոյլ տուած շուրջ 240-ամեայ ճակատագրական սխալը:**

Եւ, վերջապէս, եթէ այսօր ունենք ազատ և անկախ **Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն**, ապա այդ պետութեան կայացման ենթախորքում, անտարակոյս, իրենց անուրանալի դերն ունեն Արցախի հերոսական մելիքութիւնները, որոնց տիրակալներին յաջողուեց միջնադարեան դժնդակ պայմաններում պահպանել այդ երկրամասի հայեցի նկարագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. **Հեթում Պատմիչ**, «Պատմություն թաթարաց», Վենետիկ, 1842, էջ 24:
2. **Լեօ**, «Երկերի ժողովածու», հ. 3, գիրք 2, Եր., 1973, էջ 10:
3. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, с. 48–49.
4. **Փափազեան Հ.**, Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, N 5, էջ 77:
5. Армяно-русские отношения в XVIII веке. Сборник документов, т. IV, Ереван, 1990, с. 179.
6. **Լեօ**, «Երկերի ժողովածու», հ. 3, գիրք 2, էջ 303:
7. **Մաղալեան Ա.**, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ.», Եր., 2007, էջ 182:

Ք Ա Ր Ո Չ Խ Օ Ս Ա Կ Ա Ն

**Տ. ԱՐՇԱԿ ԵՊՍ. ԽԱԶԱՏՐԵԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՕՍՈՒՎԱԾ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՒԲԵԱՆՑ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՉ
ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
(24 Մեպտեմբեր 2017)**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն
Միբեկի քոյրեր եւ եղբայրներ:

Նախ եւ առաջ փառք կու տամ Տիրոջ, եւ եղբայրական իմ սերն ու երախտագիտութիւնը կը յայտնեմ իմ հոգեւոր աւագ եղբօր՝ Երուսաղէմի Սրբազան Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրիան Արք. Մանուկեանին՝ Խաչվերացի հրաշագարդ տօնին առիթով Տիրոջ սրբազան վայրին՝ Սրբոց Յակոբեանց նուիրական անունը կրող այս տանարին մէջ պատարագ մատուցելու այս հրաշալի առիթին համար:

Պատարագի մատուցումը անփոխարինելի առիթ մըն է հոգիով զօրանալու, նորոգուելու, Տիրոջ սրբազան կերպարով ու առաքելութեամբ եւ Աստուծոյ հետ անմիջական հաղորդակցութեան մէջ գտնուելու: Ես ուրախ եմ եւ հոգւոյս պարտք կը համարեմ Սրբոց Յակոբեանց Զինուորեալ Միաբանութեան փոխանցել նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջոյններն ու օրհնութիւնը, մաղթելով որ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը Սրբազան Պատրիարքի իմաստուն առաջնորդութեան ներքոյ, շարունակել պահապան եւ պաշտպան ըլլալ Տէրունակոյս սրբազան վայրերուն:

Սուրբ Խաչին նուիրուած այս տօնին առիթով հոգիի մէջ անդադար կ'արձագանգէ Տիրոջ խօսքը, խօսք՝ որ 2000 տարիներ շարունակ ոգեշնչած, քաջալերած եւ առաջնորդած է քրիստոնէայ հոգիները, «Ա՛ն զԽաչ քո եւ ետ զկնի իմ», «Ա՛ն քու խաչդ եւ ետեւէս եկուր: Ասոնք խօսքեր են, որոնք հազարամեակներ շարունակ հնչած են քրիստոնէաներու շրթներէն, խօսքեր՝ որոնց հետեւած են Քրիստոսի նուիրուած հոգիներ, խօսքեր՝ զորս կ'արտաբերէր մեր Տէրը՝ ցոյց տալու այն ճանապարհը, որով պիտի ընթանային իր հետեւորդները. «Ա՛ն զԽաչ քո եւ ետ զկնի իմ»:

Այսօրուայ աշխարհի իշխաններն եւ առաջնորդները, կոչեր կ'ուղղեն մարդոց հետեւ-

ւելու իրենց, կոչեր կ'ուղղեն մարդոց առաջնորդուելու իրենց գաղափարներով, իրենց տեսիլքներով, եւ իրենց հայացքներով: Միակ առաջնորդը սակայն, որ կանչեց մարդիկը հետեւելու իրեն, միաժամանակ վերցնելով միայն իրենց վերապահուած խաչը՝ Քրիստոս է: Խօսիլ՝ Քրիստոսի հետեւելու առանց շակած ըլլալու սեփական խաչը, կը նշանակէ դատապարտուած ըլլալ խոր մոլորութեան եւ ինքնախաբէութեան: Չկայ՝ Քրիստոսի հետեւողութիւն առանց խաչակրութեան, չկայ՝ քրիստոնէութիւն՝ առանց տառապանքի յաղթանակի հասնելու վճռականութեան: Չկայ՝ եւ չի՛ կրնար ըլլալ Յարութիւն, չի՛ կրնար ըլլալ յաղթանակ, եթէ այդ յաղթանակը տառապանքներու ու տանջանքներու, ինքնագոհաբերութեան եւ գոհողութիւններու հովտին մէջէն չէ անցած: Քրիստոս մեզի կոչ կ'ընէր Խաչի միջոցով ընտրել ինքնագոհութեան, ինքնազրկանքի, գոհաբերութեան ճանապարհը՝ եւ ընթանալ այդ ճանապարհով:

Մարդը իր ծննդեան օրէն դատապարտուած է տառապանքի, դատապարտուած է զրկանքի: Կեանքի ամենէն ուրախ պահերուն՝ տխրութեան զգացումը մեզ չի լքեր, ամենէն երջանիկ պահերուն անգամ մեր հոգին կը ստուերուի տխրութեան զգացումներով: Մարդկային կեանքին մէջ լիարժէք չէ ուրախութիւնը, ամբողջական չէ երջանկութիւնը մարդկային կեանքէն ներս, եւ Քրիստոս կոչ կ'ընէ լիարժէք երջանկութիւն եւ լիարժէք ուրախութիւն ձեռք ձգելու համար կամաւորաբար ընտրել ինքնագոհութեան՝ խաչի ճանապարհը: Միայն ուրիշին մատուցած ծառայութեամբ է, որ մարդ կը գտնէ իր լիարժէք եւ լիակատար երջանկութիւնը:

Տարիներ առաջ, երբ կանխասացութիւն եղաւ թէ աշխարհի վախճանը կը մօտենայ, մեծահարուստ մը քարայր մը գնեց եւ իր ապագայ անվտանգութիւնը ապահովելու համար հայթայթեց սնունդ եւ անհրաժեշտ բոլոր պարագաները: Ան կը մտածէր թէ պիտի փրկուէր Աստուծոյ դատաստանէն, կը մտածէր թէ բոլոր մարդիկ պիտի դատապարտուէին կորստեան, բայց ինք պիտի կարողանար փրկուիլ: Անշուշտ չիրականացան աշխարհի վերջաւորութեան մասին կանխասացութիւնները: Այս բոլորովին այլ հարց մըն է: Քրիստոս կ'ըսէ. «Աշխարհի վախճանը կ'ըլլայ այն ժամանակ, երբ Աստուած կամենայ»: Բայց մարդը առաջնորդուեցաւ այն միամիտ մտածումով, թէ ինք խոյս պիտի տար աշխարհի վախճանէն: Շատերու համար գուցէ խելամիտ քայլ մըն էր այս մեծահարուստին ըրածը, բայց մեզ՝ քրիստոնէաներուս համար, իսկապէս չափազանցուած պիտի չըլլայ, եթէ ըսենք խելկատակութիւն մըն էր, երջանիկ մոլորութիւն մը:

Ի՞նչ արժէ կեանքը, եթէ զրկուած պիտի ըլլաս քու հարազատներէդ, ի՞նչ արժէ կեանքը, երբ ստիպուած պիտի ըլլաս պահպանել ընդամենը քու ֆիզիքական, մարմնական գոյութիւնդ: Ի՞նչ արժէ կեանքը, եթէ այն պիտի չգնահատուի եւ չարժեւորուի քու նմաններուն մատուցած ծառայութեանդ համար եւ ի՞նչ արժէ կեանքը, եթէ ընդամենը նուիրուած պիտի ըլլայ նիւթական պատիւներու:

Իսպիին խորհուրդը, սիրելի քոյրեր եւ եղբայրներ, ահա կը խորհրդանշէ քրիստոնէային ճանապարհը, քրիստոնէային կեանքը՝ ապրուած հասարակութեան համար, ապրուած ընկերութեան համար, ապրուած մարդկութեան համար, ապրուած իր նմաններուն համար: Շատեր թերեւս զարմանան, երբ լսեն թէ քրիստոնէութեան, Հայ եկեղեցւոյ մէջ գոյութիւն ունին հինգ կարեւոր տօներ եւ այդ հինգ կարեւոր տօներէն մին նուիրուած է խաչի մը, գործիքի մը, նշանի մը: Մինչդէռ մնացեալ տօները նուիրուած են Քրիստոսի եւ Աստուածամօր, սակայն ասիկա պատահականութիւն չէ, եւ զարմանալի ոչինչ կայ: Մեր հայրերու դիպուկ բնորոշմամբ. «Խաչ յայտ առնէ զխաչեցեալն»: Խաչը կը բացայայտէ Խաչեցեալը, խաչը կը խօսի Խաչեցեալի մասին, խաչը կը պարզաբանէ Խաչեցեալին առաքելութիւնը: Իրապէս, ես չեմ գիտեր, ի՞նչ զգացում պիտի առաջացնէր մեր մէջ Քրիստոսի Յարութիւնը, եթէ նախորդուած չըլլար Խաչելութեան ճանապարհի տառապանքով: Ես չեմ գիտեր ինչպիսի՞ն պիտի ըլլար մեր ժողովուրդին այսօրը, եթէ այն նախորդուած չըլլար խաչակրութեամբ, նախորդուած չըլլար Իր ինքնութեան՝ քրիստոնէութեան Իր պատկանելիութեան համար

մղուած քաջարի, տեւական ու յամառ պայքարով: Ինչպիսի՞ն պիտի ըլլար Սրբոց Յակոբեանց Չինուորեալ Միաբանութեան կեանքն այսօր, եթէ այն պայքար մը չըլլար յանուն խաչի հաստատման: Ինչպիսի՞ն պիտի ըլլար ձեր կեանքը, սիրելի քոյրեր եւ եղբայրներ, որ այսօր ուխտաւորաբար ժամանած էք այստեղ՝ Սուրբ Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց այս Մայր Տաճար, եթէ ձեր ճանապարհը, ձեր կեանքը զարդարուած չըլլար Քրիստոսի խաչը հաստատելու, Քրիստոսի խաչի ճանապարհով անցնելու ամենօրեայ մաքառումներով եւ պայքարներով: Մեր ժողովուրդը չափազանց լաւ գիտէ խաչին արժէքը, մենք զմեզ դարձուցեր ենք ո՛չ միայն խաչակիրներ, այլեւ անձեր, որոնք խաչով կ'ապրին: Ամէն օր խաչը ըրած ենք իրենց առաքելութեան, իրենց կեանքին առանցքը:

Այսօր, ես, ուրախութեամբ եւ հպարտութեամբ կեցած եմ Սրբոց Յակոբեանց այս Մայր Տաճարի խորանին առջեւ եւ Աստուծոյ հազար փառք կու տամ, որ մեր Միաբանութեան՝ խաչով սպառազինուած Միաբանութեան, շնորհիւ եւ իրենց ջանքերով կանգուն է եւ կայուն Պատրիարքութիւնը Սրբոյ Երուսաղէմի: Անվտանգ ու պաշտպանուած են մեր սրբավայրերը եւ իրենց հիւրընկալ դռները կը բանան հարիւրաւոր հայարիւն ուխտաւորներու՝ նորոգուելու եւ զօրանալու ոգիով: Ես այսօր, Ս. Իսաչվերաց տօնի նուիրական այս առաւօտ, աղօթք կը մատուցանեմ առ Աստուած, որպէսզի Իսաչի զօրութեամբ օրհնէ եւ զօրացնէ մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ աշխարհի բոլոր անկիւններուն:

Այսօր մեր ժողովուրդը կեցած է բազմաթիւ մարտահրաւերներու առջեւ, բազմաթիւ դժուարութիւններու առջեւ: Բազմաթիւ դժուարութիւններու առջեւ է նաեւ մեր երկիրը, մեր հայրենիքը: Դժուարութիւններու առջեւ են Սփիւռքի մէջ բնակուող մեր հայրենակիցները: Բոլոր ծրագիրները, բոլոր մեքանիզմները, որոնք կոչուած են ըլլալու, ապահովելու համար մեր փրկութիւնն ու գոյատեւութիւնը, կրնան ձախողիլ: Չեն կրնար գործել եւ արդիւնաւէտութիւն արձանագրել, եթէ խարսխուած չեն մեր ինքնութիւնը կազմող հիմնական բաղադրիչներու վրայ: Մեր ինքնութեան աղբիւրը մեր հաւատքն է, մեր ինքնութեան աղբիւրը մեր յարատեւութեան գրաւականը՝ խաչի ճանապարհն է, յանձնառութեան ճանապարհն է, եւ զոհողութեան ճանապարհն է: Առ ոչինչ կ'ըլլան մեր բոլոր յոյսերը եւ կանխասացութիւնները Հայոց փրկութեան եւ ապագայի նկատմամբ, եթէ մենք պատրաստ չըլլանք խաչի նկատմամբ հաւատարմութեամբ եւ սիրոյ դրսեւորումով մէկս միւսին նկատմամբ հոգատարութիւն, սրտացաւութիւն եւ ուշադրութիւն ունենալ:

Ճատեր կ'ըսեն, թէ հայեր իրաւունք չունին իրարմէ նեղուելու, բայց հայեր իրարմէ չնեղուելու համար պարտաւոր են նախ եւ առաջ մէկը միւսին չնեղացնել: Իսաչելութեան ճանապարհ կը նշանակէ զոհողութեան ճանապարհ: Իսաչելութեան ճանապարհ կը նշանակէ դէպի յաղթանակ ընթանալու ճանապարհ: Քրիստոնէութիւնը տկարութեան, թուլութեան, նահանջի կրօն մը չէ, ինչպէս ոմանք թիրիմացաբար ընկալած են եւ կ'արտայայտուին: Քրիստոնէութիւնը յաղթող կրօն մըն է, Քրիստոնէութիւնը յաղթութեան ճանապարհ մըն է, քրիստոնէան զօրաւոր անձն է, որ արհամարհել գիտէ դժուարութիւններ, որ բռնութենէ եւ սպառնալիքներէ չ'երկնչիր: Որ հուրի եւ բոցի մէջէն անցնիլ գիտէ հասնելու յաղթանակի եւ փարիլ գիտէ իր Աստուծոյն եւ սկզբունքի եւ արժէքներու պահպանութեան համար մարմնաւոր տկարութիւններու առջեւ չի կենար: Եւ թող Իսաչի խորհուրդը զօրացնէ մեր մէջ այն զգացումը, թող ոյժ եւ կարողութիւն պարգեւէ ամենուս, թող վերստին մեր մէջ նորոգէ յանձնառութեան ոգին, սիրոյ ոգին, զոհողութեան ոգին, ապրելու մէկս միւսին համար, ապրելու մեր երկրին համար եւ մեր ժողովուրդին համար, ի փառս Աստուծոյ եւ ի մխիթարութիւն մեր բոլոր զաւակներուն այսօր եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Ա Ռ Ա Ճ Ն Ե Ր
Հոսկէ-Հոնկէ

- Աստուածները բուքը լերան համաձայն կու տան, որքան որ մեծ ու բարձր անձնաւորութիւն ես, հոսանքները այդքան աւելի զօրաւոր կ'ըլլան:
- Առանց վտանգի յաղթողը՝ առանց փառքի յաղթանակած կ'ըլլայ:
- Երբ խելքդ հասնի ու ձեռքդ չհասնի, մեծ տառապանք է:
- Երբ կ'ուզես հոր իջնել, բնաւ մի՛ կործաներ օտարին պարանը:
- Երկար լեզուն կը կրճատէ կեանքը:
- Լեզուն կակուղ միս է, բայց ի՜նչ ոսկորներ կը փշրէ:
- Խօսիլը՝ ցանել է, իսկ մտիկ ընելը՝ քաղել:
- Մեծին հետ միշտ մեղմ խօսէ:
- Ոտքդ կրնայ սահիլ, բայց լեզուդ երբեք պէտք չէ սահի:
- Վրէժխնդրութեան պատճառած գոհունակութիւնը կարճատեւ է, մինչդէռ ներողամտութեան առթած հաճոյքը՝ մշտատեւ:
- Տառապանքն ալ իր հաճոյքն ունի:
- Խօսք մը կրնայ կռիւի եւ նոյնիսկ պատերազմի դուռքանալ, իսկ խաղաղութեան դառնալու համար հազար խօսք քիչ է:
- Պատիւը նման է թանկարժէք քարին, որուն վրայ ամենափոքր բիծն անգամ կը նուազեցնէ արժէքը քարին:
- Լեզուին մէջ թոյն ունեցողը չի կրնար մեղր թքնել:
- Միտքը միշտ գոհն է սրտին, բոլոր անոնք որոնք իրենց միտքը լաւ գիտեն, չեն ճանչնար իրենց սիրտը:

- Մարդոց հիացման արժանանալէ աւելի նախընտրելի է արժանանալ անոնց համարումին:
- Կնոջ ոյժը կը կայանայ իր գեղեցկութեան մէջ, իսկ մարդուն գեղեցկութիւնը իր ոյժին մէջ:
- Սէրը նման է լուսնին, երբ չ'անհիր կը պգտիկնայ:
- Կեանքը վարդ մըն է, որուն իւրաքանչիւր թերթը պատրանք է, իսկ իւրաքանչիւր փունջ՝ իրականութիւն:
- Թերութիւններ չունեցող մարդ չկայ, լաւ է այն մարդը՝ որ քիչ թերութիւն ունի:
- Յիմարին խրատ տալը կը նմանի հայելի տալ կոյրին:
- Հօրագոյն միտքը ա՛յն է, որ գիտէ իր տկարութիւնը:
- Եթէ կ'ուզես գաղտնիքի թշնամիներէդ պահել, նախ պահէ քու բարեկամներէդ:
- Մուրը չէ որ կը յաղթէ, այլ՝ ոգին:
- Ունենալը չէ կարելորը, վայելել գիտնալն է, որ իրապէս մարդը կ'ընէ բախտաւոր:



Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՌԷԱԼԻԶՄԸ ՕՆՆԻԿ ԶԻՖՔԷ-ՍԱՐԱՓՔԻ ՆՈՐԱՎԷՊԵՐՈՒՄ

ՏԱԹԵԻԿ ՄԵՐՉԱՆԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի
Ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

Օննիկ Զիֆքե-Սարաֆը (Յովհաննէս Արիսողոմեան) մէկն է արեւմտահայ գրականության այն ներկայացուցիչներից, որոնք հանգամանքների բերումով յայտնուել են ստուերում: Թէեւ նա այդքան էլ հանրածանօթ հեղինակ չէ, բայց, այդուհանդերձ, իր վառ անհատականության կնիքը կրող ստեղծագործութեամբ կարողացել է ապահովել իր արժանաւոր տեղն արեւմտահայ գրականության մէջ:

Հայ գրականության պատմության մէջ կարելու տեղ է զբաղեցնում 19-րդ դարի 80-ականների գրական իրապաշտական շարժումը: Այն իր տեսակի մէջ եզակի է, որովհետեւ ծաւալուեց համիդեան բռնապետության տարիներին: Ի հեճուկս համիդեան հայահալած քաղաքականության՝ 80-ականների այս շարժումն ուրուագծեց այն խնդիրները, որոնք ծառացել էին հայ ժողովրդի առջեւ: Ի դերել ելան բոլոր այն երագներն ու ցանկութիւնները, որոնք պարուրել էին նախորդ սերնդին: 80-ականների սերունդն աչքի առաջ տեսնում էր միայն արիւնոտ կեռ եաթաղան: Այս ծայրայեղ վիճակում խնդիր առաջացաւ ճանաչել այն իրականութիւնը, որտեղ ապրում են: Ազատության նախօրէին հայ ժողովուրդը պէտք է զինաթափուէր նախկին բարքերից, կենցաղից, ճանաչէր սեփական թերութիւնները, այնուհետեւ ձեռնամուխ լինէր քաղաքակիրթ հասարակութիւն ստեղծելու դժուարընթաց գործին: Այս ամէնից առանցքային էին դառնում անհատի ազատության, կնոջ իրաւունքների պաշտպանության, ընտանեկան առողջ յարաբերութիւնների, բարքերի բարելաման, անցեալից ժառանգուած բարոյական սխալ ըմբռնումների մաքրագործման հարցերը: Այս հրատապ հարցերն ու խնդիրները պահանջում էին ուշադրութեան կենտրոնում պահել ժողովրդին: Գրականութիւնը հնարաւորինս ճիշդ պէտք է արտացոլէր նրա բոլոր խաւերի կեանքը:

80-ականների գրական շարժումն ստեղծեց այն գեղագիտական հայեացքներն ու ըմբռնումները, որոնք պիտի ուղենիշ լինէին այդ շարժման ճանապարհին: Այդ ըմբռնումները ձեւակերպուեցին մէկ ընդհանուր բանաձեւի մէջ՝ արտացոլել կեանքն այնպէս, ինչպէս որ է: Այս տեսանկիւնից Արփիար Արփիարեանն իրաւացիօրէն գրում է. «Ազգային մատենագրութիւնը պէտք է որ թափանցէ ժողովրդին ամէն խաւերուն, ամէն դասակարգերուն մէջ...»¹:

Այս բանաձեւը պահանջում էր կեանքի բազմակողմանի, ընդհուպ յոռի ու արտասովոր կողմերի արտացոլում, որոնք դարձել էին այդ ժամանակաշրջանի հասարակութեան «անբուժելի հիւանդութիւնը»: Այս իմաստով ճիշդ է այն տեսակէտը, ըստ որի՝ ռէալիզմը «ապաւինում է կեանքի չէզոք արձանագրութեանը»²:

Ծարժման գաղափարախօսութիւնը քննադատաբար էր վերաբերում «հին» կեանքին: Կարելու էր նաեւ այն, որ 80-ականների գրական սերունդն ուշադրութեան կենտրոնում էր պահում կեանքի յատակում յայտնուած մարդկանց, պանդուխտների կեանքը, որը մինչ այդ չէր դարձել գրականության թեմա: Գրական այս սերունդը իրաւացի էր այն հարցում, որ

¹ Արփ. Արփիարեան, Կեանքի լեզուն, «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, թիւ 261:
² Տե՛ս Հայ նոր գրականության պատմութիւն, հ. 4, Երեւան, ՀՍՍՀԳԱ հրատ., 1972, էջ 62:

ժողովրդին հասկանալի լինելու համար պետք է գրել նրա լեզուով, օգտագործել այդ լեզուի դարերով կատարելագործուած պատկերաւորման միջոցները: Այս բոլորի արդիւնքում պիտի ստեղծուէր ազգային գրականութիւն: Մակայն ազգային գրականութիւն ստեղծելու պահանջը չպէտք է հակադրուէր համամարդկային գրականութեան արժէքին: Գրողները, համադրելով սեփական աշխարհի գոյները, հաստատում էին այն գաղափարը, որի համաձայն՝ ճշմարիտ ազգայինը պարունակում է նաեւ համամարդկային արժէքներ:

Փաստօրէն, այս բոլորը վաղուց արդէն արմատաւորուել էին գրականութեան մէջ, երբ գրական հորիզոնում յայտնուեց Օննիկ Չիֆթէ-Սարաֆը: Այս շրջանում արեւմտահայ գրականութեան մէջ տիրապետում էր Գրիգոր Զօհրապի նորավէպերի գաղափարագեղարուեստական մտածողութիւնը: Այս համապատկերում երեւան եկան երիտասարդ Չիֆթէ-Սարաֆի նորավէպերն ու պատկերները: Ժանրի հարցում Սարաֆը նորութիւն չբերեց: Նորավէպի ժանրն առաւել կամ պակաս չափով զարգացել էր 1880-ականներին (արեւմտահայ գրականութեան առաջին նորավիպագիրը Թ. Շիշմանեանն է, որի «Գարնան մի ասուպը» լոյս տեսաւ 1883-ին)³: Այս ժանրը ենթադրում էր փոքր ծաւալ, նորութիւն կամ արտասովորի առկայութիւն, պատումի նմանութիւն բանաւոր խօսքին, կառուցուածքի սեղմութիւն, մէկ միասնական թեմա, սահմանափակ թուով կերպարներ, որոնք պատկերուում էին կեանքի որեւէ շրջադարձային պահի, դրամատիկ տարրի առկայութիւն, գործողութեան լարում, սիւժէի սրընթաց զարգացում (միագիծ սիւժէ) և անսպասելի աւարտ: Նորավէպը արժէքաւոր է, եթէ հակիրճութիւնն ու բովանդակութեան հարստութիւնը համատեղուած են նրանում: Նորավէպում դրամատիզմի առկայութեան առումով յատկանշական է Յակոբ Օշականի հետեւեալ ձեւակերպումը. «Նորավէպը թատերական փոքրիկ կառոյց մըն է, որուն մէջ տիրական է արագութիւնը գործողութեան»⁴:

Օննիկ Չիֆթէ-Սարաֆի նորավէպերը ոչ միայն խոշոր ազդեցութիւն ունեցան արեւմտահայ նորավէպի զարգացման ճանապարհին, այլեւ որոշակիօրէն տարբերում են արեւմտահայ 80-ականների իրապաշտ նորավիպագիրների ընդհանուր համակարգից: Լայն իմաստով, ինչպէս Թ. Շիշմանեանը՝ մէկ նորավէպով, այնպէս էլ Չիֆթէ-Սարաֆն իր նորավէպերով, պատկերներով և «Միամիտի մը արկածները» վէպով իր ուրոյն տեղն ունի արեւմտահայ նորավիպագրութեան ասպարէզում:

Չիֆթէ-Սարաֆը հոգեբան չէ, ինչպէս Զօհրապը: Նա չունի այր-կին փոխյարաբերութեան հոգեբանական տիրոյթը մտնելու և որոշակի հոգեկերտուածքների մէջ տուեալ հոգեբանութեան ընդհանրութիւնները բացայայտելու վերջինիս կարողութիւնը: Սարաֆը նման չէ նաեւ Երուխանին: Վերջինիս մօտեցումը նոյնպէս տարբերում է. նա գտնում էր, որ հասարակական անարդար կեանքում կատարուող մեծ յեղաբեկումները չեն կարող փչացնել մարդու հոգեկերտուածքային անխաթար կառուցուածքը: Ըստ Երուխանի՝ այդ հոգեբանութիւնը դրսեւորում է ինչպէս կեանքի յատակն ընկածների, այնպէս էլ ամենաբարձրերում սպրոդների մօտ: Օրինակ՝ «Պապուկը» կամ «Մեռելներուն ջրկիրը» համեմատենք «Թաշկինակի» հետ: Այստեղ տեսանելի է, որ բարձր խաւի մէջ եւս կան հոգեբանական անխառն արժէքներ: Ըստ էութեան, սխալ է Երուխանի նորավէպերը սահմանափակել լուսցարարուհիներով և նաւավարներով: Հեղինակն ուշադրութեան է արժանացրել այդ խաւին, որովհետեւ հոգեբանական ամենամեծ փորձութիւնն ու դրսեւորումներն ի յայտ են գալիս հէնց այդ խաւերի մէջ: Մարդը, չդիմանալով սոցիալական կեանքի ճնշումներին, գնում է խեղման ճանապարհով: Երուխանն ուզում է հակադրուել այս մօտեցմանը: Մարդը՝ իբրեւ հոգեկերտուածքային տեսակ, ունի հոգեբանական փայլուն որակներ, որոնք սոցիալական դաշտում չեն կարող աղաւաղուել ու վերանալ: Սոցիալական յեղաբեկումները կարող են ազդել մարդու վարքաբանութեան վրայ: Առհասարակ մարդու վարքը կեցութեան

³ Տե՛ս «Արևելեան մամուլ», Չմիւռնիա, 1883, Օգոստոսի, Սեպտեմբերի, Հոկտեմբերի, Նոյեմբերի, Դեկտեմբերի համարները:

⁴ Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 6, Արուեստագէտ սերունդ, Պէլրոյթ, Տպ. «Համազգային», 1968, էջ 255:

ձեւերի մէջ փոփոխութիւններ կարող է ունենալ, բայց հոգեբանութիւնը փոխուել չի կարող:

Չիֆթէ-Սարաֆի նորավէպերը տեսանելի են Երուխանի նորավէպերի համակարգում: Ինչպէս Չօիրապը, Երուխանը, այնպէս էլ Օննիկ Չիֆթէ-Սարաֆն ապրում էր ժողովրդի համար ծանր, եթէ չասենք ողբերգական ժամանակաշրջանում: Ի տարբերութիւն իր գրչակիցների՝ Չիֆթէ-Սարաֆը գրական ասպարէզ մտաւ գրականութեան յստակ ծրագրով: Այս առումով գրականագէտ Եղիշէ Պետրոսեանը գրում է. «Կեանք, ճակատագրի դրամաներ, կախարհող, ինքնամոռացութեան հասնող վեհացնող սէր, մարդկային բազմատեսակ հոգեցունց ապրումներ և յոյզեր, այս է Չիֆթէ-Սարաֆի առաջին նորավէպերի նիւթը»⁵:

Հեղինակը լաւ էր հասկանում, որ արագ զարգացող դարաշրջանում (19-րդ դարավերջը և 20-ի սկիզբը այդպիսին էր) մարդը գոյատեւելու, հասարակութեան մէջ պատշաճ դիրք զբաղեցնելու համար ստիպուած դառնում է հասարակութեան ստեղծած յարաբերութիւնների գերին: Այս գլխապտոյտ արագութեան մէջ մարդը ժամանակ չունի իր հոգին կրթելու, իսկ այդ հոգին կրթւում է բացառապէս արուեստի, այս դէպքում՝ գրականութեան միջոցով:

Հեղինակը փորձում է տեսնել մարդու հասարակական դիրքի, նրա ինքնութեան և հոգեկերտուածքի բախումների հիմքի վրայ ինչպէս է ձեւաւորւում բարոյականութիւնը: Այս առումով այնքան էլ սխալ չէ այն ձեւակերպումը, ըստ որի՝ «Չիֆթէ-Սարաֆի ստեղծագործութեան մէջ աշխարհի բարոյական դիմապատկերը քննարկւում է առաւելապէս սիրային յարաբերութիւնների տեսանկիւնով»⁶:

Ստուերում ստեղծագործող հեղինակի աչքից չի վրիպել այն, որ 20-րդ դարում մարդը ոչ թէ կորցնում է իր բարոյական նկարագիրը, այլ ձեռք է բերում մէկ այլ նկարագիր, որը, ինչպէս բոլոր ժամանակներում, աւելի շատ տեսանելի է սիրոյ զգացմունքի ընկալումներում: Փոխուել է դարը, և դրա հետ մէկտեղ մարդկային «հին» արժեհամակարգն իր տեղը զիջել է նորին: Մարդը նոր դարաշրջան է մտնում բարոյական նոր նկարագրով և արժեհամակարգով:

Ժամանակաշրջանի անվերջ փոփոխութիւնը և դրա հետեւանքով անդառնալիօրէն կործանուող գեղեցկութիւնների ողբերգութիւնը գրականութեան մեծագոյն մտահոգութիւններն են: Ամէն «նորի» ներմուծմամբ անցեալի «զամբիւղ» է նետւում մարդկային մի գեղեցկութիւն: Սակայն Չիֆթէ-Սարաֆին այս փոփոխութիւնների պատճառները չեն յուզում. նա ուղղակի արձանագրում է այն, ինչ տեսնում է: Նրա համար տեսանելի է, որ մարդկային այս նոր որակներից մարդիկ չեն զարմանում, դրանք դարձել են սովորութեան պէս մի բան: Չիֆթէ-Սարաֆի նորավէպերի գաղափարական ենթաշերտերում բացառիկ քննութեան են ենթարկւում մարդագիտութեան հիմնադրոյթները: Մարդու հոգեբանութեան փոխ-յարաբերութեան քննութիւնն այս հեղինակի գրչի տակ ձեռք է բերում գիտական որոշակի ոճ: Նա աւելի շատ ուզում է ցոյց տալ, քան գեղարվեստականօրէն համոզել. այս առումով նրա նորավէպերը թոյլ գործեր են: Սարաֆն իր նորավէպերում արծարծած արդիական գաղափարներով նորավիպագիրների համակարգում մնում է ուղղորդող հեղինակ. քննութեան է ենթարկւում հասարակական արտառոց երեւոյթներ, այսինքն՝ այն, ինչը տուեալ հասարակութեան մէջ մերժելի է համարւում գուտ բարոյական ըմբռնումների դիտանկիւնից: Հասարակութիւնը ապրում է իր իսկ ստեղծած նորմերով: Նա ընդունում է այն, ինչ որ դրուած է իր ստեղծած նորմերի շրջանակում: Սահմանների փոքր ինչ շեղումը կարող է հանգեցնել հասարակութեան ոչնչացնող վերաբերմունքի:

Չիֆթէ-Սարաֆի նորավէպերը սիւժետային գծերով ակնառու չեն. գործողութիւնները սակաւ են, կերպարները՝ սակաւաթիւ, իսկ հեղինակի միջամտութիւնը՝ աւելի շատ: Հետեւաբար սա է պատճառը, որ Չիֆթէ-Սարաֆի նորավէպերը քիչ են գրաւում ընթերցողին:

⁵ Պետրոսեան Ե., Գրական դէմքեր, Օննիկ Չիֆթէ-Սարաֆ, Սովետ. գրող հրատ., Երեւան, 1977, էջ 252:

⁶ Հայ նոր գրականութեան պատմութիւն, հ. 5, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 740:

Այս դիտանկիւնից ճիշտ է Ե. Պետրոսեանի այն տեսակէտը, ըստ որի՝ գեղարուեստական միտումը թաքնուած է Չիֆթէ-Սարաֆի նորավէպերում: Կերպարների արարքներից և գեղարուեստական պատկերներից է դրսևորում հեղինակի գաղափարական նպատակադրումը⁷:

Շատ դէպքերում Չիֆթէ-Սարաֆը դիմում է Գրիգոր Զօհապի նախընտրած մեթոդին՝ իրեն ներկայացնում է իբրև ականատեսի: Նա այդպէս է վարում՝ նպատակ ունենալով հաւաստիութիւն հաղորդել նորավէպի սիւժէին կամ գաղափարաբանութեանը, որը երբեմն բերում է արտառոց իրողութիւններ: Դրանք կարող էին կասկածի տեղիք տալ ընթերցողին:

Չիֆթէ-Սարաֆին հետաքրքրում էր շատ կարելու մի հարց. մարդու հոգեկերտուածքը որքանո՞վ կարող է դիմակայել հասարակութեան պարտադրած յարաբերութիւններին, որոնք իրենց ճանապարհին աւերում են ամէն ինչ: Ըստ նրա՝ դա քաղաքական հակասութիւն չէ: Սարաֆ նորավիպագիրը համապարփակ հետազօտող է: Նրան յատուկ չէ Երուխանի դիտողունակութիւնը, վերլուծելու Զօհրապեան կարողութիւնը, իրողութիւնը հասարակական ընդհանուր պատկերից կիսելու Բաշալեանական ունակութիւնը և այլն: Իհարկէ, Չիֆթէ-Սարաֆի նորավէպերը գաղափարա-գեղարուեստական շատ կողմերով զիջում են այս հեղինակների համապատասխան ստեղծագործութիւններին, բայց, անկախ քաղաքական, հասարակական և սոցիալական իրավիճակներից, մարդկային հոգեբանութեան մէջ տեղի ունեցող պայքարի և այդ պայքարում հոգեկերտուածքի պարտութեան կամ յաղթանակի արտացոլման հարցում նա մնում է եզակի ու անկրկնելի հեղինակ: Սա նրա առաջին և ամենաւէական իւրայատկութիւնն է միւս նորավիպագիրներից:

Միւս կարելու յատկանիշը ճակատագրի նկատմամբ ունեցած սարաֆական մօտեցումն է: Նա գտնում է, որ մարդն իր ճակատագիրն անկախ իր կամքից է կերտում: Հասարակական յարաբերութիւնների մէջ առկայ է պարտադրանքի խորհուրդ, որից մարդը չի կարող շեղուել երկու պատճառով. նախ՝ վախից, որովհետև կը պատժուի, իսկ երկրորդը՝ պարտքի գիտակցումից: Այս վերջինը ենթադրում է, որ մարդը գիտակցում է՝ իր առջև դրուած պարտքը ինքը պիտի փոխհատուցի: Որպէս կանոն, հանրային յարաբերութիւններն ունեն իրենց պարտադրանքը, իսկ մարդը հասարակութիւնից դուրս ապրել չի կարող: Հետևաբար Չիֆթէ-Սարաֆին հետաքրքրում էր միւս հարցը՝ որքանո՞վ են հասարակական յարաբերութիւնները խեղաթիւրում մարդկային հոգեբանութիւնը: Թոյլ, բայց տեսանելի՝ նորավիպագիրը այստեղ եւս եզակի դրսևորումներ է ցուցաբերում: Ըստ Սարաֆի՝ հասարակական յարաբերութիւնները կարող են խեղաթիւրել մարդու հոգեբանութիւնը, բայց ոչ ամբողջութեամբ: Պարտադրանքների այս տիրոյթում մարդկային հոգեկերտուածքը չի կարող դրսևորուել, քանի որ դրա ժամանակն ու հնարաւորութիւնը չունի, և մարդը մնում է անճանաչելի: Մարդը հասարակութեան մէջ ապրում է նրա ստեղծած նորմերով: Վերջիններս շատ դէպքերում կարող են չհասկացուել (յատկապէս հակադրուող յարաբերութիւնների դէպքում): Ոչ որ չի կարող իմանալ, թէ ինչ է կատարում մարդու ներաշխարհում: Այս դէպքում մարդու ներքին հոգեբանութիւնը մնում է ոչ թէ չկայացած, սա այլ խնդիր է, այլ չարտայայտուած: Ահա սա է պատճառը, որ Սարաֆին հետաքրքրում է ոչ թէ սիրոյ դրսևորումը, այլ այն հարցը, թէ այդ յարաբերութիւնների մէջ ինչպէս է արտայայտուում մարդկային վարքագիծը: Սարաֆը բնաւ չի ժխտում մեղքի գոյութեան փաստը: Մեղքը միշտ կայ, և մարդն իր վարքագծով չի կարող խուսափել մեղքից: Ըստ էութեան սա մարդու քրիստոնէական դաստիարակութիւնն է: Այն խորհուրդը, որ ոչ մի մեղաւոր չի պատժուում այնպէս, ինչպէս փոխհատուցում է անմեղը, Սարաֆին հասկանալի է: Նա իր ռեալիստական նորավէպերում ցոյց է տալիս մեղաւորութեան և անմեղութեան տեղը: Չիֆթէ-Սարաֆի առաջին նորավէպն արդէն իսկ մերկապարանոց է իր գաղափարի մէջ, բայց հեղինակն այդ նորավէպում առաջադրում է խղճի խնդիրը: Ըստ հեղինակի գեղագիտութեան՝ մարդը հասարակութեան

⁷ Տե՛ս Պետրոսեան Ե., Գրական դէմքեր, Օննիկ Չիֆթէ-Սարաֆ, Սովետ. գրող հրատ., Երևան, 1977, էջ 255:

մեջ չպետք է կորցնի խիղճը: Սարաֆն այս մասին խօսում է 19-րդ դարի 90-ականներին: Մի խնդիր, որի մասին յետագայում արդեն 20-րդ դարի 80-ականներին պիտի բարձրաձայնել Հրանտ Մաթևոսեանը: Մարդու մեջ պիտի յստակօրեն սահմանափակուած լինեն խիղճն ու խեղճությունը. ո՛չ խիղճը խեղճութեան տեղ կը ծախուի, ո՛չ էլ խեղճությունը խղճի փոխարէն:

Ռեալիզմի դիրքերից Սարաֆը քննութեան է ենթարկում այս որակների տարբերութեան խորհուրդը: Ասումա՞ծի լաւագոյն արտայայտութիւններից մէկը նրա առաջին՝ «Ճերմակներով» (1901) նորավէպն է, որը հակակշռում է Երուխանի անդրանիկ նորավէպը՝ «Պապուկը»:

Առհասարակ Սարաֆի նորավէպերում ամուսինները տարեց մարդիկ են, իսկ կանայք գտնում են վայելքների տարիքում: Այսպիսի մի անհամապատասխան գոյգ է «Ճերմակներով» նորավէպի Լեոնիտա Խրիսթօն և նրա կինը: Չիֆթէ-Սարաֆը ընթերցողին է ներկայացնում Լեոնիտայի կերպարը: Յատկանշական է մի երեւոյթ: Սարաֆը կիրառում է արեւմտահայ նորավիպագիրների նախընտրած հնարանքներից մէկը. այնտեղ, որտեղ բարոյական նորմերի ուսումնասիրութեան խնդիր կայ, հերոսները հայեր չեն, այլ յոյներ կամ հրեաներ: Այս փաստը նկատելի է նաեւ Չօհրայի նորավէպերում («Արմենիսա», «Սառա»): Սարաֆը հաւատարիմ է մնում այն հերոսի ազգային պատկանելիութեան հոգեբանութեանը, որին նա կերտում է: Լեոնիտայի կերպարը տիպիկ յոյնի կերպար է:

Գենետիկօրէն ներքին բարեկրթութիւն ունեցող այս մարդը տառապում է իր խղճի և խեղճութեան արանքում: Պրուսայից Կ.Պոլիս ապրանք մատակարարող և բաւականին յաջող վաճառական Լեոնիտան համարձակութիւն չունի, որովհետեւ նրա մեջ նստած է ստրուկի խեղճութիւնը, որը յաղթահարել հնարաւոր չէ: Խեղճութեան անյաղթահարելիութիւնը պայմանաւորուած է ոչ միայն նրանով, որ դա նրա ազգային գենետիկան է, այլեւ հասարակութեան պարտադրանքը. Լեոնիտան ապրում է թուրքերի միջավայրում: Չիֆթէ-Սարաֆն իր նորավէպում ուղղակիօրէն չէր կարող խօսել թուրքական իրականութեան մասին, բայց անուղղակիօրէն, գեղարուեստական նրբին եղանակներով ցոյց է տալիս Լեոնիտայի ողբերգութեան ակունքներից մէկը: Ըստ էութեան սա յաջողուել է Չիֆթէ-Սարաֆի նորավէպում: Նա ռեալիստօրէն կարողացել է կերտել սեփական երկրում, բայց ուրիշի տիրապետութեան տակ ապրող մարդու հոգեկերտուածքը:

Հեղինակն իր հերոսին (խօսքը Լեոնիտայի մասին է) տանում է կեանքի պայքարի ճանապարհով: Կերպարը, յաղթահարելով այս ճանապարհը, պիտի կարողանայ ընտանիք ստեղծել, որի հոգսերն ինքն է հոգալու: Սակայն սա Լեոնիտայի բնաւորութիւնը լինելու հետ մէկտեղ նաեւ բնութեան մեջ գենետիկ բաժանման պարտադրանքն է: Չիֆթէ-Սարաֆի խորաթափանց աչքը տեսնում է, որ տղամարդու մօտ կայ մի բնագո, որն արթնանում է տարբեր ժամանակներում՝ ամուսնութիւնից առաջ կամ յետոյ, բայց չարթնանալ չի կարող: Այս ամէնից հեղինակը կատարում է հոգեբանական փոքրիկ գիւտեր, յայտնաբերում է իրողութիւններ, որոնք կան հասարակութեան մեջ, բայց տեսանելի չեն: Հասարակութեան պարտադրած խեղճութիւնը թոյլ չի տալիս քայլ կատարելու դէպի ամուսնութիւն: Վաճառականի խղճի և խեղճութեան միջեւ միջնորդ է հարկաւոր, որպէսզի խեղճութիւնը նահանջի և թոյլ տայ ընտանիք ստեղծել: Վերջապէս Լեոնիտան ամուսնանում է մէկի հետ, բայց այդ ամուսնութիւնը ոչ մի լաւ բանի չի յանգեցնում: Չարմանալի անտարբերութիւն է առաջանում կնոջ մօտ: Լեոնիտայի կինը, առանց հասկանալու մարդու հասարակական դիրքի խնդիրը, անխղճօրէն մսխում է ամուսնու՝ դժուարութեամբ ստեղծած և կուտակած փողերը: Լեոնիտան խեղճութեան մեջ տառապում է պարտքի զգացումից: Մահանալուց առաջ «... հիւանդը փափագ յայտներ էր, որ իր գործը շարունակեն իր տղու համար, իր եղբորը ձեռքով՝ որ գործէն կը հասկնար, և վաճառական ամենիքաւորներուն հետ համաձայնութեան մը գալով, կամաց-կամաց պարտքերը վճարուէին, որպէսզի ինքն ալ հանգիստ սիրտով մեռնի»⁸: Սարաֆը գոյների ներկայացման առումով, իսկապէս, նկարագրութիւնների վարպետ է:

⁸ Չիֆթէ-Սարաֆ Օ., Երկեր, Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1981, էջ 22:

Հիւանդ Լեոնիտան բանտարկեալի կարգավիճակով է գոյութիւնը քարշ տալիս տան վերնայարկում. «Անկողնին սնարին կողմը, փայտէ հաստ բիր մը կը սպասէր, զոր դժուարով կը վերցնէր ու գետնին կը զարնէր, սպասուհին կանչելու համար, որ նագով կու գար վեր, հաց ու ջուր բերելու համար»⁹: Այս ողորմելի իրավիճակում հիւանդի աչքերի առաջ աւելի վառ է գծագրուում նրա երազանքը: Նա անասելի ցանկութեամբ ուզում է տեսնել իր տղային, որը վաղուց արդէն հեռացել է հօրից: Ամուսնու մահանալու փաստն անգամ չէր խանգարում կնոջը, որպէսզի վերջինս «մեղքոտ յանդգնութիւնով մը» կրկնէր. «Իրաւ, որ շաբաթ մը որբեւայրի չեմ կրնար մնալ...»¹⁰:

Յատկանշական է, որ բոլոր դէպքերում կանայք անուն ունեն: Սակայն այս դէպքը բացառութիւն է. Լեոնիտայի կինը անուն չունի: Գրողն ըստ էութեան գնացել է բաւական դաժան լուծման ճանապարհով. նորավիպագիրն ստեղծում է կնոջ ընդհանրական տիպ: Չնայած նրան, որ այս հարցը փոքր-ինչ վիճայարոյց է, բայց, այդուհանդերձ, դրա մէջ ճշմարտութեան չափաբաժինը մեծ է:

Ռէալիստ Չիֆթէ-Սարաֆին հետաքրքրում էր ոճի և պատժի հիմնախնդիրը: Ըստ նրա՝ չկայ որեւէ ոճիր, որ չունենայ իր պատիժը: Վերջինս կարող է երեւալ կամ չերեւալ, ի յայտ գալ խղճի խայթի արթնացմամբ և այլն:

Լեոնիտայի մահից յետոյ պատրաստութիւններ էին տեսնում կնոջ առաջիկայ ամուսնութեան համար: Սակայն յաջորդ Կիրակի օրը «ճերմակ դագաղ մը դուրս կը հանէին Լեոնիտայի տունէն»¹¹: Լեոնիտայի յանդուգն կնոջն էին թաղում ճերմակ զգեստով: Փաստօրէն կատարուել էր կնոջ երազանքը: «Ճերմակներ պիտի հագնէր երկանը մեռնելէն ետքը, անանկ էր ըսեր»¹²: Իհարկէ, չհագաւ, բայց «հագցուցին»:

Ամուսնու նկատմամբ պարտքի գիտակցումը ոչ մի բիծ կարծես թէ չի թողել կնոջ հոգում: Թէ՛ ներսից, թէ՛ դրսից նա ճերմակ է, բայց մահուան ժամանակ ճերմակ է միայն դուրսը. մնացել է միայն հագուստների ճերմակութիւնը: Այս նորավէպն իր տեսակի մէջ հասարակ պատմութիւն է, բայց ներքին ենթաշերտերի մէջ հեղինակը փորձում է մարդու մէջ արթնացնել մարդկային որակները: Եթէ Երուխանը իր համապատասխան նորավէպերում («Թաշկինակը», «Պապուկը», «Մեռելներուն ջրկիրը») ցոյց է տալիս մարդկային յարաբերութիւնների ներսում անեղծ մնացած կատարելութիւնները, սպա Չիֆթէ-Սարաֆն ապացուցում է, որ նոյնիսկ ապահով ապրելակերպի մէջ արժէքներ կան, որոնք միշտ ենթարկուում են եղծման և ոչնչանում են:

Ընտանեկան հաւատարմութիւնը եղել է գրականութեան հիմնախնդիրներից մէկը: Սկսած Շեքսպիրի «Օթելլոյից» մինչեւ նորօրեայ գրականութիւն՝ այդ խնդիրը դիտարկուել է տարբեր տեսանկիւններից:

Սարաֆի նորավէպերում ի յայտ են գալիս ծայրաբեւեռներ. մի դէպքում տեսնում ենք հարթ ընթացքով և երջանիկ աւարտով յարաբերութիւններ, իսկ միւսում՝ մարդկային հոգեբանութեան անհասկանալի դրսեւորումներ: Չիֆթէ-Սարաֆը սրանք քննում է՝ առանց խորանալու դրանց մէջ:

19-րդ դարավերջին դաւանանութիւնը դիտուում է կեանքի պարտադիր նորմ, ինչն էլ մարդու բարոյականութեան սարաֆական ըմբռնումն է, այլ խօսքով՝ մարդը, իր կատարած մեղքը իրենից վանելով, փորձում է արդարացնել իրեն հասարակութեան մէջ:

Չիֆթէ-Սարաֆն ստեղծում է մի քանի նորավէպեր՝ «Բաժանումին գիշերը», «Աչքերը»,

⁹ Նույն տեղում, էջ 24:

¹⁰ Նույն տեղում, էջ 25:

¹¹ Նույն տեղում, էջ 26:

¹² Նույն տեղում, էջ 27:

«Նորավելայի նիւթ», որտեղ կատարում է մարդաբանական մի շարք բացայայտումներ: Սարաֆին հետաքրքրում էր մեղաւոր սիրոյ գաղափարը:

Նորավելայերից իւրաքանչիւրը որոշակի խնդիր է առաջադրում:

«Բաժանումին գիշերը» նորավելայում հեղինակը ցոյց է տալիս ոչ թէ սոցիալական խնդիրները, ինչը պահանջում էր ռեալիստական ուղղութիւնը, այլ դրանց արդիւնքները: Նա ներկայացնում է մեղաւոր սիրոյ խորհուրդը և վերջինիս մէջ՝ ամէնից առաջ արթնացումը: Յայտնի փաստ է, որ բոլոր սիրահարուած մարդիկ տագնապում են բաժանումի մտայնութիւնից: Նորավելայի հերոսուհին՝ Տատրակեանը, ամուսնացած է իրենից տարիքով մեծ մարդու հետ: Ամուսնու ժամանակաւոր բացակայութեան ընթացքում Տատրակեանի և իր հարեւանի միջեւ, որը հէնց ինքը՝ հեղինակն է, զգացմունք է առաջանում: Սակայն հանգամանքների պարտադրանքների արդիւնքում նրանք պետք է բաժանուեն: Բանաստեղծական նուրբ յուզաշխարհ ունեցող հերոսն իր բարդ յարաբերութիւնների մէջ կատարում է խոհափիլիսոփայական ընդհանրացում. «Այսպէս, յաճախ պարագաներ կան, որ զարմանալի կերպով կու գան իրենց ճշտայարմար ատենին և բռնապէս կ'ազդեն ճակատագիրներուն վրայ: Որով մեր բաժանումը միեւնոյն ատեն հասնող այդ երկու նամակներուն ժամանումովը ինքնին վճռուեցաւ, առանց ցնցումի, խռովանքի, առանց բացատրութեան ու արցունքի, առանց յուսահատութեան ու յուզումի, խիստ բնական բանի մը պէս»¹³:

Տարիքային այս հակասութիւնը, որն անընդհատ կրկնւում է նորավելայերում, 19-րդ դարի հայ գրականութեան կարեւորագոյն հիմնախնդիրներից մէկն է: Տարիքային զգալի տարբերութեամբ ամուսնութիւնները բնորոշ էին այդ դարաշրջանի հասարակութեանը: Այս իրականութեան մէջ Չիֆթէ-Սարաֆի մօտեցումը բոլորովին այլ էր: Ըստ նրա՝ եթէ տարիքային տարբերութիւնը մեծ է, և նրանց մէջ հոգեբանական միասնութիւն չկայ, ապա կիներ կարող է դաւաճանել: Այս դէպքում, սակայն, հարց է առաջանում. դա վայել՞ք է, թե՞ մեղք: Պարզ է, որ հասարակութեան առաջ դա մեղք է, բայց մարդու ներքին հոգեբանութիւնն զգո՞ւմ է այդ մեղաւորութիւնը, թե՞ ոչ: Եթէ մարդը նոյնիսկ չի էլ զգում այդ մեղաւորութիւնը, ապա, միեւնոյն է, կեանքը դնելու է իր ուղղորդիչ նշանները:

«Բաժանումին գիշերը» դառնում է հոգեբանական ենթաշերտերի բացայայտման փորձ: «Աչքերը», «Նորավելայի նիւթը» Սարաֆի լաւագոյն գործերն են: Այս նորավելայերում նա միեւնոյն խնդիրը քննում է տարբեր կողմերից:

«Աչքերում» նա կերտում է ուղղորդուած մարդու կերպար: Մաժակեան Նշան Էֆենտին իր ամբողջ կեանքն ապրել է առանց փորձութեան, ոչ մի բան չի շեղել իրեն, որպէսզի նա կայանայ կեանքում:

Առհասարակ մարդն ամբողջ կեանքում խուսափում է փորձութիւնից, սակայն երբ փորձութիւնը գալիս է, մարդը այդտեղ երկու տարբերակ ունի՝ կամ յաղթահարել այն, կամ կործանուել դրա ճանապարհին: Այսպէս, Մաժակեան Էֆենտին հրաշալի ընտանիք է կազմում: Նրա ընտանեկան կատարելութիւնը նոյնիսկ շարժում է հասարակութեան նախանձը: Եւ ահա փորձութիւնն իրեն երկար սպասեցնել չի տալիս. Մաժակեանը հանդիպում է տասնութամեայ Ալիս Սատափեանին: Վերջինիս խորաթափանց աչքերն ուղղակի գերում են Մաժակեանի սիրտն ու հոգին: Մեղաւոր սէր է ծնւում Մաժակեանի սրտում: Նա ամէն ճիգ գործադրում է այդ զգացմունքից ազատուելու համար, որովհետեւ չէր ուզում մեղանշել ընտանեկան յարկի առաջ:

Չիֆթէ-Սարաֆին իր հերոսին տանում է փորձութեան յաղթահարման դժուարին ճանապարհով: Նրա մէջ առաջացած կապը վերածւում է բուռն սիրոյ, Սարաֆի ըմբռնումով՝ մեղաւոր սիրոյ: Դէպքերն այնպէս են դասաւորւում, որ Ալիսը պիտի երեխայ ունենայ: Այս դէպքում Մաժակեանը կանգնում է լուրջ հարցի առաջ՝ ինչպէ՞ս վարուել:

¹³ Նոյն տեղում, էջ 52:

Հեղինակը այստեղ եւս դիմում է նորավիպագրութեան փորձին (սա կիրառել էր նաեւ Թ. Ծիշմանեանը «Գարնան մի ասուպ» նորավէպում): Մաժակեանը նամակ է գրում իր կնոջը, որտեղ նշում է, որ ինքը մեծ մեղք է գործել և ուրիշ կերպ չի կարող վարուել. «Այդ աչքերուն կարելի չէր դիմանալ, անոնք գրաւեցին, կապկպեցին զիս և ես չէի կրնար անձնատուր չըլլալ... ա՛խ, այն աչքերը»¹⁴:

Այսպէս, Մաժակեանը հեռանում է կնոջից և երեխաներից: «Երկու փախստական սիրահարներ» «մարդերէ հեռու քաշուած» ապրում են միասին: Ռեալիստ հեղինակը Մաժակեանի կնոջ՝ Հերմինէի համար հեշտ լուծում է գտնում՝ «կամաց-կամաց հատնելով, օր մըն ալ շիջաւ անշուկ»¹⁵: Իսկ ահա Ալիս Մատափեանը վայելում է կեանքը:

Այս դէպքում եւս կեանքը կատարում է իր ուղղորդիչ դերը: Երեք տարի յետոյ գեղանի Մատափեանը վաճառատանը հանդիպում է մի երիտասարդի, որն ունէր այնպիսի գերող աչքեր, ինչպիսին Ալիսինն էին: Ահա վերջինս տարւում է մարդու ներսը քայքայող այդ աչքերով և Մաժակեանին պատասխանում է վերջինիս ձեռով: Մաժակեանը նամակում կարդում է. «Այս է ճակտիս գիրը, որուն դէմ չեմ կրնար մարտնչիլ»¹⁶:

Ալիսը հեռանում է իր աղջկայ և այդ երիտասարդի հետ: Արդեօք աչքե՛րն էին մեղաւոր, թէ այդ աչքերի նկատմամբ ունեցած ընկալումները՝ դժուար է ասել: Կեանքը մարդուն տարել է փորձութեան, իսկ վերջինս չի դիմացել դրան: Այն, ինչ մարդը ուրիշին արել է, նոյնութեամբ վերադառնում է իրեն: Ըստ էութեան այստեղ յստակօրէն գործում է աստուածաշնչեան այն ըմբռնումը, որի համաձայն՝ ուրիշին չպէտք է անել այն, ինչ որ չենք ուզում, որ մեզ անեն:

Զիֆթէ-Սարաֆի այս նորավէպերից ակնյայտ է դառնում, որ մեծ արթնացումը յանգեցնում է փորձութեան հանդիպելու պարտադրանքին: Առանց փորձութեան արթնացում չի կարող լինել:

Ի հակադրութիւն այս նովելների՝ Մարաֆը բերում է մարդկային այն տեսակը, որը հոգեբանօրէն այդքան էլ համոզիչ չէ: Անհամոզիչ է, որովհետեւ հասարակութիւնն իր ազդեցութիւններով դուրս է այդ մարդկանց յարաբերութիւնների դաշտից: Սա քիչ հաւանական է, եթէ չասենք՝ ուղղակի անհաւանական: Այս առումով հեղինակի հետ համաձայնելը փոքր-ինչ դժուար է: Սակայն նրա նկատած այդ քիչ հաւանականը գոյութիւն ունի հասարակութեան կեցութեան մէջ:

«Մեծ «ԱՅՈ»-ն» նորավէպում Զիֆթէ-Սարաֆն առաջադրում է գոյգերի փոխարարութեան խնդիրը: Նա ներկայացրել է ըմբռնումներով իրարից տարբեր մարդկանց՝ Լեւոնին և Արաքսիին: Նրանց մէջ ծնուած սէրը հարցման խորհուրդն ունի: Հեղինակը լաւ գիտի սիրոյ դրսեւորման ոյժը և կարողանում է ստեղծել հովուերգական պատմութիւն, որն առաջին հայեացքից թւում է, թէ ռեալիստական չէ:

Հարցն այն է, որ մենք յստակ չենք գիտակցում ռոմանտիզմի և ռեալիզմի սահմանը: Առանց ռոմանտիկայի չի կարող լինել ինչպէս կեանք, այնպէս էլ գրականութիւն: Այսպէս, ահա Լեւոնի և Արաքսիի փոխարարութիւններում առկայ է մի պայծառ ռոմանտիկա:

Լեւոնն իր սիրած աղջկան անընդհատ հարցնում է. «Երջանի՞կ ես...»¹⁷: Արաքսին չի կարողանում յստակ պատասխանել տղայի հարցին: Զիֆթէ-Սարաֆն այս նորավէպում համադրում է իր հերոսների հոգեբանութեան ընդհանրութիւնները: Թէեւ այս պատմութիւնն իրական է, այնուամենայնիւ նորավէպի հովուերգական վերջաբանն այդքան էլ համոզիչ չէ: Քիչ հաւանական, բայց հնարաւոր դէպքերը նորավէպերի կարեւորագոյն յատկանիշներն

¹⁴ Նույն տեղում, էջ 70-71:

¹⁵ Նույն տեղում, էջ 71:

¹⁶ Նույն տեղում, էջ 73:

¹⁷ Նույն տեղում, էջ 30:

են: Հեղինակը չի ստեղծում միտումնաւոր կերպարներ: Նա նկատում է այնպիսի անհատների, որոնք հասարակութեան մէջ քիչ են, բայց, այդուհանդերձ, կան: Այս նորավէպն ունի շատ դիպուկ վերնագիր՝ «Մեծ «ԱՅՈ»-ն»: Լեւոնն ու Արաքսին ամուսնանում են: Խորանի առաջ Լեւոնը եւս մէկ անգամ հարցնում է՝ երջանի՞կ է Արաքսին: Այս հարցմանը զուգադիպում է նաեւ քահանայի հարցը: Հնչում է Մեծ «ԱՅՈ»-ն, և ստացւում է մի որոշակի հակադրութիւն, ըստ որի՝ թէ կա մեծ «այո»ն, ուրեմն դա աստուածային «այո»ն է:

Մարդն իր ամբողջ կեանքն ապրում է կատարելալին հասնելու ձգտմամբ: Սակայն կատարելալը դուրս է մարդուց: Մարդն անընդհատ մտածում է հոգու փրկութեան մասին: Հոգին փրկւո՞ւմ է, թէ՛ ոչ, սա դառնում է երկրորդական հարց: Հենց այդ ձգտումն է, որ մարդուն մարդ է պահում: Այս հարցը եւս հետաքրքրում է Չիֆթէ-Սարաֆին: Սա պատահական չէր, որովհետեւ նա շատ լաւ էր ուսումնասիրել Գրիգոր Նարեկացուն և նրա բազմաբովանդակ ստեղծագործութիւնը: Հոգիների փրկութեան ճանապարհն իր «Մատեան ողբերգութեան» պոէմում հարթել էր Մեծ ապաշխարողը:

Առհասարակ, մահը դժուար են տանում նկարիչները, երաժիշտները և բանաստեղծները: Մահը նրանց համար ամեղծուած է: Հեղինակը հոգիների փրկութեան հարցը քննում է ռեալիզմի դիրքերից: «Հոգիներու փրկութիւն» նորավէպում Չիֆթէ-Սարաֆը կերտել է բժշկի կերպար: Սա պատահական երեւոյթ չէ. նա լաւ գիտէր, որ բժիշկների համար մահը սովորական բան էր. նրանք ամէն օր տեսնում էին մահուան դէպքեր:

Այս նորավէպի սիւժէն զարգանում է կաթոլիկ և առաքելական գաղափարների բախումների հիմքի վրայ, որը մեր իրականութեան մէջ արդէն քննուել էր (յիշենք Գրիգոր Զօհրապի «Արմենիսան»):

«Հոգիներու փրկութիւն» նորավէպի բժիշկ Սերոբեանը հարուստ ընտանիքի գաւակ է: Ծնողները նրան ապահովել են լաւ կրթութեամբ: Սովորել է Փարիզում: Սակայն հեղինակին դա չի հետաքրքրում: Սերոբեանը հակադիր կերպար է: Ի տարբերութիւն մեր միւս գրողների, որոնց մօտ հարուստ տան գաւակները միշտ ձգտում են դէպի վայելքների աշխարհ, Սարաֆն այլ վերաբերմունք ունի իր կերպարի նկատմամբ: Բոլոր մեծ «տօքտորների» (բժիշկ) հիացմունքներին արժանացած Սերոբեանի հոգեբանութիւնը բացայայտում է ճանապարհորդութեան ընթացքում: Ծովի անեզրութիւնը, նաւի տատանումները և միայնակ վիճակը Սերոբեանին հնարաւորութիւն են տալիս մտածելու իր կեանքի մասին: Հերոսը զգում է, որ իր կեանքն անցել է միապաղաղ: Անընդհատ ուսման մասին է մտածել: Նաւի վրայ նրա մէջ արթնանում է սիրոյ զգացմունքը, և Սերոբեանը տեսնում է, որ կեանքն ունի մի ուրիշ կողմ եւս, որն անելի հետաքրքիր է:

Չիֆթէ-Սարաֆը մարդկային փոխարարբերութիւններում նկատում է հոգեբանութիւնների ձեւաւորման ընթացքը, ինչն էլ նրա ռեալիզմի միւս կարեւոր յատկանիշն է, նաեւ առաւելութիւնը:

Սերոբեանի կողքին հեղինակը կերտում է միսիոնարուհու կերպար: Այստեղ Չիֆթէ-Սարաֆին հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք հոգիները փրկւում են միեւնոյն ձգտումներն ունեցող սրտերի՝ միմեանց ընդառաջ գնալու դէպքում, թէ՛ ոչ: Ծեննին, որը երդուեալ միանձնուհի է, ուշադրութիւն չի դարձնում Սերոբեանին, բայց, այնուամենայնիւ, զրոյց է ծաւալում երկու տարբեր աշխարհների մարդկանց միջեւ: Թէ՛ Սերոբեանը և թէ՛ Ծեննին մենակութեան սիրահարներ են: Սերոբեանը Փարիզում մնալու հնարաւորութիւն ունէր, բայց հրաժարուելով բարեկեցիկ կեանքից՝ գերադասել է վերադառնալ հայրենիք և այնտեղ կիրառել մասնագիտական իր հմտութիւնները: Ծանապարհորդութեան ժամանակ նրա մէջ սկսում է արթնանալ մեծ վայելքի ցանկութիւնը: Այստեղ Չիֆթէ-Սարաֆը նրբօրէն ցոյց է տալիս մարդու ներաշխարհային արթնացումը:

Ճեննիի և Սերոբեանի միջև ծաւալուած բանավէճը հեղինակը տանում է տեսակների հաշտեցման ճանապարհով, որը կարող է հեռացնել կամ հաշտեցնել նրանց: Նա կատարում է իրար ժխտող յարաբերութիւնների քննութիւն, որը մեր գրականութեան մէջ առաջին դէպքն է, երբ մարդաբանութեան ասպարէզում նման խնդիր է առաջադրուում:

Ռէալիստ Սարաֆը զարմանալի կարողութիւն է ցուցաբերում սիմվոլների հարցում: Սերոբեանը կարողում է Էմիլ Չոլայի գործերը¹⁸, իսկ Ճեննիին՝ «Յո՛ւ երթաս»ը: Այս նորավէպում Չոլայի վէպերի յիշատակութիւնը ինքնանպատակ չէ. հոգիների **ճշմարտութեան** որոնումը ենթադրում է մեծ **աշխատանք**, իսկ ահա **արգասաւորումը** իրեն երկար սպասեցնել չի տալիս: Հերոսները գիտեն իրենց գաղափարների ժխտողականութիւնը: Երբ հասնում են Կ. Պոլիս, Սերոբեանը Ճեննիին խնդրում է «ճամփու ընկեր ըլլալ իրեն, մինչեւ իր ծննդավայրը»¹⁹:

Արթնացումը արդէն կատարուած է: Ճեննի Ուոքերը Սերոբեանին արդէն հետաքրքրում է: Չիֆթէ-Սարաֆը նորավէպի աւարտը հանգեցնում է այն ըմբռնմանը, որ եթէ հերոսուհին պիտի հոգիներ փրկի, ապա ինչո՞ւ դա չանի Սերոբեանի հայրենիքում: Կաթոլիկ և առաքելական համոզմունքների բախումն այստեղ չի նկատուում, որովհետեւ այդ հարցն արդէն երկրորդական է նրանց յարաբերութիւններում: Հեղինակին չի հետաքրքրում՝ այդպէս ճի՞շդ է, թե՛ սխալ, համոզի՞չ է, թե՛ ոչ: Առաջնային է դառնում այն ընդհանրացումը, ըստ որի, նախ պէտք է սեփական հոգիները փրկել, այնուհետեւ՝ ձեռնամուխ լինել ուրիշների հոգիների և մարմինների փրկութեան գործին: Նրանք ամուսնանում են: Սերոբեանը նախընտրում է գնալ ոչ թէ իրեն սպասուող խոստումնալից ապագայի ճանապարհով, այլ ուզում է կայանալ իբրեւ հոգի, իսկ կինը անկախ նրանից՝ կաթոլիկ է, թէ առաքելական եկեղեցու ներկայացուցիչ, քարոզում է աստուածային հոգու փրկութիւն: Ըստ Չիֆթէ-Սարաֆի՝ ներդաշնակութեան մէջ գտնուող հոգիները արդէն փրկուած են:

Նորավիպագիրն այս կառոյցի մէջ արդէն «Սպեղանին» նորավէպով ներմուծում է մէկ ուրիշ խնդիր: Նորավէպի հերոսը «համբաւաւոր գրագէտ» նորավիպագիր Տիրան Վիրապեանն է: Պատահական չէ, որ Սարաֆն իր այս նորավէպում հերոս է դարձնում մի գրողի: Ըստ էութեան հեղինակը կասկած ունէր իր ընթերցողի նկատմամբ: Հնարաւոր էր, որ ընթերցողը չընդունի իր այդ նորավէպը, քանի որ նա լաւ էր հասկանում, որ իր արծարծած թեման ու երեւոյթները հագուադէպ են պատահում կեանքում, ամէն տեղ չէ, որ կարելի է նման բան տեսնել: Չիֆթէ-Սարաֆը ուղղագիծ հոգեբանութեան նկարագրութիւն չի տալիս: Նա իր նորավէպերում ասպարէզ է բերում հոգեբանութեան անսովորութեան այն պատկերները, որոնք մարդու կողմից շատ յաճախ մնում են աննկատ. քննութեան է ենթարկում անսովորութեան խորհուրդը: Յանձին Վիրապեանի՝ ստեղծում է հակադիր կերպար: Վիրապեանը բաւական յաջողակ գրող է: Գրաքննադատները մեծ ապագայ են կանխատեսում այս գրողի համար: Սակայն հերոսն անընդհատ մտածում է, որ ինքը դեռ չի գրել իր կեանքի ամենակարեւոր վէպը, որը բեկումնային էր լինելու ստեղծագործական կեանքում: Սա գրողի հագուադէպ տեսակն է: Վիրապեանի խորին համոզմամբ՝ կեանքում ոչ մի նպատակ չի կատարում այնպէս, ինչպէս որ մարդն է ծրագրում: Երազանքների իրականացման ճանապարհին մի բան գալիս և շեղում է ամէն բան: Լինում են դէպքեր, որ այդ շեղումները աւելի են մասնաւորեցնում մեր երազանքները: Փոքր հասակից դառնութիւններ տեսած այս գրողն իր վէպի մասին նիւթ է որոնում: Օրերից մի օր ընկերներից մէկը Վիրապեանին հրաւիրում է իրենց տուն, որպէսզի վերջինս իր գրական կարծիքը յայտնէր այդ պարոնի գրած գործերի մասին: Ընկերոջ՝ «երեք տարի առաջ ամուսնացած և

¹⁸ Հատկանշական է, որ այս նորավէպում թվարկվում են **Է. Չոլայի** երեք աղմկահարույց գործերը՝ «Ճշմարտություն», «Աշխատանք» և «Արգասավորում»:

¹⁹ Նույն տեղում, էջ 49:

տարի մը առաջ այրիացած» քրոջ՝ Տիկին Շաքարեանի հետ հանդիպումը բաւական էր, որպէսզի խորաթափանց Վիրապեանը հասկանար այդ կնոջ տեսքով իրեն բաժին հասած փորձութեան խորհուրդը: Կարճ ժամանակ անց նրանք արդէն հանդիպում էին: Սակայն Վիրապեանը աստիճանաբար «կորսնցուց իր գուարթը և կատակասէր բնաւորութիւնը»²⁰:

Այս սովորական պատմութեան մէջ Չիֆթէ-Սարաֆը նուրբ դիտարկում է անում. «Կասկածները սարդեր էին բանաստեղծին կոյս ու սիրատոչոր սիրտին մէջ, ուր նախանձը, ցեղային անդիմադրելի ու մոլեկան նախանձը, թունաւորող ու խելայեղիչ նախանձը բոյն էր դրեր»²¹:

Կասկած կար այն հարցում, որ Տիկին Շաքարեանը դաւաճանում է իրեն: Եւ այս բոլոր տուայտանքներից յետոյ (նոյնիսկ ինքնասպանութիւն էր անցկացրել մտքով) Վիրապեանը գիտակցում է, որ իր մեծ սիրոյ ողիսականը իսկական վէպի նիւթ է: Ստացում է այնպէս, որ կեանքի ինչ-որ հատուած մեզանից դուրս է: Այդ հատուածը մենք կա՛մ տեսնում ենք, կա՛մ՝ ոչ: Վիրապեանը տեսաւ, որովհետեւ գրող էր: Ներաշխարհային արթնացումը դարձաւ նրա փրկութեան միջոցը: Նա երեք ամիս շարունակ աշխատում է իր նոր վէպի վրայ: Ամբողջ կեանքում երազած վէպը գրելու ժամանակ Վիրապեանը նկատում է, «որ սիրոյ իր խորունկ վերքը մասամբ սպիացեր ու իր անհնարին ցաւը մինչեւ մէկ աստիճան բուժուելու ճամփայ էր բռներ»²² : Չիֆթէ-Սարաֆը գեղագիտօրէն կարողանում է ցոյց տալ գրողի հոգեբանութեան ենթաշերտերում կատարուող բեկբեկումները, որոնց արդիւնքը պիտի լինէր հերոսի «նորածին» և հասարակութեանը լուրջ առաջընթաց բերող վէպը:

Այսպիսով, համեմատական քննութեան արդիւնքում տեսանելի դարձան ռէալիստ Չիֆթէ-Սարաֆի նորավէպերի իւրայատկութիւնները: Նա էապես տարբերուեց ինչպէս նախորդ, այնպէս էլ իր ժամանակի նորավիպագիրներից: Յանձին Չիֆթէ-Սարաֆի՝ նորավիպագրութիւնը ծրագրային հիմնաւորում ստացաւ գրականութեան մէջ: Այս արձակագրին աւելի շատ հետաքրքրում են մարդու ներաշխարհային տեղաշարժերը, մանրուք թուացող հասարակական արտառոց երեւոյթները, որոնք ձեւաւորում էին ժամանակի բարոյահոգեբանական ըմբռնումները: Այս իմաստով նա լրացրեց այն բացը, որը կար ժամանակի արեւմտահայ նորավիպագրութեան մէջ: Իր նորավէպերում առաջադրելով գրական յստակ ծրագիր՝ Չիֆթէ-Սարաֆը մէկ աստիճանով եւս բարձրացրեց արեւմտահայ նորավէպը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
ՏԱԹԵԻԻԿ ՄԵՐՉԱՆՆԵԱՆ
ՌԷԱԼԻԶՄԸ ՕՆՆԻԿ ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՖԻ ՆՈՐԱՎԷՊԵՐՈՒՄ

Բանալի բառեր - ռէալիզմ, նորավէպ, մարդագիտութեան հիմնադրոյթներ, հասարակական նորմեր, բարոյականութիւն, մեղաւոր սէր, հոգեկերտուածք, խղճի և խեղճութեան խնդիր, ճակատագիր, մարդկային վարքագիծ, փորձութեան առկայութիւն, հոգեւոր արթնացում:

Մեր նպատակն է քննել և բացայայտել ռէալիզմի բազմակողմանի դրսեւորումներն Օննիկ Չիֆթէ-Սարաֆի նորավէպերում: Հայ գրականագիտութեան մէջ այս հեղինակի նորավէպերը քիչ են ուսումնասիրուել: Սոյն ուսումնասիրութիւնն ի յայտ է բերում հետաքրքիր առանձնայատկութիւններ, որոնք, յիրաւի, կարելոր են արեւմտահայ՝ աւելի քան երեսուն տարիների նորավիպագրութեան պատմութեան համար:

Քննութեան ենթարկելով հնարաւորինս շատ նորավէպեր՝ ցոյց ենք տուել, որ այս

²⁰ Նոյն տեղում, էջ 61:

²¹ Նոյն տեղում:

²² Նոյն տեղում, էջ 64:

հեղինակը անկրկնելի բացայայտումներ է կատարում բարոյահոգեբանական և հասարակական բազմաթիւ արտառոց երեւոյթների, ինչպէս նաև մարդկային վարքագծի, մեղաւորութեան և անմեղութեան ընկալումների հարցերում:

АНОТАЦИЯ

ТАТЕВИК МЕРДЖАНЫАН

РЕАЛИЗМ В НОВЕЛЛАХ ОННИКА ЧИФТЕ-САРАФИ

Ключевые слова: реализм, новелла, основы антропологии, социальные нормы, этика, грешная любовь, психика, проблемы совести и жалости, судьба, человеческое поведение, наличие испытания, духовное пробуждение.

Наша цель исследовать и обнаружить всесторонние проявления реализма в новеллах Онника Чифте-Сарафи. Новеллы этого автора в армянской литературе мало изучены. Данное исследование проявляет интересные своеобразия, которые важны в истории западноармянской новелистики. Исследуя по-возможности много новелл, мы показали, что автор делает уникальные открытия в области различных нравственно-психологических и социальных несуразных явлений, а также в вопросах восприятия виновности и невинности человеческого поведения.

SUMMARY

TATEVIK MERJANYAN

THE REALISM IN ONNIK CHIFTE-SARAF'S NOVELS

Keywords: realism, novel, anthrological directions, social norms, morality, guilty love, psychic, problem of conscience and pitiable state, fate, human behavior, availability of temptation, spiritual awakening.

Our aim is to discuss and reveal the versatile manifestations of realism in Onnik Chifte-Saraf's novels. The novels of this author have been less xplored in the Armenian literary criticism. The following research educes interesting details which are really important for the West-Armenian story that has more than thirty years' history. By discussing many novels, we state, that this author did incredible revelations in various psychological and social problems, as well as in human behaviour, and perception of culpability and innocence.

**ԿԱՄԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԼԵՒՈՆ ԲԱՃԱԼԵԱՆԻ
«ՄԻԶԵՆԻԻ ՎԱՐՊԵՏ» ՆՈՐԱՎԷՊՈՒՄ**

ՏԱԹԵԻԿ ՄԵՐՉԱՆԵԱՆ

Երևանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի
Ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արեւմտահայ նորավիպագրության մէջ ԼԵՒՈՆ Բաշալեանն այն եզակի վարպետն է, որը, հասարակական-քաղաքական կեանքի խեղճութեանն ու թշվառութեանը զուգընթաց, ներկայացնում է նաեւ մարդու կամքի դրսեւորման կերպերն այդ տարածութեան մէջ: «Միւզենիի վարպետ» նորավէպում հոգեբանական խնդիրների քննութիւնը և մարդու հոգեկերտումաձքի ձեւաւորման սոցիալական ազդակները ուսումնասիրում են միեւնոյն հարթութեան վրայ: Այլ խօսքով՝ Բաշալեանը խնդրոյ առարկայ նորավէպում ներկայացնում է գրական յստակ հարցադրում՝ որքանո՞վ է սոցիումն իր բոլոր դրսեւորումներով ազդում մարդու հոգեբանութեան և կամային որակների ձեւաւորման վրայ:

Նրբագգաց մարդու, գեղագետի և նորավիպագրի մասին են վկայում հայ բեմի մեծ վարպետ Վահրամ Փափագեանի սրտից և հոգուց բխող յուշերը. «Այս արձակագիրը, որի գրչի տակ նախադասութիւնը ոսկերչի դժուարին արուեստով յղկուած աղամանդազարդ գոհարեղէն էր, առինքնող էր ոչ նրա համար, որ փաշայի պէս մի մարդ էր, ոչ էլ նրա համար, որ նրա ԼԵՒՈՆ անունը կենդանիների թագաւոր առիւծի աղաւաղումն էր, այլ նրա համար, որ ԼԵՒՈՆ Բաշալեանը էֆենդի էր: Պոլսոյ հրապարակի վրայ ուսերին սիւրտուկ և գլխին ֆես ունեցող հանդիպած իմպրլի յետոյքին կպցրած էժան տիտղոսով էֆենտի չէր նա, այլ այդ բառի, իր ծագումի հետ բերող իմաստով, Բիւզանդիոնից ասպատակ տանկին աւանդ մնացած յարգանքի և ակնածանքի տիտղոս էր...»¹:

Բաշալեանը, դժբախտաբար, յաճախակի չի ստեղծագործել: Այս գրողը, հանգամանքներից ելնելով, աւելի շատ տրւում էր հասարակական կեանքի յորձանուտին և Մուրացանի նման քիչ ժամանակ էր յատկացնում իր սիրելի գրականութեանը: Բայց Բաշալեանը, լինելով գրականութեան մարդ, նոյնիսկ իր փոքրածաւալ ստեղծագործութեամբ գնում էր դէպի արուեստն ու գրականութիւնը: Վերջինս նրա համար ոչ թէ զբաղմունք, այլ կենսական պահանջ էր: Այս իմաստով Գ. Ծախինեանը իրաւացիօրէն գրում է. «Ասուպային է իր ներկայութիւնը մեր գրականութեան մէջ, կարճատեւ՝ աստղի անցքին պէս, բայց նաեւ փայլուն ու լուսատու անոր նման»²:

Հասարակութիւնը որքան էլ փորձում է շտկել իր օրէնքները, ընդլայնել ընկալումների շառաւիղը, միեւնոյն է, նա շարունակում է մնալ աւանդական մտածողութեան տարածութեան մէջ: Յատկանշական է, որ իրողութիւնները մարդկային կեանքի ընթացքում կրկնում են: Այլ կերպ ասած՝ մարդու և նրա հոգեբանութեան դրսեւորումները սոցիալական կեանքի հետ ունեցած բախումներում գրեթէ նոյնն են: Այս բախումների և մարդու կամային կայուն յատկանիշների ամբողջական ուղեծիրն է ընդգծւում Բաշալեանի «Միւզենիի վարպետ» նորավէպում: Ակնատու է այս հեղինակի համակրանքը սոցիալապէս մերժուած մարդկանց նկատմամբ: «Բաշալեանի գործերուն հերոսները ընդհանրապէս ժողովրդական խաւէ ներկայացուցիչներ են, որոնց ամէնքն ալ թէպէտ աղքատ, բայց պատուախնդիր, աղքատու-

1. Փափագեան Վ., Մրտիս պարտքը, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 133-134:
2. Բաշալեան Լ., Երկեր, Անթիլիաս, Տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1994, էջ 9:

թեան մէջ իսկ հպարտ մարդեր են»³, գրում է Հ. Պարիկեանը:

«Կարինէն Պոլիս պանդխտած» և ոչնչի չհասած խահվեճի Յակոբ աղան իր ընտանիքին, որի «կրտսերագոյնին երեսն իսկ տեսած չէր դեռ», տեղափոխում է քաղաք, որ գոնէ այդ հարցում կորուստ չունենայ: Ըստ էութեան սա ընտանեկան երջանկութեան վայելքն է: Թւում է՝ ամէն բան կարգին է, սակայն կեանքը տհաճ անակնկալ է մատուցում. ընտանիքի հայրը մահանում է «ժանտատենդից»: Ակնյայտ է, որ նորավիպագիրը միտում չի ունեցել համոզիչ դարձնել մահուան այս խորհուրդը: Անժամանակ մահը ընդամենը միջոց է չպարտուողի տեսակը ցոյց տալու համար: Եւ այդ տեսակը ընտանիքի մայրն է՝ Մարիամ տուտուն: Ամուսինը, շատ լաւ ճանաչելով իր կնոջը, գիտի, որ Մարիամն ունի պայքարող, հեշտութեամբ չպարտուող և ցանձնուող եզակի բնաւորութիւն:

Չուտ սոցիալական խնդիրների խորացումը քննութեան մէջ հեղինակն այս նորավէպում կերտում է մարդկային անկոտրում բնաւորութիւն: Առաջնորդուելով գեղագիտական ուրոյն սկզբունքներով՝ նա շատ նուրբ է զգում մարդու մէջ տեղի ունեցող հոգեբանական փոփոխութիւնները, որոնք ենթադրում են կամային որակների ձեւաւորում և զարգացում: Բաշալեանի մօտեցմամբ մարդկային բնաւորութիւնները կոփում և ամրակայւում են փորձութիւնների ճանապարհով: Եթէ կայ փորձութիւն, և մարդը առանց յուսահատութեան յաղթահարել է այն, ապա նա կայուն ու կոփուած բնաւորութիւն ունի: Հակառակ դէպքում մարդը դատապարտուած է կործանման:

20-րդ դարասկզբի արեւմտահայ գրականութեան մէջ լայն տարածում ունէր, այսպէս կոչուած, պարտուածների տեսակի միտում, այսինքն՝ հեղինակները որոնում էին պարտուողի և չպարտուողի (դիմացկուն ու յաղթող) տեսակները: «Պարտուածներ» ընդհանուր խորագրով մի պատմուածաշար ունի Աւետիս Ահարոնեանը: Գրականագիտութեան կողմից քիչ ուսումնասիրուած և գրասէր հասարակութեանը պակաս յայտնի այս գրողը իր հարուստ երեւակայութեամբ և իւրայատուկ լեզուամտածողութեամբ աւելի շատ խօսում է պարտութեան մտքի հետ հոգեբանօրէն հաշտուող տեսակների մասին:

Այլ է բաշալեանական մօտեցումը: Ամուսնու մահից յետոյ Մարիամը «հինքզինքը ժողվեց»: Գաւառաբնակ կինը յանկարծ հասկանում է, որ ինքը չի կարող պահել իր չորս զաւակներին, եթէ յոյսը դնի ինչ-որ մէկից սպասուող օգնութեան վրայ: Գիւղաշխարհի աշխատանքներին սովոր կինը, գիտակցելով և իրեն վերագրելով իր երեխաներին յուսախար չանելու չգրուած իրաւունքը, քաղաքում յարմարում է լուացարարուհու աշխատանքին:

Հերոսների այս տեսակը բազմակողմանի դիրքերից է քննում արեւմտահայ հետագայ նորավիպագրութեան մէջ: Լուացարարուհու բարոյահոգեբանական դրսեւորումների կերպերն ու փոփոխութիւնները նորավէպի ժանրաձեւում իր դիտողակութեամբ լաւագոյնս նկատել է Երուխանը: Վերջինս գտնում է, որ հասարակական անարդար կեանքում կատարուող մեծ յեղաբեկումները չեն կարող փչացնել մարդու հոգեկերտուածքային անխաթար կառուցուածքը: Ըստ Երուխանի՝ այդ հոգեբանութիւնը դրսեւորում է ինչպէս կեանքի յատակն ընկածների, այնպէս էլ ամենաբարձրերում ապրողների մօտ: Օրինակ՝ «Պապուկը» կամ «Մեռելներուն ջրկիրը» «Թաշկինակի» հետ զուգակշռում տեսանելի է, որ բարձր խաւի մէջ եւս կան հոգեբանական անխառն արժէքներ:

Ըստ էութեան, սխալ է Երուխանի նորավէպերը սահմանափակել լուացարարուհիներով և նաւավարներով: Արձակագիրն ուշադրութեան է արժանացրել այդ խաւին, որովհետեւ հոգեբանական ամենամեծ փորձութիւններն ու դրսեւորումները ի յայտ են գալիս հէնց այդ խաւերի մէջ: Մարդը, չդիմանալով սոցիալական կեանքի ճնշումներին, գնում է խեղման ճանապարհով: Երուխանը ուզում է հակադրուել այս մօտեցմանը: Մարդը՝ իբրեւ հոգեկերտուածքային տեսակ, ունի հոգեբանական փայլուն որակներ, որոնք սոցիալական

3. Պարիկեան Հ., Լեւոն Բաշալեան, Հպեպ, 1970, էջ 127:

դաշտում չեն կարող աղաւաղուել և վերանալ: Մոցիալական յեղաբեկումները կարող են ազդել մարդու վարքաբանության վրայ: Առհասարակ, մարդու վարքը կեցութեան ձեւերի մէջ փոփոխութիւններ կարող է ունենալ, բայց հոգեբանութիւնը փոխուել չի կարող: Եթէ Երուխանը ներքնախաւերի մէջ փնտրում է հոգեբանական, ապա Բաշալեանը՝ կամային որակներ:

Հայի ազգային տեսակը ներկայացնելիս Բաշալեանը դիմում է հրապարակախօսական ոճին: Այս հեղինակը ազգային հոգեկերտուածքի մէջ առանձնացնում է զարմանալի մի մօտեցում կրթութեան նկատմամբ: Անժխտելի փաստ է, որ հայերը թէ՛ իրենց կրթական մակարդակով և թէ՛ մշակութային զարգացումով առաջադէմ քաղաքացիներ էին Օսմանեան կայսրութիւնում: Մեծ տղային՝ Մկրտիչին, «թաղային վարժարանէն» հանելու փաստը «թէ՛ մօրը եւ թէ՛ տղուն ծանր եղաւ», որովհետեւ «Մարիամ տուտուն, առանց որոշ գաղափար մը ունենալու կրթութեան վրայ, կարծիք կազմած էր, թէ իր գաւակը գրել-կարդալ գիտնալով միայն պիտի կրնար ճշմարիտ նեցուկ մը ըլլալ իր ընտանիքին»⁴: Մակայն այլընտրանք չկայ. առաջադրուած է երկու տարբերակ՝ տուեալ օրը չմեռնել, թէ՛ հետագայ կեանքը քիչ թէ շատ բարւոք ապրել: Բոլոր առումներով առաւել շահեկան էր առաջին տարբերակի ընտրութիւնը: Դպրոցից հեռանալուց յետոյ տղան արագօրէն իւրացնում է «եագմանի» (խանութի աշկերտ) պարտականութիւնները:

Ուշագրաւ են արեւելահայ և արեւմտահայ գրողների ընկալումների և մօտեցումների տարբերութիւնները: Արեւելահայ գրողներից շատերը, ինչպէս, օրինակ, Ռ. Պատկանեանը և Շիրվանզադէն, այս երեխային կը տանէին առեւտրական կեանքի մէջ կեդոտոտելու ճանապարհով, այսինքն՝ տղայի հոգեկերտուածքը կը փոխուէր առեւտրի և փողի հետ յարաբերուելիս. նա կը դառնար վաշխառու:

Արեւելահայ գրողներից թերեւս միայն Բաֆֆին է մի փոքր այլ կերպ մտածում «Ոսկի արաղաղում»: Մարդը չի կարող ապականուել առեւտրական աշխարհում: Այլ բան է, որ վաճառականութիւնը հնարաւոր է չստացուի, բայց մարդը, ելնելով իր տեսակից, կարող է անաղարտ մնալ:

Բաշալեանը չի գնում այս ճանապարհով. նրան չի էլ հետաքրքրում, թէ փողի հետ յարաբերուելիս Մկրտիչն ինչ է դառնում, որովհետեւ վերջինս Յակոբ աղայի և Մարիամ տուտուի գաւակն է: Նրանց ընտանիքում միայն աշխատելով են ապրել, հետեւաբար իրենց տասներեքամեայ որդին այս առեւտուրն ընկալում է ոչ թէ փող վաստակելով հարստանալու, յղփանալու և այլասերուելու ճանապարհ, այլ աշխատելու և վարձատրուելու պարզ յարաբերութիւն:

Յատկանշական է նաեւ հաշուարկի՝ արեւելահայ և արեւմտահայ գրողների տարբերութիւնները: Ակսել Բակունցի Վասիլը («Տիգրանուհին») հաշուարկով ապրող մարդ է: Վերջինս ողբերգական կերպար է, որովհետեւ մարդու ձեռքով ստեղծուած օրէնքներն ու յարաբերութիւնները նրա մէջ անմնացորդ ոչնչացրել են մարդկային ամէն մի յատկանիշ: Հոգսը ծնում է մարդու հետ, այսինքն՝ դրուած է հոգսի և պարտքի տարբերութեան խնդիրը: Վասիլի մէջ ամուր նստած է ապրելու հոգսը: Մի կողմից դրուած է ապրելու անկարողութիւնը, որովհետեւ կեանքն այդ հնարաւորութիւնը չի տալիս, իսկ միւսից՝ ապրելու պարտադրանքը, որը նաեւ պարտք է Վասիլի համար: Նա սկսում է հաշուել ամէն ինչ, անգամ քրոջը՝ Տիգրանուհուն տուած պարտքը: Վերջինս հիւժուում և մահանում է, իսկ Վասիլի մէջ մնում է ոչ թէ քրոջ կորստի ցաւը, այլ հոգսն ու պարտականութիւնը: Հեղինակի անթաքոյց հակակրանքի ծանրութեան էպիկենտրոնը նկատելի է այդ նորավէպի վերջին տողում.

«Պարտքից մնաց տասնչորս...»⁵:

Այլ է Բաշալեանի հերոսուհու հաշուարկը. «Ամէն շաբթու գլուխ, քսան օխա հացը

4. Բաշալեան Լ., Երկեր, Անթիլիաս, Տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1994, էջ 76:

5. Ակ. Բակունց, Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան «Սովետ. գրող» հրատ., 1986, էջ 262:

մէկէն կ'առնէին, օթեկ հաց, հատը երեսուն փարայի, եւ շաբաթ մը կ'ուտէին զայն. չոր հացը քիչ կ'ուտուի, խնայողութիւն մըն է»⁶: Կինը, նկատելով կեանքի մշտնջենական տառապանքն ու բարդութիւնը, շարունակում է մնալ նուրբ և հաշուենկատ: Նա գիտի, որ իր երեխաները շատ հաց չեն ուտի, եթէ ինքը միանգամից գնի վատորակ հաց: Սա սովին դիմակայելու հոգեբանական նուրբ, սառնասիրտ և չարեաց փոքրագոյն հաշուարկ է: Ըստ էութեան, մարդու աչքը պիտի շատ ուտելիքից կշտանայ, այսինքն՝ դա ոչ այնքան ստամոքսի, որքան բանականութեան կշտացումն է, որովհետեւ, այնուամենայնիւ, ուղեղի թելադրանքով է մարդն առաջնորդում կեանքում: Տանը «քսան օխա» հաց լինելու դէպքում երեխաները այլեւս չեն տագնապի և կը մտածեն ապրուստի միջոց փնտրելու մասին: Մարիամ տուտուն այս հոգեկերտուածքի կրողն է:

Հոգեբանօրէն յաղթահարելով կիսասուած ապրելու և գոյատևելու խնդիրը՝ Մարիամ տուտուն մտածում է կարելոր հարցի մասին: Իր սովորելու, աշխատելու և կայանալու ժամանակը վաղուց արդէն անցեալում է: Հիմա իր դուստրը՝ Թագուհին, պիտի կարողանայ սովորել, ընդ որում այնպիսի արհեստ, որով հնարաւոր կը լինէր քիչ թէ շատ հեշտ ապրել. «Միւզէնիի վարպէ՛տ. այս էր իրենց երագը. մայր ու աղջիկ շատ գիշեր գլուխ գլխի տուած կը մտածէին այն հանգստութեան օրերուն վրայ գորս պիտի վայելէին այդ ըղձացեալ տիտղոսին ստացումէն ետքը»⁷:

Բաշալեանը շատ լաւ գիտէր արտադրողական կեանքի բոլոր դրսեւորումները, որովհետեւ երիտասարդ տարիներին զբաղուել էր արդիւնաբերութեամբ: Նա ներկայացնում է սիւզէնիի եւրոպական մեքենագործ և տեղական ձեռագործ աշխատանքների տարբերութիւնները: Մեքենաների ստեղծած բացարձակ ծաղիկները այդքան էլ գրաւիչ չեն. «Միւզէնիին առաւելութիւնը այն է եւրոպական գործարաններէ ելած նմանօրինակ արտադրութեանց վրայ, որ օրինակի համար թիւ վարագոյրներուն վրայ՝ ասեղները սմբած են, մինչ ձեռքով բանուածին մէջ՝ թասալիս կը զարնուի, այսինքն՝ ուլունքի պէս հիւսքերը հատիկ հատիկ են»⁸:

Ի հեճուկս Թէպեր տուտուի քմահաճ և դժգոհ վերաբերմունքի՝ Թագուհին իւրացնում է արհեստի բոլոր մանրութիւնները: Կինն ապշած էր իր այս աշկերտի աշխատասիրութեամբ, նպատակասլացութեամբ և կեանքի դժուարութիւնների նկատմամբ դրսեւորած կամային յատկանիշներով. «Եթէ ասանկ երթալու ըլլար, տարիէ մը վարպետ կ'ելլար»⁹:

Վարպետի կանխատեսած օրը շատ չուշացաւ: Այդ բաղձալի օրուան սպասում էր ամբողջ ընտանիքը: Թագուհին պէտք է Թէպեր տուտուի տուած նմուշից բացարձակապէս չտարբերուող գործ կատարէր և ստանար վարպետի կոչում: Կէս ժամից յետոյ աղջիկն իր վարպետի դատին է ներկայացնում աւարտած «բանուածքը»: Գոհ լինելով աշակերտուհու աշխատանքից՝ վարպետն արտաբերում է երկար սպասուած նախադասութիւնը. «... արթըխ վարպետ եղար...»¹⁰:

Պակաս կարելոր է դառնում, թէ սա ինչի կը յանգեցնի հետագայ կեանքում: Պայքարի մէջ կարելորն ու առաջնայինը ոչ թէ յաղթելը, այլ չպարտուելն է: Այս տեսանկիւնից իրաւացի է Ս. Մանուկեանը, երբ գրում է, որ Թագուհին ոսկի ձեռքեր ունենալու դէպքում էլ ասեղնագործութեամբ չէր կարող ոսկի հաւաքել իր ընտանիքի համար¹¹: Մարիամի «քաշուած դիմագծերուն աննառ երանութիւն» պարգեւած «գոհունակութեան արցունքները» կեանքի դժուարութիւններից մէկ քայլ բարձրանալու և հասարակութեան մէջ յարգարժան տեղ զբաղեցնելու գրաւականն էին:

Ընդհանրացնելով վերոգրեալը՝ կարելի է ասել, որ Բաշալեանը, յաճախակի

6. Բաշալեան Լ., Երկեր, նշում հրատ., էջ 77:

7. Նոյն տեղում, էջ 77:

8. Նոյն տեղում, էջ 78:

9. Նոյն տեղում, էջ 77:

10. Նոյն տեղում, էջ 79:

11. Տես Մանուկեան Ս., Լեւոն Բաշալեան, Երևան, ՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 134:

չստեղծագործելով, կարողացել է ընդգծել մարդկային անկոտրում բնաւորութեան ընդլայնուած շառաւիղը: Հեղինակն իր այս նորավէպում հիմնաւորում է այն միտքը, որ պայքարի մէջ գտնուող և դժուարութիւններից չընկճուողները դեռ պարտուած չեն: Բնաւ. նրանք չէին յայտնուելու դրախտային կեանքի մէջ, բայց բոլորը միասին և անհատապէս իւրաքանչիւրը յաղթահարել էր կեանքի առաջադրած դժուարութիւնը: Բաշալեանը նորավէպի սկզբում ուղղակիօրէն նշում է, որ այս պատմութիւնը «շատերուն ալ հետաքրքրութիւն չազդէ գուցէ»¹²: Պատմութեան իրական լինելու մասին եւս հեղինակը լռում է, որովհետեւ իրապաշտութեան շրջանում նորավիպագիրները որքան պնդում էին եղելութեան իրական լինելու հանգամանքը, այնքան աւելի էր պակասում հաւատը տուեալ իրողութեան նկատմամբ: Սա կեանքից վերցրած իրական դէպք է: Կեանքը շարունակաբար կոտրում է մարդ արարածին: Կոտրուում է նա, ով հակուած է կոտրուելու: Խօսքը ոչ թէ մեծ յաջողութիւնների և ձեռքբերումների, այլ դիմացկունութեան, կամային որակների ձեւաւորման և զարգացման դրսեւորումների մասին է:

**ՏԱԹԵԻԻԿ ՄԵՐԶՋԱՆԵԱՆ
ԿԱՄԱՅԻՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆԻ «ՄՅՈՒԶԵՆԻԻ ՎԱՐՊԵՏ» ՆՈՐԱՎԷՊՈՒՄ**

Բանալի բառեր և արտայայտութիւններ - նորավէպ, կամային որակներ, հոգեկերտուածք, ընտանեկան երջանկութիւն, փորձութիւն, դիմացկունութիւն, պայքար, չպարտուողի տեսակ

Ներկայ հրապարակման նպատակն է նորովի վերլուծել և մեկնաբանել Լեւոն Բաշալեանի «Սյուզենիի վարպետ» նորավէպը: Ճիշդ է, գրականագիտութիւնը նախկինում խօսել է այս նորավէպի մասին, սակայն գրեթէ չի անդրադարձել վերոյիշեալ հարցադրմանը: Այս ուսումնասիրութեան մէջ առանցքային դարձնելով կամային որակների բաշալեանական մօտեցումներն ու ընկալումները՝ եկել ենք այն եզրակացութեան, որ Բաշալեանը սոցիալական խնդիրների քննութեամբ ցոյց է տալիս մարդու կամքի ձեւաւորման և զարգացման դրսեւորման կերպերը:

**ТАТЕВИК МЕРДЖАНИЯ
ОБЗОР ВОЛЕВЫХ КАЧЕСТВ В НОВЕЛЛЕ
ЛЕВОНА БАШАЛЯНА “МАСТЕР СЮЗЕНА”**

Ключевые слова и выражения: новелла, волевые качества, психика, семейное счастье, испытание, стойкость, борьба, вид непобедимого


Цель настоящего издания по новому проанализировать и прокомментировать новеллу Левона Башаляна “Мастер Сюзена”. Несмотря на то, что литература и прежде говорила об этой новелле, но все же, она почти не обращалась к вышеупомянутому вопросу. В этом изучении, делая стержневой волевые качества башалянского восприятия и подхода, мы пришли к тому выводу, что Башалян, обзором социальных проблем, указывает проявляющие способы формирования и развития человеческой воли.

12. Լեւոն Բաշալեան, Երկեր, նշուած աշխատութիւնը, էջ 75

TATEVIK MERJANYAN
ANALYSIS OF VOLITIONAL QUALITIES IN
LEVON BASHALYAN'S "MASTER OF SYUZENI"

Key words and expressions: novella, volitional qualities, mentality, family happiness, temptation, endurance, struggle, unbeaten type

The aim of the present publication is to analyze and interpret the novella "Master of Syuzeni" by Levon Bashalyan in a new way. Indeed, literary criticism has previously touched upon this novella, however it almost has not concerned itself with the above-mentioned issue. Putting an emphasis on Bashalyan's approaches and perceptions regarding volitional qualities, this study comes to a conclusion that Bashalyan shows the manners of the formation and the development of a person's will by examining social issues.



Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱԲՈՒՆՔԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԳԼՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ

ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության
Ֆակուլտետի տեսական փիլիսոփայության
և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ

Քաղաքականը և իրաւականը հասարակական կեանքի կարեւոր ոլորտներից են, որոնց ձեւաւորման, զարգացման, տեղի և դերի վերհանումն ու որոշարկումը նշանակալից ուսումնասիրութիւն է: Հաշուի առնելով պատմական փորձը, որի ընթացքում այս երկու ոլորտներն անցել են տարաբնոյթ յարացոյցներով, և իրենք էլ փոփոխուել ու վերակազմուել են նոր պայմաններում և կամ ստեղծել նոր պայմաններ, ապա իւրաքանչիւր ժամանակահատուածում քաղաքականը և իրաւականը ենթակայ են իմաստաւորման ու վերաիմաստաւորման:

Յատկանշական է, որ այս նոյն պահանջը արդիական է նաեւ մեր ժամանակներում և հարկադրում է առաւել խորքային ու համակողմանի քննութեան ենթարկել քաղաքականի և իրաւականի տեղն ու դերը, որովհետեւ արդի աշխարհի կոնֆլիկտայնութիւնը, համահարթեցման անխուսափելի գործընթացները, յետխորհրդային հասարակութիւնների անցումային ճգնաժամայնութիւնը և, առհասարակ, յետարդիական իրադրութիւնը պարտաւորեցնում են խորքային դիտարկումներ ու շտկումներ՝ մի շարք, այդ թւում նաեւ, քաղաքականի և իրաւականի պարագայում:

Սոյն ուսումնասիրութեան մէջ կիրառւում են «քաղաքական» և «իրաւական» հասկացութիւնները և սրանց ներքոյ հասկանում ենք իւրաքանչիւրի տեսութիւնն ու պրակտիկան՝ միասին վերցրած: Այսինքն՝ «քաղաքական» ասելով հասկանում ենք՝ քաղաքական տեսութիւնն ընդհանրապէս (իր բոլոր ճիւղերով, բաժիններով, գիտակարգերով, և այլն), ինչպէս նաեւ՝ քաղաքական ցանկացած պրակտիկա: Նոյնը նաեւ «իրաւական»ի դէպքում է. ողջ իրաւական տեսական ու գործնական իրողութիւնները՝ միասին վերցրած:

Այն, որ քաղաքականն ու իրաւականը պատմականօրէն առաջացել են փիլիսոփայութեան շրջանակներում, համընդհանուր ընդունելութիւն գտած փաստ է, հետեւաբար նպատակայարմար չենք գտնում՝ հարցի քննարկումն այդ տեսանկիւնից: Մեր կենտրոնացումն ուղղուած է քաղաքականի և իրաւականի վերպատմական (վերժամանակային), այսինքն՝ տրամաբանական կողմի վրայ, որով էլ փորձում ենք պատասխանել հետեւեալ հարցին. ինչպիսի՞ տրամաբանական օրինաչափ կապերի մէջ են գտնւում քաղաքականը և իրաւականը փիլիսոփայութեան հետ:

Հարցի պատասխանը ենթադրում է որոշ պարզաբանումներ.

ա) զոյգ՝ «քաղաքական» և «իրաւական» հասկացութիւնների սահմանումներ, որոշարկումներ՝ պատմական համապատասխան ենթատեքստով,

բ) փիլիսոփայութեան հետ այս հասկացութիւնների իւրահատուկ կապերի ընդգծումը՝ ի տարբերութիւն այլ գիտա-գործունէական ոլորտների, օրինակ՝ ֆիզիկայի կամ կենսաբանութեան հետ,

գ) նախորդ երկու պայմանները պահանջում են անդրադառնալ փիլիսոփայութեան գոյաբանութեանը նոյնպէս, ուստի խուսափելու համար մի այնպիսի հարցի քննարկումից (որը չի կարող մտնել այս ուսումնասիրութեան մէջ), ինչպիսին է փիլիսոփայելու, փիլիսոփայութեան, պարափիլիսոփայութեան և նախափիլիսոփայութեան տարբերակման

հիմնահարցը, քաղաքականը և իրաւականը կ'ամրագրենք փիլիսոփայականի համատեքստում¹: Այսինքն՝ «փիլիսոփայական» հասկացութեան վերաբերեալ կը կիրառենք նոյն սկզբունքը, որը կիրառում ենք, «քաղաքական» և «իրաւական» հասկացութիւնների դէպքում. «փիլիսոփայական» հասկացութեան ներքոյ կը հասկանանք այն ամէնը, ինչում առկայ է փիլիսոփայութիւնը և այն ամէնը, ինչն առկայ է փիլիսոփայութեան մէջ:

Այս պարզաբանումների համադրութեան արդիւնքում կը տանք վերն առաջադրուած հարցի մեր պատասխանը:

Քաղաքականն այնպիսի տեսական և/կամ գործնական իրողութիւն է, որի շրջանակներում բաշխում և վերաբաշխում են մէկից ւելի անձանց՝ միմեանց վրայ բանեցրած իշխանութիւնները, կամ «...գործունէութեան ոլորտ է պետութեան ներսում և պետութիւնների միջև՝ կապուած իշխանութեան բաշխման ու իրականացման հետ...»²: Այս նկարագրութիւնն ու սահմանումը միայն մէկն են այն բազմաթիւներից, որոնք առկայ են համապատասխան գրականութեան շրջանակներում:

Քաղաքականի տարբեր սահմանումներ, ուղղակի կամ անուղղակի, իրենցում պարունակում են ինչ-որ միտում (ինտենցիա), և այդ միտումը քաղաքականի բնոյթը որոշող էական տարրերից է: Քաղաքականի բազմաթիւ բնոյթները, որոնք պայմանաւորուած են միտումով, ակնյայտօրէն արտացոլում է Դոլֆ Շտեռներեզեռի «Քաղաքականութեան երեք արմատները» (1978)³ աշխատութեան հիմնական հայեցակարգում, որը իւրովի վերաշարադրել է Բ. Մուտորը: Շտեռներեզեռը քաղաքականը ենթարկում է տիպական բաժանման, որի արդիւնքում ի յայտ են գալիս քաղաքականութեան երեք իրականութիւն, իսկ տիպականացման հիմքը տուեալ քաղաքական յարացոյցի միտումն է:

Առաջինի (արիստոտելեան) հիմնադիրն ու զարգացնողը Արիստոտելն է, ով քաղաքականը հասկանում էր որպէս բանական էականի նպատակաւորուածութիւնը դէպի մարդկային կատարելագործութիւնն ու երջանկութիւնը: Արիստոտելեան այսընկալումը հիմք է հանդիսանում Շտեռներեզեռի համար, որպէսզի վերջինս արիստոտելեան «արմատ» - ն անուանի մարդաբանական:

Երկրորդը (մաքիաւելեան), որի հիմնադիրը Ն. Մաքիաւելին է, Շտեռներեզեռը որակում է որպէս դեմոնոլոգիական, որովհետեւ մաքիաւելեան «արմատը» վերաբերում է բացառապէս իշխանութեան ստացմանը և պահպանմանը ստի ու կեղծիքի, բռնութեան ու պատերազմի միջոցներով:

Վերջապէս՝ օգոստինոսեան «արմատը» այս հայեցակարգում մեկնաբանում է որպէս վախճանաբանական (էսիաստոլոգիական). հեղինակը գտնում է, որ Օգոստինոս Երանելու աստուածաբանական հայեացքները Վ. Լենինի ջանքերով (Կ. Մարքսի ահռելի ազդեցութեամբ) դարձան քաղաքական ու իրացուեցին՝ լինելով քրիստոնէական աշխարհիկացում գաղափարներ: Օգոստինեան (Մարքս-Լենինեան) այս «արմատը» տիպականացում է որպէս այդպիսին, որովհետեւ դրանցում խօսքը լաւ իրադրութեան պատրաստման և դրա վերջնական նուաճման մասին է:

Եթէ Արիստոտելը խորհում է հաւասար իրաւունքներով օժտուած ու ազատ քաղաքացիների, պոլիսի (յուն. քաղաք- Մ.Գ.) ու սահմանադրութեան, ինստիտուտների, օրէնքների և մարդկային կարգաւորուած համակեցութեան մասին, ապա Մաքիաւելին խորհում է առանձին անձանց՝ իշխանութեան նուաճման տեխնիկայի ու իշխողի կոշտ կամ մեղմ միջոցների ու տիրապետման, բռնութեան, քծանքի և պատերազմների մասին: Իսկ մարքս-լենինեան դէպքում, արդէն, խօսում է լիովին այլ աշխարհի՝ «բացարձակ աշխարհի» մասին⁴:

1. Վերը նշուած «փիլիսոփայական»ի մասին մանրամասն, տե՛ս, А. Н. Чанышев, Начало философии, М. 1982, էջ 178-179:

2. В. С. Тарасов, Политика, Всемирная Энциклопедия Философия, Москва, Аст, Минск, Харвест, 2001 с. 797.

3. St' u, Бернхард Сутор, Малая Политическая Этика, Издательство: Bundeszentrale für politische Bildung, Bonn, 1997, էջ 7:

4. St' u, նույն տեղը, էջ 7-9:

Քաղաքականի ներքին բաժանում՝ լիովին այլ հիմքով և այլ ընթացակարգով, ի թիւս այլոց, կատարում է նաև Մ. Վերբերը, ով գտնում էր, որ քաղաքական են «... ինքնուրոյն ղեկավարման գործունէութեան բոլոր ձևերը: Խօսում են բանկերի արժէթղթային քաղաքականութեան մասին... կամ գիւղական համայնքի դպրոցական քաղաքականութեան մասին... վերջապէս նոյնիսկ խելամիտ կնոջ քաղաքականութեան մասին, որը հակուում ղեկավարել ամուսնոյն»⁵:

Այս բաժանումներից երեւում է, որ քաղաքական միտումները կարող են լինել խիստ տարբեր, սակայն երեւում է նաև, որ տարբերութիւններով հանդերձ քաղաքականն ունի մի կայուն ելակետ: Այս ելակետն արդէն արտայայտուած է Արիստոտելի դասական նկարագրութեան մէջ. «...ինչպէս տեսնում ենք, ցանկացած պետութիւն իրենից ներկայացնում է մի տեսակ հաղորդակցութիւն, իսկ ցանկացած հաղորդակցութիւն կազմակերպուում է յանուն մի ինչ որ բարիքի (որովհետեւ ամէն գործունէութիւն ի նկատի ունի ենթադրեալ բարիք), ապա ակնյայտ է, որ բոլոր հաղորդակցութիւնները ձգտում են դէպի այս կամ այն բարիքը, ընդամին, մնացած բոլորից առաւել և բարիքներից բարձրագոյնին ձգտում է այն հաղորդակցութիւնը, որը հանդիսանում է բոլորից կարելորն ու իր մէջ պարփակում մնացած բոլոր հաղորդակցութիւնները: Հէնց այս հաղորդակցութիւնն էլ կոչուում է պետութիւն կամ քաղաքական հաղորդակցութիւն»⁶:

Այսպիսով, քաղաքականը միշտ միջոց է, իսկ նպատակը՝ բարիքը: Եւ բնաւ էական չէ, թէ քաղաքականի տուեալ միտումը դէպի ինչպիսի բարիքի է ուղղուած: Այսինքն՝ անկախ այն բանից, թէ «բարիք»-ի ներքոյ ինչ է հասկացւում, միեւնոյն է՝ քաղաքականը լծակ է, որի միջոցով իրականացւում են բարիքին վերաբերող գործողութիւնները: Այստեղից էլ Ա. Բեռլինի կատեգորիկ սահմանումը. «Քաղաքականութեան տեսութիւնը բարոյական փիլիսոփայութեան ճիւղ է, որը սկսում է քաղաքական յարաբերութիւնների ոլորտում բարոյական հասկացութեան յայտնագործումից կամ վկայակոչումից»⁷: Այս վերջին սահմանումը վերաբերում է միայն տեսականին, սակայն սրանից բխում է, որ քաղաքական պրակտիկան, անհրաժեշտաբար, բարոյական փիլիսոփայութեան պրակտիկա է, որովհետեւ «քաղաքականութեան տեսութիւն» հասկացութիւնը, որպէս տեսակ, ներառուած է «քաղաքական» սեռի մէջ:

Հաւանաբար, մարդը մարդուն իշխել է՝ մինչև հարցն այն մասին, թէ յանուն ինչի՞ պիտի մէկը ենթարկուի միւսին: Իրականում, անկախ այն բանից պատմականօրէն իշխելն է նախորդել իշխելու օրինականացմանը թէ՛ հակառակը, միեւնոյնն է՝ իշխանութիւնը քաղաքական ակտ է, իսկ մարդկային իշխանութեան հռչակումը, արդարացումը, լեգիտիմացումը և իրականացումը՝ իրաւական:

Մարդու հարկադրական ազդեցութիւնը մարդու վրայ կարող է համարուել իշխանութիւն, եթէ այն ուղեկցւում է իրաւականով: Այլ դէպքում դա կլինի բռնի ուժի կիրառում, որն ինքնին սպամարդկային է: Այսինքն՝ մարդու հարկադրումը մարդուն վերածում է իշխանութեան, եթէ նրանց մէջ առկայ է պայման: Եթէ կողոպտիչը ուղղակի կեանքից գրկում է զոհին և տիրանում վերջինիս գոյքին, ապա սա չի կարող համարուել իշխանութիւն, սակայն եթէ կողոպտիչը՝ կեանքից գրկելու սպառնալիքով, հարկադրում է զոհին՝ հրաժարուել գոյքից՝ յօգուտ կողոպտչի, ապա սա քաղաքական քայլ է: Եթէ զոհը մերժում է, իսկ կողոպտիչը շարունակում է սպառնալ կամ համոզել, ապա գործողութիւնները դեռևս քաղաքական են: Այն պահից սկսած, երբ կողոպտիչը սկսում է բռնի ոյժ գործադրել, քաղաքականն աւարտուած է, որովհետեւ աւարտուած է մարդկայինն ընդհանրապէս. սա սպամարդկային գործողութիւն է: Իսկ եթէ զոհը կատարում է հարկադրանքը, ապա դրութիւնը որակելի է որպէս քաղաքական գործընթաց: Այս քաղաքական գործընթացը միշտ ուղեկցւում է իրաւականով, երբ

5. М. Вебер, Избранные произведения, М.: Прогресс, 1990, с. 644.

6. Аристотель, Политика, Сочинения в четырех томах. Том 4, Москва, 1984 с. 376.

7. Isaiah Berlin, Liberty, Oxford University Press, 2002, p. 168.

կողոպտիչը սպառնում է զոհին, ապա նրա այս գործողությունը, ենթատեքստում, արտասայտում է ուժեղի՝ սպանելու և կամ տիրելու իրաւունքը:

Դրութիւնը նոյնն է՝ իրաւապահի ֆիզիկական բռնի ոյժ գործադրելու պարագայում նոյնպէս: Երբ քաղաքական սուբյեկտը հարկադրում է գործել՝ համապատասխան իր կարգադրութեան, ապա նա, ուղիղ տեքստով կամ ենթատեքստում, վկայակոչում է իր իրաւասութիւնը որպէս տուեալ պահանջի հիմք: Երբ քաղաքական սուբյեկտը դիմում է ֆիզիկական բռնի ոյժի գործադրմանը, ապա դադարում է քաղաքական սուբյեկտ լինելուց: Բռնի ոյժի գործադրման ընթացքում և գործադրումից յետոյ, տուեալ սուբյեկտը կրկին կը վերածուի քաղաքականի, եթէ վկայակոչի իր գործունէութեան օրինաչափութիւնը: Վերջապէս՝ եթէ քաղաքական սուբյեկտը միաժամանակ կիրառում է և՛ ֆիզիկական բռնի ոյժ, և՛ իրաւական ակտ, ապա նա իրականացնում է և՛ մարդկային, և՛ ապամարդկային գործողութիւններ: Այսպիսով, իրաւունքը «ազատութեան չափն է» և տրւում ու պահպանւում է «պետութեան կողմից»⁸: Այսու, քաղաքականի էական յատկանիշներից մէկն իրաւականի առկայութիւնն է և հակառակը. իրաւականի էական յատկանիշներից է քաղաքականի մասնակցութիւնը:

Քաղաքականի և իրաւականի անխզելի միասնութեանը, անուղղակի կերպով, անդրադարձել է նաեւ Դաւիթ Անյաղթը: Հայագի մեծ փիլիսոփան, «հաշտեցնելով» պլատոն - արիստոտելեան «գործնական փիլիսոփայութեան» բաժանմանը վերաբերող հակասութիւնը, գտնում է, որ Արիստոտելի կատարած բաժանումը «... երեք մասի ճշմարիտ է, որովհետեւ եթէ որեւէ մէկը ... կարգաւորում է քաղաքի գործերը, զբաղւում է քաղաքականութեամբ»⁹: Ըստ Անյաղթի, «ճշմարիտ» են նաեւ պլատոնականները, որոնք «գործնական փիլիսոփայութիւնը» բաժանում են «օրէնսդրութեան և արդարադատութեան»: Եւ «Այդ այդպէս է, որովհետեւ բարոյագիտութիւնը, տնտեսագիտութիւնը և քաղաքագիտութիւնը նիւթ են ծառայում օրէնսդրութեան և արդարադատութեան համար...»¹⁰:

Այսպիսով, քաղաքականի և իրաւականի վերժամանակային տրամաբանական կապն օրինաչափ և անհրաժեշտաբար է:

Քանի որ վերը մատնացոյց արուեց քաղաքականի և իրաւականի անխզելի կապը միմեանց հետ, ապա այս զոյգի կապը փիլիսոփայականի հետ դիտարկելիս, երկուսից միայն մէկին յարաբերելով փիլիսոփայականը, ինքնատիքեան յարաբերած ենք լինում նաեւ միւսի հետ: Այսինքն՝ եթէ ինչ - որ կերպ փիլիսոփայականը առնչուի միայն քաղաքականին, ապա դրանով առնչուած կը լինի նաեւ իրաւականին, իսկ եթէ առնչուած լինի միայն իրաւականին, ապա, սրանով իսկ, առնչուած կը լինի քաղաքականին նոյնպէս:

Գիտութեանը յայտնի, ամէնահինը համարուող, իրաւական կոթող «Համմուրաբիի կանոն»ում, մինչ օրէնքներն ու պատիժները թուարկելը, օրէնսդիրը ներկայացնում է իր գործունէութեան արդարացում - հիմնաւորումը: Նա, ի թիւս այլնի, յայտնում է. «Երբ Մարդուկն ինձ ուղարկեց ժողովրդին կառավարելու և երկրին օգնութիւն բերելու, ես երկրում հիմնեցի օրէնք ու արդարութիւն և նպաստեցի ժողովրդի բարեկեցութեանը»¹¹: Այսինքն՝ նրա իրաւա-քաղաքական գործունէութիւնը ինքնանպատակ չէ. սա մի միջոց է, որով թագաւոր-օրէնսդիրն իրականացնում է արդարութիւն և նպաստում ժողովուրդների բարեկեցութեանը:

Այսպիսի նախաբաններ կան գրեթէ բոլոր պետութիւնների սահմանադրութիւնների և այլ իրաւական փաստաթղթերի նախաբաններում նոյնպէս: Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիրը պնդում է. «Բոլոր մարդիկ ... օժտուած են բանականութեամբ ու ոչ

8. Г. А. Василевич, Право, Всемирная Энциклопедия Философия, Москва, Аст, Минск, Харвест, 2001, с. 816 – 817.

9. Դաւիթ Անյաղթ, Փիլիսոփայութեան սահմանումները, Երևան, 1980, էջ 120:

10. Նոյն տեղը, էջ 122-123:

11. The Code of Hammurabi King of Babylon, text transliteration by Robert Francis Harper, The University of Chicago Press, 1904, p. 9.

խղճով, ...»¹²: ԱՄՆ-ի Սահմանադրությունը յայտարարում է. «Մենք ... առաւել կատարեալ Միասնութիւն ձեւաւորելու, Արդարութիւն հիմնելու, ներքին Խաղաղութիւն ապահովելու, ..., և Ազատութեան Օրինանքը պահպանելու նպատակով ... Ամերիկայի Միացեալ Նահանգների համար վճռեցինք եւ հիմնադրեցինք այս Սահմանադրությունը»¹³: Ռուսական Դաշնութեան Սահմանադրությունը նոյնպէս հետամուտ է «բարուն և արդարութեանը»¹⁴, իսկ ՀՀ Սահմանադրությունը վկայակոչում է համամարդկային բոլոր արժէքները՝ միասին վերցրած՝ «հաւաստելով հաւատարմութիւն» առ դրանք¹⁵: Վերջապէս՝ հայ մեծանուն օրէնսդիր Մխիթար Գօշն իր «Դատաստանագրքի» նախաբանում պնդում է, «որ մեզ ոչ քիչ չափով է օգուտ [օրէնսդրությունը], քանզի ամենքի համար են այս գրուածքները՝ գուզնթաց նրանց զօրութեամբ՝ չափի մէջ դնելով մարդկանց: Որովհետեւ սրանց դիտաւորութիւնը մեղքերը կրճատելը և դրանով չարին վերջ տալն է: Եւ հետեւանքը ոչ այլ ինչ է լինում, այն, որ դարձնում է մեզ համամիտ և համակարծիք, որոնցից և սերն է հաստատում, որ գլուխն է բոլոր պատուիրանների»¹⁶:

Յիշատակուած իրաւա-քաղաքական բոլոր փաստաթղթերը՝ որպէս նպատակ, մատնանշում են փիլիսոփայական մի շարք կատեգորիաներ. «արդարութիւն», «ազատութիւն», «բարի», «համամարդկային արժէքներ», և այլն: Փիլիսոփայականի և իրաւա-քաղաքականի կապն այսքանով չի աւարտուում, այն շարունակուում և իր ուղղակի արտայայտութիւններն է ունենում իրաւա-քաղաքական գործընթացների ամենամասնաւոր և թանձրացական դէպքերում նոյնպէս: Իրաւա-քաղաքական մի շարք փաստաթղթերում առկայ են մետաիրաւական և մետաքաղաքական բազմաթիւ մօտեցումներ, դրոյթներ ու հասկացութիւններ, որոնք ցոյց են տալիս, որ փիլիսոփայութիւնն անընդհատ ուղեկցում է քաղաքական և իրաւական գործընթացներին: Այսպէս, ՀՀ Քրէական օրէնագրքում առկայ է մի այսպիսի սկզբունք.

«Յօդուած 10. Արդարութեան և պատասխանատուութեան անհատականացման սկզբունքը

1. Յանցանք կատարած անձի նկատմամբ կիրառուող պատիժը և քրէաիրաւական ներգործութեան այլ միջոցները պէտք է լինեն արդարացի՝ համապատասխան են յանցանքի ծանրութեանը, դա կատարելու հանգամանքներին, յանցաւորի անձնաւորութեանը, անհրաժեշտ և բաւարար լինեն նրան ուղղելու և նոր յանցագործութիւնները կանխելու համար»¹⁷:

Այս յօդուածը պարունակում է փիլիսոփայական մի շարք հիմնախնդիրներ. նախ՝ արժարժուում է համապատասխանութեան հարցը՝ նոյնացնելով այս վերջինը «արդարացի»-ութեան հետ: Սակայն յայտնի է, որ համապատասխանութիւնը ոչ թէ «արդարացի»ի, այլ «ճշմարտութեան» դասական սահմանումն է. ճշմարտութիւնը մտքի համապատասխանութիւնն է իրականութեանը. «... նա, ով համապատասխանաբար է խօսում իրերի մասին, այնպէս ինչպէս դրանք կան, ճշմարիտն է խօսում»¹⁸, և «... ասել, որ գոյր գոյութիւն ունի, իսկ չգոյր գոյութիւն չունի՝ նշանակում է ճշմարիտն ասել»¹⁹: Երկրորդ՝ յօդուածում նշում է

12. Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիր Գեկտեմբերի, 1948թ.), Հռչակագրի հայերէն թարգմանութիւնը՝ ՄԱԿ-ի

Հանրային տեղեկատուութեան վարչութեան էրեւանեան գրասենեակի,

http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf:

13. <https://www.whitehouse.gov/1600/constitution> :

14. <http://www.constitution.ru/> :

15. Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1> :

16. Մխիթար Գօշ, Դատաստանագրք, Երևան, 2001, էջ 18-19:

17. Հայաստանի Հանրապետութեան Քրէական Օրէնագիրք, ընդունուել է 18. 04. 2003

18. Платон, Кратил, Сочинения в четырех томах. Т. 1 С.-Петербург., 2006, с. 426.

19. Аристотель, Метафизика, Сочинения в четырех томах, том 1, Москва – 1976, с. 141.

պատժի նպատակը՝ որպես չափորոշիչ. յանցագործին «... ուղղելու և նոր յանցագործությունները կանխելու համար»: Պատժի առկայությունը, դրա նպատակները, դրա արդյունավետությունը, և այլն, այս ամենը շատ խնդրայարոյց հայեցակետեր են, որոնցով զբաղում է իրաւունքի փիլիսոփայությունը:

Այսպիսով, քաղաքական և իրաւական տեքստերը հաւաստում են, որ փիլիսոփայականը, ուղղակի կամ ենթատեքստային մակարդակում, յարատեւօրէն ուղեկցում է քաղաքականին և իրաւականին՝ պարունակելով դրանք և պարունակուելով դրանց մէջ:

Մինչեւ այժմ բերուած փաստարկներն ու օրինակները խօսում են փիլիսոփայականի՝ իրաւականի և քաղաքականի վրայ ունեցած դրական ազդեցութեան մասին, սակայն փիլիսոփայականը այս միեւնոյն զոյգ կենսագործունէութիւնների վրայ ունենում է նաեւ բացասական՝ կազմաքանդող ազդեցութիւն նոյնպէս. քաղաքականում և իրաւականում ամրագրում են փիլիսոփայական հիմնաւորումներ, պարզաբանումներ, և ընդհանրապէս, քննարկումներ պահանջող մտակառոյցներ՝ ժամանակաւորապէս և տեղայնօրէն լուծելով ինչ-ինչ յախտենական հիմնախնդիրներ (մասնաւոր կամ եզակի եղանակով): Այդ լուծման ամրագրումները, ինչպէս փիլիսոփայական ցանկացած հիմնախնդիր (կամ դրա մասնաւոր դէպք), թոյլատրում են տարբեր, անհամատեղելի ու միմեանց փոխբացառող, լուծումներ»²⁰: Եւ եթէ քաղաքականում ու իրաւականում հարցերը, տեսականօրէն համարում են լուծուած կամ թելակոխած այլ փուլ, սպա փիլիսոփայությունը չի դադարում ուշադրութիւնը կենտրոնացրած պահելուց այն դրոյթների վրայ, որոնց ամրագրումով լուծուել էր ինչ-որ խնդիր: Օրինակ՝ «արժանապատուութիւն» տերմինը լայն կիրառութիւն ունի իրաւաքաղաքական մի շարք ընթացակարգերում, սակայն «Արժանապատուութիւնը, ինչպիսի իմաստ էլ դրան վերագրուի, դառնում է խնդրայարոյց, երբ այն ենթադրում է՝ որպէս բացարձակ յատկութիւն: Հասկանալի է, թէ ինչ է նշանակում՝ լինել «արժանի այսինչին», եթէ խօսքն այս կամ այն բանի մասին է, սակայն ի՞նչ է նշանակում՝ լինել «արժանի» ինքնին»²¹: Այսպէս, հայերէնում գուցէ այս խնդիրը չծագէր, եթէ իրողութիւնը լինէր գուտ հայկական (որը սկզբունքօրէն հնարաւոր չէ), որովհետեւ հայերէն «արժանապատուութիւն» հասկացութիւնը (որը բնագրում. անգլերէն՝ *dignity*, ֆրանսերէն՝ *dignité*, ռուսերէն՝ *достоинство*, բառն է, տարբեր է արժանի(ք) հասկացութիւնից), հնարաւոր չէ ենթադրել՝ որպէս բացարձակ արժանապատուութիւն բառը բաղադրեալ է և նշանակում է «պատուի արժանի»²²: Ալեն դէ Բենուայի այս քննադատութիւնն ուղղուած է «արժանի(ք)» հասկացութեանը, որը, թէեւ հայերէն տեքստերում թարգմանուում²³ և հեղինակուում է՝ որպէս արժանապատուութիւն, սակայն հասկացում է հէնց այն իմաստով, որով օգտագործում է ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագրում, որտեղ մասնաւորապէս ասում է. «Բոլոր մարդիկ ծնում են ազատ ու հաւասար՝ իրենց արժանապատուութեամբ և իրաւունքներով»²⁴: Բենուայի քննադատութիւնն «արժանապատուութիւն» հասկացութեան վերաբերեալ տեղի ունի հէնց այս փաստաթղթի համատեքստում:

Ուրեմն փիլիսոփայականը ոչ միայն պատմականօրէն, այլ նաեւ վերժամանակային տրամաբանական օրինաչափ կապ ունի քաղաքականի և իրաւականի հետ: Ինչպէս պատմականօրէն, այնպէս էլ տրամաբանօրէն փիլիսոփայականը նախորդում, ուղեկցում և յաջորդում է քաղաքականին ու իրաւականին: Փիլիսոփայականի նախորդելը և ուղեկցելը իրաւականի ու քաղաքականի վրայ ազդում են դրականօրէն. փիլիսոփայականը մշակում, ճշգրտում և կառուցարկում է քաղաքական ու իրաւական հայեցակետերը: Ուստի կարելի է

20. Տէ՛ւ Ա. Ս. Манасян, Методологические принципы объективности научного знания и единство науки, Ереван 2002, էջ 8.

21. Ален де Бенуа, По ту сторону прав человека В защиту свобод, Ион, Москва, 2015, с. 53.

22. Ստեփան Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944, էջ 264:

23. Տէ՛ւ, Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիր (10 Դեկտեմբերի, 1948թ.), Հռչակագրի հայերէն թարգմանությունը՝ ՄԱԿ-ի Հանրային տեղեկատուության վարչութեան երեւանեան գրասենեակի, http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf:

24. The Universal Declaration of Human Rights, Article I, United Nations, <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/>:

ասել, որ քաղաքականը սաղմնաւորում է փիլիսոփայականում և մեռնում իրաւականում՝ ամրագրման միջոցով: Այս տեսական արձանացումը արգելակում է քաղաքականի և իրաւականի ընթացքը, դրանք դիտում են՝ ամբողջական ու կուռ համակարգեր, և հասարակական ոլորտում սկսում են գործառնել՝ որպէս ակնյայտ՝ «ինքնին հասկանալի»: Սակայն «Ակնյայտութիւնը միշտ մօտ է դոգմատիկութեանը. չէ՞ որ դրա մասին չեն վիճում»²⁵: Այս պատմական ակնթարթում «ինքնին հասկանալի» քաղաքական և իրաւական «ճշմարտութիւնները», միակողմանիօրէն, մեկուսանում են փիլիսոփայականից: Այս մեկուսացումը տեղի չունի փիլիսոփայականի կողմից, այն շարունակում է իր հայեցողութեան կենտրոնում պահել քաղաքական և իրաւական արձանացած հայեցակէտերը: Հասարակական գիտակցութեան մէջ արձանացած «ինքնին հասկանալի» ճշմարտութիւնները փիլիսոփայականը ենթարկում է վերանայման: Այս վերանայման գործընթացը, թէեւ փիլիսոփայական գործընթաց է, սակայն բնաւ պարտադիր չէ, որ այն իրականացնողը լինի փիլիսոփայ: Գործընթացը կարող է իրականացուել ցանկացած սուբյեկտի կողմից, որը կը քննի մտային տուեալ արձանացումը դրսից, այսինքն՝ քաղաքականի դէպքում, կը ստացուի մետաքաղաքական, իսկ իրաւականի դէպքում՝ մետաիրաւական:

Այս վերանայման և վերաիմաստաւորման գործընթացի անհրաժեշտութիւնը պայմանաւորուած է, մի կողմից մարդու էութեամբ, միւս կողմից՝ փիլիսոփայութեան. Կ. Պոպերը պնդում է. «Բոլոր տղամարդիկ և կանայք փիլիսոփաներ են, չնայած ոմանք աւելի են, քան միւսները»²⁶: Պոպերի այս պնդումը որքան էլ ծայրայեղական համարուի, միեւնոյն է՝ դրանում ճշմարտութեան մեծ բաժին կայ, որովհետեւ, առնուազն,

1. կամ՝ որոշ մարդիկ փիլիսոփաներ են,
2. կամ՝ բոլոր մարդիկ ունեն փիլիսոփայելու յատկութիւն,
3. կամ՝ որոշ մարդիկ ունեն փիլիսոփայելու յատկութիւն:

Իսկ սա նշանակում է, որ գոյութիւն ունի քաղաքականի և իրաւականի հանդիպման հաւանականութիւն փիլիսոփայականի հետ: Այս հաւանականութիւնը հասնում է գրեթէ հաւաստիութեան, երբ հաշուի ենք առնում, որ փիլիսոփայականի «... գիտակցային մշակումը երբեք չաւարտուող և ամէն անգամ նորացուող յանձնառութիւն է, որը ներկայումս իրականացում է իբրեւ մէկ ամբողջութիւն: ... Այս յանձնառութեան հայեցումը ... չի խամրի այնքան ժամանակ, քանի դեռ մարդիկ մարդ կը մնան»²⁷: Փիլիսոփայութիւնը «... միշտ ներկայ է այնտեղ, որտեղ մարդն է ապրում»²⁸:

Ուրեմն քաղաքականի և իրաւականի կառուցարկումից առաջ և կառուցարկման ընթացքում փիլիսոփայութիւնը դրականօրէն համագործառնում է այս գոյգ կենսագործունէութիւնների հետ, սակայն քաղաքականի և իրաւականի արձանացումից անմիջապէս յետոյ, փիլիսոփայութիւնը սկսում է գործառնել ընդդէմ արձանացած մտակառոյցի: Փիլիսոփայական վերաիմաստաւորման արդիւնքում քաղաքականի ու իրաւականի արձանացումները կամ բարդանում և առաւել կենսունակ են դառնում կամ մերժում ու դուրս են մղում: Այս հնարաւոր զարգացումը տեղի է ունենում՝ արձանացած հայեցակէտերի ընդդիմացման միջոցով, կրկին փիլիսոփայականի համագործառնութեամբ՝ հէնց այնպէս, ինչպէս տեղի էր ունեցել նախորդ արձանացման կառուցարկման գործընթացը: Մոյն գործընթացը վերագրելի է հոգեւոր մշակութային բոլոր ձեւերին. Կարլ Եասպերսը այս նոյն գործընթացի սկզբնական փուլը նկարագրում է կրօնի և հակակրօնի՝ փիլիսոփայութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքի առումով. «Աստծոյ յայտնութեամբ

25. Ален де Бенуа, По ту сторону прав человека В защиту свобод, Ион, Москва, 2015, с. 9.

26. Karl Popper, In search of a better world, lectures and essays from thirty years, How I see philosophy, London and New York, 2000, p. 171.

27. К. Ясперс, Введение в философию, Мн.: Прополис, 2000, с 16.

28. Նոյն տեղը, էջ 134:

լուսաւորուած՝ այնկողմնային աշխարհի ձգողական ոյժը, կամ անաստուած աշխարհի համակողմնային ամենակարող իշխանութեան նկրտումը՝ և՛ մէկը, և՛ միւսը, կ'ուզենային, որ փիլիսոփայութիւնը դադարեցնէր իր գոյութիւնը»²⁹:

Այս նոյն օրինաչափութիւնը նկատուում է Թ. Կունի, գիտական յեղափոխութիւնների հայեցակարգում. նորմալ գիտութեան ժամանակաընթացքում գործառնում է գիտնականների հանրութեան կողմից ընդունուած յարացոյցը, սակայն, աստիճանաբար, ի յայտ են գալիս անոմալիաներ՝ կուտակուում են հակասութիւններ և ներքին խնդիրներ: Սրան յաջորդում է գիտական յեղափոխութիւնը՝ նոր յարացոյցով³⁰:

Փիլիսոփայութեան կազմաքանդող և վերաիմաստաւորող յատկութեան լինելութեան հետեւանք էր նիւտոնեան հանրայայտ գոլուշացումը. «Փիզիկա՛, վախեցի՛ր մետաֆիզիկայից», իսկ Մ. Հոքինգը, անթրոպիզմի սկզբունքով, գտնում էր, որ «Մենք տիեզերքն այս ձեւով ենք տեսնում, որովհետեւ մենք գոյութիւն ունենք»³¹: Եւ այստեղ լիովին տրամաբանական մի հարց է ծագում. ի՞նչ իւրայատկութիւն ունեն քաղաքական ու իրաւականը՝ յարաբերած փիլիսոփայականին, ի տարբերութիւն, ասենք, բնագիտական կենսագործունէութիւնների, եթէ բոլոր բնական գիտութիւններն էլ ծնուել և ծնուում են փիլիսոփայութեան (փիլիսոփայելու) շրջանակներում³²:

Իւրայատկութիւնը բխում է քաղաքականի և իրաւականի, Նիցշէի ոճով ասած, մարդկային, չափազանց մարդկային լինելուց: Բնագիտական կամ մաթեմատիկական խնդիրներ դնելը և լուծելը ուղղակի կապ չի ենթադրում մարդու էութեան հետ, նման խնդիրները կարող են կապուել մարդուն միայն անուղղակի կերպով. Կոպեռնիկոսեան յեղափոխութիւնը դարձաւ հանրային և իշխանական քննարկման առարկայ ոչ թէ որովհետեւ ուղղակիօրէն ազդում էր հասարակական գիտակցութեան կամ մարդու աշխարհայեացքի վրայ, այլ որովհետեւ դրանից բխող եզրակացութիւններն էին աշխարհայեացքային՝ ուղղակիօրէն կապուած մարդու էութեանը: Ի տարբերութիւն այս բնագիտական կենսագործունէութեան ձեւերի, քաղաքականի և իրաւականի ազդեցութիւնը մարդու վրայ ուղղակի է, որովհետեւ «...մարդն իր բնութեամբ քաղաքական էակ է, իսկ նա, ով իր բնութեանը համահունչ, այլ ոչ պատահականութեան բերումով, ապրում է պետութիւնից դուրս, կամ բարոյական իմաստով թերհաս էակ է, կամ էլ՝ գերմարդ...»³³: Բացի սա էլ՝ քանի որ քաղաքականում և իրաւականում գործառնող բոլոր իրողութիւնները հէնց մարդունն են, ապա դրանց հասկացման և կիրառութեան հիմքում միշտ ընկած է «մարդու» էութեան և բնութեան վերաբերեալ մի ինչ-որ հայեցակարգ: Եւ քաղաքական ու իրաւական կենսագործունէութիւնները չեն կարող գործառնել՝ առանց հաշուի նստելու Կանտեան յաւերժական հարցի հետ, որին կարելի է հանգեցնել ողջ փիլիսոփայութիւնը. «Ի՞նչ է մարդը»³⁴: Բայց մարդու մասին պատկերացումները խիստ տարբեր են, նոյնիսկ, ամենաընդհանրական մակարդակում. «Եթէ զարգացած եւրոպացուն հարցնենք, թէ նա ի՞նչ է մտածում «մարդ» հասկացութեան պարագայում, ապա, գրեթէ միշտ, նրա գիտակցութեան մէջ կը սկսեն բախուել երեք անհամատեղելի գաղափարների շրջանակներ՝ ...յուդայաքրիստոնէական ... շրջանակի պատկերացումը ..., ... անտիկ-յունական շրջանակի պատկերացումը..., ... արդի բնագիտական և գենետիկական հոգեբանութեան շրջանակի պատկերացումը»³⁵: Իսկ քաղաքական և իրաւական իրողութիւնները նպատակային չեն լինի, քանի դեռ մէկ ընդհանուր ընկալում չկայ մարդու՝ ինչ և ինչպիսին լինելու վերաբերեալ,

29. Նոյն տեղը, էջ 16:

30. Տէս, Thomas S. Kuhn, The Structure of Scientific Revolutions, Second Edition, Enlarged, Printed in the United States of America, The University of Chicago, 1970, ի թիւս այլնի, էջ 154:

31. Ու. Հոքինգ Ստեֆըն, Ժամանակի համառոտ պատմութիւն, Երևան 2001, էջ 130:

32. Տէս Anthony Kenny, An illustrated brief history of western philosophy, Blackwell Publishing, 2006, էջ 5:

33. Аристотель, Политика, Сочинения в четырех томах. Том 4, Москва, 1984 с. 378.

34. И. Кант, Трактаты и письма, Москва, 1980, с. 332.

35. М. Шелер, Положение человека в Космосе, Проблема человека в западной философии, Москва, 1988, с. 30.

որվիենտել «Օքսֆորդի դասախօսի ազատությունը խիստ տարբեր է Եգիպտական հողագործի ազատությունից»³⁶: Իսկ «ի՞նչ է», «ինչպիսի՞ ինչ է» և «ինչի՞ համար է» հարցերը բուն փիլիսոփայական են³⁷:

Այսպիսով, օրինաչափ և անհրաժեշտաբար է քաղաքականի և իրաւականի կապը փիլիսոփայականի հետ. սրանք մշտապէս ոչ միայն ուղեկցւում են փիլիսոփայականով, այլ լինելով լիովին ինքնուրոյն ոլորտներ (առնուազն՝ տեսական-գիտական մակարդակներում) գտնւում են փիլիսոփայականի ներսում: Քաղաքականն ու իրաւականը անհրաժեշտաբար ենթադրում են փիլիսոփայականը՝ որպէս ենթատեքստ, և փիլիսոփայականով է ուղղորդւում քաղաքականի ու իրաւականի նորմատիւային որոշարկումը: Վերջապէս՝ սրանք փոփոխւում և զարգանում են փիլիսոփայականի միջոցով:

Հետեւաբար քաղաքականի և իրաւականի գոյաբանական հիմքը փիլիսոփայականն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Յօդուածում քննւում է քաղաքականութեան և իրաւունքի գոյաբանական հիմքերը՝ նոյնականացնելով այս երկու ինքնուրոյն կենսագործունէութեան պատմական և տրամաբանական կապերը փիլիսոփայութեան հետ: Ուսումնասիրութեան շեշտն առանձնապէս դրուած է հիմնախնդրի տրմաբանական կողմի վրայ: Ուսումնասիրութիւնը նկարագրում և փաստարկում է քաղաքականութեան և իրաւունքի ծագումը, զարգացումը և մշտական կացութիւնը՝ փիլիսոփայութեան մէջ:

РЕЗЮМЕ

В статье рассматриваются онтологические основы политики и права, идентифицируя исторические и логические отношения этих двух независимых видов практики с философией. Основное внимание в исследовании акцентируется на логической стороне проблемы. Исследование описывает и аргументирует происхождение, развитие и перманентное пребывание политики и права в философии.

SUMMARY

In the article is examined ontological bases of politics and rights with identifying of these two substantive activities historical and logical directions with philosophy. In the research accent is put especially on the logical side of problem. The research describes and argues the origin, development and permanent indwelling of politics and right in the philosophy.

36. Isaiah Berlin, Liberty, Oxford University Press, 2002, p. 171.

37. Տե՛ս, Դավիթ Անյաղթ, Փիլիսոփայութեան սահմանումները, Երևան, 1980, էջ 35:

**ԵՐԲ ՍԱՅԼԱԿԻՑ ԻԶՆԵԼ ԵՒ ՔԱՅԼԵԼԸ
ՇԱՏԵՐԻՆ ՆԵՔԻԱԹ Է ԹԻՈՒՄ**

ՆԵՐՍԵՆՆԵՐ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Օրեր առաջ Երուսաղեմի Սուրբ Յարութեան Տաճարում Քրիստոսի Սուրբ Գերեզմանում, հրաշք տեղի ունեցաւ, որին չանդրադառնալն իսկապէս մեղք կը լինէր: Որոշեցի հանդիպել Էրիք Ռեւազովին (գաղթի տարիներին Վրաստան գնալով Ռեւազեան ազգանունը փոխել են Ռեւազովի), ում հետ կատարուել էր Աստուածային հրաշքը և փոքրիկ հարցազրոյց անել նրա հետ:

Երեկոյեան ժամերգութիւնից առաջ Էրիքն իր ոտքով Սուրբ Յարութեան Տաճարի՝ Հայոց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու աստիճաններից իջնելով՝ մօտեցաւ ինձ ու բարեւելուց յետոյ՝ ողջագուրուեց: Չարմացայ, քանի որ ծանօթներ չէինք: Ժամերգութեան ողջ ընթացքում Էրիքը ծունկի եկած աղօթում էր, ձեռքերը երկինք կարկառած փառք տալիս Աստծուն: Ժամերգութիւնից յետոյ ասացի, որ ցանկանում եմ փոքրիկ հարցազրոյց անել իր հետ՝ կատարուած հրաշքի և մինչ այդ տեղի ունեցած վթարի մասին:

Էրիքն անհանգիստ շարժումով ասաց, որ չի ցանկանում խօսել, բարձրաձայնել կատարուածի մասին, սակայն մի փոքր համոզելուց յետոյ՝ տեղի տուեց խնդրանքիս:

Չրոյցի սկզբում նախ հետաքրքրուեց թէ ի՞նչ է անունս և, ապա, փորձեց արտաբերել Ներսէս անունը, սակայն ինչպէս շատերի՝ նրա մօտ եւս Ներսէսը վերածուեց Ներսէսի: Ապա ներողութիւն խնդրեց, ասելով՝ որ ռուսական դպրոց է աւարտել ու յաւելեց, թէ հոգով սրտով հայ է, քանի որ ծնողները հայեր են:

Ես փորձեցի նախ հասկանալ պատմութիւնը.

- Էրիք,- ասացի,- գիտեմ որ վթարի էք ենթարկուել, որի հետեւանքով յայտնուել էք սայլակին:

Առանց ակտորդ փութկոտութեան, ներքին հանգստութեամբ ու մեղմ ձայնով սկսեց պատմել.

- 2012 թուականին Ռուսաստանում վթարի ենթարկուեցի, որի հետեւանքով մեքենան շրջուեց: Մեքենայից մի կերպ ինձ դուրս բերելուց յետոյ, պարզուեց ողնաշարիս տասերկուերորդ ողը կոտորուած է: Ապա Վրաստանում բժիշկների աչալուրջ աշխատանքի շնորհիւ, 33 օր անշարժ պառկելուց յետոյ, ոտքի կանգնեցի: Բժիշկները յորդորեցին զգոյշ լինել, ոյժ չգործադրել և արգելեցին երկու կիլոգրամից ակելի ծանրութիւն բարձրացնել:

«Բոլորս էլ գիտենք,-ասում է,- որ տղամարդը երբ ընտանիք ունի չի կարող ոտքը ոտքին զցել, մատը մատին չխփել ու ոչինչ չանելով բարեկեցիկ ապրել: Ու ես, իմ մասին հոգ չտանելով, հինգ տարի շարունակ ողնաշարս կոպիտ ասած տեռորի ենթարկեցի: Օգոստոսի 4-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամը չորսին, պատուհանի մօտ կանգնած նայում էի դուրս, յանկարծ սարսափելի ցաւ զգացի ողնաշարիս հատուածում՝ նման ատամնացաւի, որ ուղեղիդ զգացնել է տալիս: Դրանից յետոյ յայտնուեցի անկողնում: Չէի քայլում, ոյժ չէի կարողանում տալ, բայց միշտ երագում էի դրա մասին», - պատմում է անասելի խանդավառութեամբ, ապա նշում, որ՝ երբ հեռուստատեսութեամբ տեսել է Չատիկի Լոյսի արարողութիւնը, միշտ ներքին ցանկութիւն է ունեցել գալ Երուսաղեմ ու մի գիշեր անցկացնել Սուրբ Յարութեան Տաճարում՝ մասնակցել Հայոց պատարագին:

«Հոկտեմբերի 25-ին եկանք Երուսաղեմ, Սուրբ Յարութեան Տաճար՝ մոմ վառելու: Այդ օրը տաճարը լի էր ուխտաւորներով, զբօսաշրջիկներով, այնքան շատ էր բազմութիւնը, ասես Չատիկի Լոյսի արարողութիւնը լինէր: Ես շատ էի ուզում մերոնց տեսնել,-ասում է,- դէ՛ հայերին էլի»:

- Էրիք, իսկ ո՞վ էր Ձեզ Տաճար բերել, քանի որ չէիք կարող ինքներդ գալ:

-Դէ՛, բնականաբար ես չէի կարող գալ, կնոջս տղան էր բերել:

Չարմանում եմ «կնոջս տղան» արտայայտությունից ու հարցնում.

- **Ամուսնացած է՞ք:**

- Այո՛, երկրորդ կնոջս տղան է, մի աղջիկ էլ երկրորդ կնոջից ունեցայ,- ժպտում է, - Գրետա՛ս, հիմա Թիֆլիսում է՝ մօրս, հօրս մօտ:

- **Աստուած պահի:**

- Ապրէ՛ք, ողջ ըլնէք», -ասում է բարբառային առոգանութեամբ:

Իմ հարցին թէ այժմ որտե՛ղ է բնակւում ասաց.

- Թէլ Ավիվում, բայց ընտանիքս Թիֆլիսում է:

- **Իսկ այստեղ մենակ է՞ք ապրում, Ձեզ ո՞վ է խնամում:**

- Երկրորդ կինս, որ կէս վրացի, կէս հրեայ է, միասին ենք եկել Երուսաղէմ, իրենք ինձ բերեցին ու ես աչքերով ման էի գալիս ու մտածում. Տէ՛ր Աստուած, գոնէ մէկն ու մէկին մեր հայերից տեսնեմ: Ճիշդ է, ես հայերէն տառերը չգիտեմ, գրել-կարդալ չգիտեմ, բայց երբ տեսնում եմ, հասկանում եմ, որ դրանք հայկական տառեր են:

«Սայլակի վրայ նստած ներսում մի քանիսի հարցրեցի. «Հայ է՞ք», պատասխանում են. «Չէ, Ռումինիա», ասում եմ «Լաւ»:

«Էրի՛ք, լաւ, ժողովուրդը շատ է, արի դուրս գնանք, - ինձ ասում են:

Չէի ուզում, հոգիս տրորում էր, ուզում էի մէկն ու մէկին անպայման գտնել: Ասացի «Լաւ, կամքը թող քոնը լինի»:

«Դուրս եկանք ու գաւիթում՝ ձախ կողմում՝ փոքր եկեղեցի կայ (Հայոց Սուրբ Յովհաննէս մատրան մասին է խօսում), տեսայ դուռը կիսաբաց է ու դրան վրայ բանալիներ են կախուած: Մտածեցի անհնար է, որ այնտեղ՝ ներսում մեր հայերից մէկը չլինի: Ասացի ինձ տարէք էնտեղ: Ասաց. «Էնտեղ ոչ մի բան չկայ»: Ասացի. «Բալէ՛ս, տա՛ր էնտեղ»:

«Մօտեցանք դրանը՝ հրեցի ու ասացի. «Բարեւ Ձեզ», ներսից հայերէնով պատասխանեցին. «Բարեւ Ձե՛զ»: Դա ինձ համար մի լիութիւն էր: Ասացի. «Կարելի՞ է ներս գալ», ասաց. «Այո՛, ներս արի» և դուռը բացեց: Ինձ սայլակից գետին դրեցին, ես ծնկաչոք մտայ ներս:

«Ինձ բարեւողը Սուրբ Յարութեան Տաճարի Լուսարար՝ Տիրացու Գեղամ Անջունեանն էր, որ անմիջապէս հարցրեց արդէօք ներսում եղե՞լ ենք:

«Ասացի. «Չէ, ներսում այնքան ժողովուրդ կար չկարողացանք Սուրբ Գերեզման մտնել, արդէն գնում էինք» (խաչակնքում է ու ասում «Փա՛՛ռք Քեզ, Տէր Աստուած»):

«Գեղամն ասաց, որ քիչ յետոյ կ՛օգնեն ինձ ու ներս՝ Գերեզման կը մտցնեն:

Ուրախութիւնից տեղս չէի կարողանում գտնել: Նորից Տաճարից ներս մտանք ու մեզ տարան նախ հայոց Տեսչարան, ու ասացին որ մի քիչ սպասենք, քանի որ յաջորդ օրուայ տօնի նախապատրաստութիւններն էին կատարում, յետոյ պիտի փորձէին ինձ ներս՝ Գերեզման մտցնել:

«Մինչ Գեղամը Տեսչարանից դուրս կը գար, ասացի. «Գեղամ ջան, մի հարց տամ էլի». ասաց. «Ի՞նչ է եղել, ասա՛»:

«Գիտե՛ս ներքին ցանկութիւն ունեմ, գիշերը Տաճարում անցկացնելու»:

«Ասաց. «Ոչ մի խնդիր չկայ»:

«Վա՛՛յ, Հա՛յր Սուրբ...» (դարձեալ խաչակնքում է),- Մեռնեմ Սուրբ զօրութեանդ, Տէր Աստուած:

«Յետոյ Գեղամն ասաց. «Էրի՛ք, արի՛ էսպէս անենք, երբ որ գաս գիշերը Տաճարում մնալու, այդ ժամանակ էլ կը մտնես Գերեզման ու քեզ խանգարող չի լինի: Հիմա արագ պիտի մտնես ու դուրս գաս»:

«Համաձայնեցի ու մենք գնացինք Թէլ Ավիվ: Դրանից տաս օր յետոյ, Երուսաղէմ գալուց առաջ զանգեցի ու պայմանաւորուեցի Գեղամի հետ, որ Ուրբաթ օրը՝ Նոյեմբերի 3-ին պիտի գամ ու գիշերը մնամ Սուրբ Յարութեան Տաճարում: Ամսի 3-ին, երեկոյեան մենք եկանք: Զանի որ Տաճարի դուռը պիտի փակուէր ժամը 7-ին, մենք 6:30 արդէն Տաճարի

մուտքի մօտ էինք:

«Դռան փակուելուց յետոյ, Տաճարի այդ օրուայ հերթապահ՝ ծառայող միաբաններ՝ Մկրտիչ Ստեփաննեանն ու Կարապետ Սարկաւազ Բաղդասարեանը ինձ սայլակով հասցրեցին մինչեւ Քրիստոսի Գերեզմանի մուտքին ու այնտեղից եւ ծնկաչոք, կարելի է ասել սողալով մտայ ներս: Թէ որքան եմ ներսում մնացել, չեմ կարող ասել, բայց ներսում այնքան հանգստութիւն ու լռութիւն էր տիրում, որ երկար եմ մնացել: Մեղա՛յ եմ քեզ Տէր Աստուած,- ասում է,- եւ կարգին աղօթք անել էլ չգիտեմ: Իմ հոգով, իմ զգացածով ինչպէս կարողացայ՝ հաղորդակցուեցի իմ Աստծու հետ:

«Յետոյ դարձեալ ծնկաչոք փորձեցի դուրս գալ, այդ ժամանակ մի ինչ-որ բոց էի զգում կրծքավանդակիս շրջանում, ինչ-որ տաքութիւն՝ շատ ուժեղ: Դուրս եկայ տեսայ տղաները չկային՝ կանթեղների ձեռքն էին աւելացնում: Մի քիչ բարձր ձայնով, ոչ շատ կոպիտ, բայց համեմատաբար ուժեղ գոռացի. «Մուկու՛ւ՛ւ՛նչ»: Ու հեռուից տեսան ինձ: Մինչեւ կը մօտենային, եւ շապիկիս կոճակները արձակեցի, քանի որ ներսս այրւում էր:

«Տղաները որ եկան ասացի. «Օգնէք ինձ»: Ուզում էին սայլակը մօտեցնել, որ նստեմ, ասացի. «Չե՛մ ուզում սայլակը, օգնէ՛ք ոտքի կանգնեմ, կանգնել եմ ուզում»:

«Տղաները կռացան, մի ձեռքով հենուեցի Կարապետի ուսին, միւս ձեռքով Մկրտիչի, ու ասացի. «Ինձ բարձրացրէք»: Երբ բարձրացրին ոտքերս սկսեց դողալ:

- Բայց ի՞նչ ոյժ էր, որ ստիպեց ձեզ կանգնել ցանկանաք: Որտեղի՞ց առաջացաւ այդ ցանկութիւնը:

- Չգիտեմ մէջս ինչ էր կատարւում, էն տաքութիւնը, էն այրուելը՝ անկախ ինձնից ինչ-որ ցանկութիւն ունեցայ ոտքի կանգնելու: Այնպիսի տպաւորութիւն էր, կարծես ես չէի ղեկավարում ինձ, այլ անում էի այն ինչ ներսս էր թելադրում: Երբ բարձրացրեցին ինձ, այդ պահին ուզում էի բղաւել, բայց նաեւ հասկանում էի թէ ուր եմ գտնւում ու փորձեցի զսպել էմոցիաներս: Ասացի. «Եկէք մի քիչ քայլենք»: Ու քայլեցինք, դրանից յետոյ սայլակին մօտ չեմ գնացել:

- Իսկապէս հրաշք է: Մինչեւ Տաճար գալը երազանք ունեցե՞լ էք:

- Երազանքս Տաճարում գիշերային արարողութիւններին մասնակցելն էր, այստեղ մնալն էր: Բայց Տաճարում գիշերելու ցանկութիւնս իմ վիճակից չէր գալիս, այլ այն, որ մօրս պապիկը, այսինքն մօրս՝ մօր հայրը, որ անունը Հայկարամ Տէր-Միքայէլեան էր, 1800-ականներին հաճի է եղել: Այդ բոլորը եւ փոքր ժամանակ լսել եմ ու առաջին անգամ, երբ 33 տարեկանում Իսրայէլ եկայ, հետաքրքրուեցի՝ մտածելով, որ գուցէ ինչ որ տեղեկութիւն կը կարողանամ գտնել նրա մասին Երուսաղէմի արխիւներում կամ տուժարներում:

«Դէ ինչ ասեմ, Հայր Սուրբ ջան, Աստուած տուեց ինձ այն ինչ ուզում էի: Ուզում էի գիշերել տաճարում, Աստուած տուեց: Դա ինձ համար ամէն ինչ է»:

- Վթարից յետոյ երբեւէ չէ՞ք մեղադրել Աստծուն, չէ՞ք ասել ինչո՞ւ այսպէս եղաւ, ինչո՞ւ հէնց ինձ հետ եղաւ:

- Ոչ, քանի որ մայրս հաւատացեալ է, ու տաս և անելի տարիներ արդէն ուխտերի է գնում տարբեր եկեղեցիներ: Պապիկս՝ Վանիկը, եւս հաւատացեալ էր: Առաւօտեան վաղ արթնանում էր, առանց որեւէ մէկի հետ խօսելու, առանց մի կտոր հաց ուտելու ուխտի էր գնում Թիֆլիսի տարբեր եկեղեցիներ: Ձեռնափայտ ունէր ու դրանով կամաց-կամաց գնում էր իր ուխտը կատարելու: Երեկոյեան վերադառնում էր, նոր հաց էր ուտում»:

- Բայց դուք չէ՞ք մեղադրել Աստծուն, քանի որ նման իրավիճակներում յայտնուող մարդիկ, ում հետ դժբախտութիւն է կատարւում կամ ծանր հիւանդութիւն են ունենում, մեղադրում են Աստծուն՝ ասելով թէ ինչո՞ւ հէնց մեզ հետ սա պատահեց, ինչո՞ւ հէնց ես և այլն: Դուք նման բաներ չէ՞ք ասել:

- Ոչ, մտքովս էլ չի անցել: Ես հոգեւոր կեանքով չեմ ապրել, բայց ես գիտէի որ այն ինչ ինձ հետ պատահեց՝ իմ մեղքով պատահեց: Ես իմ կեանքը չէի գնահատում, այնպիսի իրավիճակում էի յայտնուել, որ կեանքիցս ձեռք էի քաշել ու կարծես թէ մահս էի փնտռում,

(նորից ասում է՝ «Մեղա՛յ Քեզ Տէր Աստուած»)։ - Մարդ երբ ինչ-որ անմտածուած քայլ է անում ու յայտնւում է անելանելի վիճակում, զոջում է, բայց արդէն ուշ է լինում: Աստուած մեզ խելք է տուել, պէտք է գործածենք ինչ-որ բան անելուց առաջ: Անմտածուած քայլերի վերջը դա է: Ինձ հետ կատարուածի համար ես երբեք Աստծուն չեմ մեղադրել, գիտէի որ իմ մեղքով է եղել, այլ մեղաւորներ չեմ փնտռել:

- Մի խօսք կայ, որ ասում են. «Չեմ կարող» չկայ, «չեմ ուզում» կայ»:

- «Կարող է չհաւատաք, բայց մտքովս չի անցել որ քայլելու մասին խնդրեմ Աստծուն: Ես Գերեզման մտնելով մեղքերիս թողութեան համար էի աղօթում, ոչ թէ ոտքի կանգնելու, ոչ թէ քայլելու: Ես դրա մասին անգամ խօսք չեմ ասել ներսում, – ասում է ու յաւելում, – ամբողջ մարմինս փշաքաղուեց:

Մայրս քանի տարի ասում էր. «Ա՛յ բալա, դու չես պատկերացնում թէ ինչ բան է Աստծու սէրը»: Նա միշտ ինձ ուղղորդում էր դէպի Աստուած, բայց քանի որ ես սխալ կեանքով էի ապրում՝ ասում էի. «Մամ ջան, ես պատրաստ չեմ, ես չեմ կարող»:

«Բայց այն գիշերուանից յետոյ, ինչ որ կատարուեց Տաճարում ինձ հետ, կեանքս փոխուեց: Ես չկարողացայ էլ Տաճարից դուրս գալ: Արդէն հինգ օր է Տաճարում եմ գիշերում: Տեսուչ Հայր Սուրբին պիտի խնդրեմ որ թոյլ տայ մի ամիս, կամ ինչքան կարելի է շատ մնամ այստեղ՝ Տաճարում»:

«Ուզում եմ էստեղ լինել, Աստծու հետ լինել: Ուզում եմ մեղքերիս թողութիւն ստանալ, ամբապնդուել Աստծու ներկայութեամբ: Ուզում եմ իմ ապրած սխալ կեանքից դարձի գալ դէպի Աստուած ու Նրա գրկում լինել: Այդ կեանքով եմ ուզում ապրել: Ես ուզում եմ էստեղ մնալ, չեմ ուզում իմ Աստծուց հրաժարուել ու մեջքս դարձնել, դուրս գալ էստեղից: Չեմ ուզում դրսում չարի ձեռքը ընկնել, ինչպէս որ ընկած էի տարիներ առաջ ու ապրում էի սխալ կեանքով: Ուզում եմ իմ Աստծու ձեռքի տակ լինել: Կարող է Աստուած ինձ դարձեալ ինչ-որ դուռ ունի բացելու, չգիտեմ»:

- Էրի՛ք, պատմեցի՛ք ձեր հարազատներին, ինչպիսի՛ն էր արձագանքը:


- «Այո՛, պատմեցի: Մի խօսք կայ, որ ասում են «Լացն ու ծիծաղը քոյր և եղբայր են», հենց այդպէս էր: Հա՛ն ուրախացել էին, հա՛ն յուզուել: Մայրս շատ ուժեղ կին է, ինձ ասում էր. «Ա՛յ բալա, մի՛ լացի, ամէն ինչ լաւ կը լինի: Ես հաւատում էի որ ամէն ինչ էսպէս էլ լինելու է»: Մօրս հաւատքը շատ մեծ է: Մի բան կարող եմ միայն ասել. մենք բոլորս՝ հայրս, ես, քոյրս, եղբայրս, ապրում ենք մօրս աղօթքներով: Կը զարմանաք, բայց հայրիկս 4 տարի փտորիազ հիւանդութիւն ունէր, հակառակ մեր զենետիկ մաքրութեանը: Բայց մօրս աղօթքներով հայրիկս բուժուեց ու այսօր մաշկը մաս-մաքուր է: Ինձ հետ կատարուած դէպքը նաեւ նուէր էր մայրիկիս ու հայրիկիս, քանի որ այդ օրը իրենց ամուսնութեան 43 ամեակն էր»:

- Էրի՛ք ջան, թող Աստուած օրհնի ձեզ ու ձեր ընտանիքին, մանաւանդ մայրիկիդ, որ իր հաւատքով ձեզ միշտ առաջնորդել, ուղղորդել է դէպի Աստուած և իր աղօթքներով էլ Աստուած պահել է ձեզ: Ճատ ուրախ էի գրոյցի համար:

- Հայր Սուրբ, ձեզ էլ ցանկանում եմ հոգու ուրախութիւն:

- **Ճնորհակալ եմ:**

(Զրոյցը ինչ-ինչ պատճառներով յետաձգուել էր, բայց Էրիքն ասաց. «Ոչինչ, Աստուած ինչ-որ անում է, ուշ է անում, բայց պուպուշ է անում»):



Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱԿԱԿԱՑ

Այս տարի եւս Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը տուաւ իր հոգեւոր հունձքը՝ յանձինս տաս նոր սարկաւագներու:

21 Յուլիս, Ուրբաթ երեկոյեան, Տապանակի տօնի նախատօնակէն ետք, Մայր Տանարի կից Ս. Էջմիածնի մատրան մէջ կատարուեցաւ սարկաւագական կոչման արարողութիւնը Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի շրջանաւարտներ՝ Տրց. Կարապետ Բաղդասարեանի, Տրց. Գուրգէն Բարսեղեանի, Տրց. Արտակ Թադէւոսեանի, Տրց. Ռաֆիկ Ղազարեանի, Տրց. Սերեոժա Պետրոսեանի, Տրց. Յակոբ Գրիգորեանի, Տրց. Նարեկ Աբրահամեանի, Տրց. Սեդրակ Դաւթեանի, Տրց. Բենիկ Յովհաննիսեանի եւ Տրց. Յովհաննէս Փահլէւանեանի: Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց բարեշնորհ Տիրացուներուն:

Յաջորդ օր, 22 Յուլիս, Ծաբաթ, Տապանակի տօնին, ի ժամ Ս. Պատարագի, Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան որպէս խարտաւիյակ, ընծայեալները առաջնորդեց ձեռնադրիչ Սրբազան Հօր՝ իրեն առընթերակայ ունենալով Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեանն ու Տ. Պարեոտ Ծ. Վրդ. Երէցեանը: Տաս կիսասարկաւագներն ընդունեցին սարկաւագութեան կարգ՝ ձեռամբ Պատրիարք Սրբազան Հօր: Յուզիչ էր պահը, երբ տասն ալ ձեռամբարձ եկեղեցւոյ բեմէն կը դառնային ժողովուրդին, ի նշան աշխարհէ իրենց հրաժարման, մինչ դպիրներ կ'երգէին «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» սրտագրաւ շարականը: Նորընծաները անմիջապէս սկսան սպասարկել Ս. Խորհուրդին:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Չորեքշաբթի, 9 Օգոստոսին, առաւօտեան ժամը 10:00-ին, Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի նախկին պատգամաւոր, Հայ Ազգային Կոնգրէս խմբակցութեան քարտուղար՝ Տիար Արամ Մանուկեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Պրն. Ա. Մանուկեան մակագրելով 1990 թ. Օգոստոս 23-ին ընդունուած Հայաստանի Անկախութեան Հռչակագրի կրկնօրինակին վրայ, նուիրեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր: Հռչակագրի բնօրինակը կը պահուի Հայաստանի պատմութեան թանգարանին մէջ: Հայաստանի Անկախութեան Հռչակագիրը 1990 թուականին ընթերցած է նոյնինքն պատգամաւոր Արամ Մանուկեան:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, 10 Օգոստոսին, Սրբոց Յակոբեանց Մայր Տանարին մէջ, յետ երեկոյեան ժամերգութեան, Ծայրագոյն Վարդապետական աստիճան տրուեցաւ Յորդանանահայոց Առաջնորդ եւ Պատրիարքական Փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ. Աւետիս Վարդապետ Իփրանեանի:

Հայց. Եկեղեցւոյ «վարդապետ»ը սկզբնական ժամանակներէն սկսեալ, միշտ ունեցած է եկեղեցական գլխաւոր առաքելութիւն եւ քարոզելու եւ ուսուցանելու պաշտօն: Եւ անշուշտ, այս առաքելութիւնը շատ լուրջ պարտաւորութիւններ կ'ենթադրէ՝ ուսումնական եւ գիտական, նկարագիր եւ առաքինութիւններ, հաւատքի կրակը դնելով իրենց ուսումին եւ ամբարուած գիտութեան մէջ: Այսպէս ընդունուած է հայ «վարդապետ»ին եկեղեցական տիպարը:

Համաձայն եկեղեցական ծիսական դարաւոր մատեանին, այս կարեւոր պաշտօնը

(«վարդապետական իշխանություն» կամ «վարդապետական աստիճան») շնորհողը «Մեծ Վարդապետ»ն է: Միայն ծայրագոյն վարդապետական աստիճան ունեցող եպիսկոպոս մը կրնայ վարդապետական աստիճան շնորհել ուրիշ վարդապետի մը: Ըստ Մայր Մաշտոցի բուն վարդապետը ծայրագոյն վարդապետն է:

Պատրիարք Սրբազան Հայրը սարկաւազներու եւ հոգեւորականներու թափօրով փոքր ատեանէն «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Տանարի Մայր դուռը եւ բազմեցաւ Աթոռին: Ընծայեալը կը ներկայացնէր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան:

Արարողութեան մասնակից երկու խարտաւիլակներն էին՝ Հոգեշնորհ Տ. Թեոդորոս Վարդապետ Չաքարեան եւ Հոգեշնորհ Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան: Ծարականներու երգեցողութիւնը գլխաւորեց Հոգեշնորհ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեան: Սրբազան Հայրը յատուկ աղօթքներու ընթերցումով տաս նոր աստիճաններ շնորհեց Տ. Աւետիս Վարդապետ Իփրանեանի:

Տուչութենէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորելով Տ. Աւետիս Ծ. Վարդապետ Իփրանեանը ականակուռ լանջախաչ մը նուիրեց անոր:

Ս. ՓՐԿՉԻ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

18 Օգոստոսին, Ամերիկայէն Մեսսէչուսեթս նահանգի Ֆրէյմինկիէմ քաղաքի Սրբոց Թարգմանչաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Գրիգոր Քահանայ Սապունճեան, ընկերակցութեամբ Նիւ Եորքի Սուրբ Ներսէս Ընծայարանի Տեսուչ՝ Արժանապատիւ Տ. Մարտիրոս Քահանայ Չելեանի, Ս. Փրկչայ վանքի Տեսուչ Հոգեշնորհ Տ. Ծնորիք Արեղայ Պալոյեանի, ծխականներով այցելեցին Ս. Փրկչի վանք եւ ապա մաքրեցին Ս. Փրկչի Գերեզմանատան տարածքը եւ լուսցին հանգուցեալ Պատրիարքներու գերեզմանաքարերը:

ՏԱՐԵՄՈՒՑ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1 Սեպտեմբեր 2017-ին, դպրոցական շրջանի տարեմուտին Սրբոց Թարգմանչաց Վարժարանը ընդունեց 180 աշակերտ-աշակերտուհիներ: Տարեմուտի արարողութիւնը կատարուեցաւ ժամը 8:30-ին, ներկայութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Երուսաղէմի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս՝ Պրն. Յովակ Մոմճեանի եւ Միաբանութեան անդամներուն: Վարժարանի Տեսուչ՝ Տ. Նորայր Վարդապետ Գազազեանի բարեգալուստի խօսքերէն յետոյ, Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ քաջալերեց աշակերտները ուսումնական տարին նոր եռանդով սկսելու, եւ պատուիրեց ջուսահատիլ եւ հպարտութեամբ սորվիլ Հայ լեզուն եւ Հայոց պատմութիւնը: Իր խօսքին մէջ Սրբազան Հայրը շնորհաւորեց նաեւ ուսուցիչները եւ մաղթեց անոնց համբերատար գործունէութիւն: Հանդիսութենէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը հոգեւոր հայրերու հետ հանդիպում ունեցան Տեսուչ՝ Տ. Նորայր Վարդապետ Գազազեանի հետ Տեսչարանին մէջ:

ԺԱՌԱՆԳԱԲՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԵՄՈՒՑ

4 Սեպտեմբեր 2017-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի 174-րդ ուսումնական տարեշրջանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներն ու ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ՝ Ս. Աթոռոյս Ամենապատիւ Պատրիարք Սրբազան

Հօր: Ըստ աւանդութեան, ընթերցուեցաւ Աւետարանէն «Սերմնացանի» առակը, ապա Վարժարանի Տեսուչ Հոգեշնորհ Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեանի բարի գալուստի խօսքերէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը իր հայրական խրատներով քաջալերեց Ժառանգաւոր սաները ու բարի երթ մաղթեց անոնց: Իր խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը ըսաւ. «Ձեզմէ ակնկալուածը, գիրք, գրիչ եւ տետրակ սիրելն է, բայց մանաւանդ Եկեղեցին, որուն ծառայութեան կոչուած էք: Կ'ուզենք որ ըլլաք տիպար եւ մաքուր հայորդիներ, պատրաստ ծառայելու մեր ազգին եւ Եկեղեցիին»:

ԾԱՌԱՏՈՒՆԿ ՓԻԼԻՊՊՈՍԻ ԱՂԲԻՐԻ ՇՐՋԱՓՈՎԿԻՆ ՄԷՋ

6 Սեպտեմբերին վաղ առաւօտեան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Կալուածոց Տեսուչ Հոգեշնորհ Տ. Պարեոտ Ծ. Վարդապետ Երեցեանի, այցելեցին Հայոց Փիլիպպոսի Աղբիւր եւ հոն կառուցուած Հայոց Պատրիարքարանի ճամբուն վրայ ձիթենիի ծառեր տնկեցին: Աղբիւրը պիտի ցանկապատուի եւ քանի մը տեղ պիտի զետեղուի Սուրբ Յակոբի քարէ զինանշանը: Յանկապատի դրան բանալին պիտի ըլլայ Հայոց Պատրիարքին մօտ:

Փիլիպպոսի աղբիւրը Երուսաղէմէն գրեթէ ժամ մը հեռաւորութեամբ հարաւային արեւմտեան կողմն է հովտի մը մէջ: Աւանդութեամբ կը կարծուի թէ այս այն ջուրն է, ուր Փիլիպպոս Սարկաւազ, մին եօթը նախասարկաւազներէն, մկրտեց Եթովպիոյ Կանդակայ տիկնոջ ներքինին: Աղբիւրը կը բխի լեռան կողէն, որուն վրայ խորանաձեւ հին շինուածք մը կայ եւ շուրջը հնութեան այլ եւ այլ հետքեր կը տեսնուին, ինչպէս ամբողջ սիւներ եւ անոնց բեկորները: Թերեւս երբեմն եկեղեցի եղած լինի, ինչպէս իւր Արարական անունն եւս կը ցուցնէ. որ կ'ըսուի Էյն-իլ-հանիյէ, այսինքն «աղբիւր խորանի» կամ «աղբիւր շնորհաց»:

Լեռան կողը, ինչպէս դիմացի լեռները, այգիներով ծածկուած են: Աղբիւրին կից այգին եւ նոյն իսկ աղբիւրը Ս. Աթոռին սեփականութիւնն է:

ՊՂԾԵԱԼ ՏԱՃԱՐԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ՝ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

15 Սեպտեմբեր 2017-ին, կէսօրէ ետք ժամը 2-ին, Հոգեշնորհ Տ. Վանիկ Վարդապետ Մանկասարեան, Հոգեշնորհ Տ. Թեոդորոս Վարդապետ Չաքարեան եւ Հոգեշնորհ Տ. Գեորգ Աբեղայ Հայրապետեան, ընկերակցութեամբ՝ Բարշ. Ռաֆիկ Սարկաւազ Ղազարեանի, Բարշ. Նարեկ Սարկաւազ Աբրահամեանի եւ Տիրացու Արտա Տիւշէնի կատարեցին Սբ. Յարութեան Տանարի՝ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ խորաններու «Պղծեալ Տանարի» արարողութիւնը:

«Կանոն Պղծեալ Եկեղեցի Սրբելոյ»ն կը պատկանի Յովհաննէս Մանդակունիի: Այս կանոնի արարողութիւնը մեծ մասով նոյն է նորակառոյց եկեղեցւոյ օժման կանոնի արարողութեան հետ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐԻԿ ԵՐԳԻՉՆԵՐ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

14 Հոկտեմբեր, 2017-ին, առաւօտեան ժամը 11:30-ին, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը, հիմնադիր ու զեղարուեստական ղեկավար՝ Պրն. Տիգրան Հէքէքեանի առաջնորդութեամբ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Փոքրիկ երգիչները՝ Պատրիարք Սրբազան Հօր ներկայութեան, կատարեցին «Կիլիկիա» երգը:

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը հիմնադրուած է 1992 թուականի Նոյեմբեր 6-ին: «Եվրոպայի մշակոյթի դեսպան» տիտղոսակիր մանկապատանեկան երգչախումբը միջազգային բազմաթիւ մրցոյթներու դափնեկիր է: Երգչախումբն իր գոր-

ծունելութիւնը կը ծաւալէ ոչ միայն Հայաստանի այլև Սփիւռքի մէջ՝ մասնակցելով միջազգային տարբեր փառատօններու, մեծ նշանակութիւն ունեցող պետական ծրագիրներու եւ բարեգործական համերգներու: Երգչախումբը Երգչախմբային Արուեստի Համաշխարհային ֆետերացիայի կողմէ ճանչցուած է աշխարհի լաւագոյն երգչախումբներէն մին:

ԿԱՐՏԻՆԱԼ ԼԵՈՆԱՐՏՕ ՍԱՆՏՐԻԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

19 Հոկտեմբերին, Վատիկանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու բաժնի պատասխանատու՝ Կարտինալ Լեոնարտօ Սանտրի այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Կարտինալ Սանտրի Երուսաղէմ ժամանած էր Ֆրանչիսկեաններու Սուրբ Երկրին մէջ հաստատման 800-ամեայ յոբելիական տօնակատարութիւններուն մասնակցելու ուրախ առիթով:

Ս. ՓՐԿԶԻ ՄԱՏՐԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՒԱԶԱՆԻ ՕԾՈՒՄ

Ըարաթ, 28 Հոկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 2:45-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝

Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ՝ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ, սաղիմահայեր եւ Սուրբ Փրկչի մատրան բարերաներ՝ բարապաններու եւ ՀՅՄ-ի երիտասարդներու առաջնորդութեամբ մեկնեցին Սուրբ Փրկչի վանք: Պատրիարք Սրբազան Հօր եւ առընթերակայ Հայր Սուրբերու զգեստաւորուելէն ետք՝ պահպանելով անցեալի սովորութիւնը, մատրան դրան առջեւ կատարուեցաւ Դռնբացէքի արարողութիւն: «Չողորմութեան քո գողուն բաց մեզ Տէր» շարականի երգեցողութեամբ Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնն ու ժողովուրդը մուտք գործեցին մատուրէն ներս: Այս ձեռամբ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, օծուեցան մատրան սրբապատկերներն ու Մկրտութեան աւազանը:

Մատուռը նորոգուած է Տիար Սամուէլ Կարապետեանի արդեամբք եւ ծախիւք: Աւագ խորանի նուիրատուներն են՝ Տիարք Ալեքսեյ Ազարեան, Կարէն Վանեցեան, Վաղինակ Մինասեան, Վլատիմիր Զարգարեան, Արսէն Աթաջանեան: Մկրտութեան աւազանի նուիրատուներն են՝ Տիարք Լեւոն Գէորգեան, Նարեկ Պատիրեան եւ Միսաք Բայասանեան: Միսաք Բայասանեան նուիրած է նաեւ Խորանի Արծաթեայ խաչ եւ Մեռոնաթափ Աղանի մը: Իսկ մատրան խորանի վարագոյրը նուէր է Մոսկուայի հաւատացեալ քոյրերու կողմէ:

Սուրբ Փրկչի մեր վանքին մէջ կը գտնուի Քրիստոսի երկրորդ բանտը: Մատուռը շատ հին է, բայց սիրուն տեսք մը ունի: Աւագ խորանին վրայ դրուած է Յիսուսի Գերեզմանին կափարիչ վէմը գոր հրեշտակը շրջեց ու վրան նստաւ: Բոլոր քրիստոնէայ ազգերը այս վէմին վաւերականութիւնը կ'ընդունին եւ երկիւղով ու հաւատով կը մօտենան անոր ուխտ ու երկրպագութիւն ընելու: Դ. դարուն, Կայիափայ Քահանայապետին տան աւերակներուն մէջէն գտնուած է այն սիւնը որուն վրայ Քահանայապետին ծառաները կապեցին Յիսուսի եւ ձաղեցին: Պարսից հալածանքներու ժամանակ այս սրբավայրը քանդուելով, սիւնը երկու մասերու բաժնուած է որուն կէտը միայն կը գտնուի այս եկեղեցիին մէջ: Քրիստոնէական այս նշանաւոր սրբավայրը շատ կանուխ ժամանակներէ ի վեր Ս. Երկրին մէջ Հայոց սեփականութիւնը եղած է:

Թող Աստուած օրհնէ եւ պահպանէ Սուրբ Փրկչի մատրան բոլոր նուիրատուներուն եւ բարերաններուն եւ անոնց բոլոր բարի գործերը յաջողութեամբ պսակէ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Ս. ՓՐԿՉԻ ՄԱՏՐԱՆ ԱԲԱԳ ԽՈՐԱՆԻ, ԴՐԱՆ ԵՒ ՍԻԲԵՐՈՒՑ ԾՃՈՒՄ

Կիրակի, 29 Հոկտեմբերին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ՝ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ, սաղիմահայեր եւ Սուրբ Փրկչի մատրան բարերաներ՝ բարապաններու ուղեկցութեամբ մեկնեցին Սուրբ Փրկչի վանք, ուր Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ օծուեցաւ Ս. Փրկչի մատրան դուռը, բեմը, Խորանը եւ չորս պատերը: Օծման արարողութենէ ետք կատարուեցաւ Անդաստան եւ ապա մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Ժամարարն էր Հոգեշնորհ Տ. Տիրան Արեղայ Յակոբեան: Պատարագի ընթացքին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր իր քարոզին մէջ շնորհակալութիւն յայտնելով մատրան բարերարներուն՝ ըսաւ. «Գոհությիւն եւ փա՛նք անսահման, որ Երկրնաւոր Տէրը կարեւորութիւնը ընծայեց հաւատքի այս տունը անգամ մը եւս դարձնելու «Տուն Աղօթքի», որուն համար երախտապարտ է Սուրբ Աթոռոյ Միաբանութիւնը Մոսկուաքնակ՝ Տիար Սամուէլ Կարապետեան բարերարին, որ միաժամանակ նորոգել տուած է Բեթղեհէմի վանքի եկեղեցին ու միաբաններու բնակարանները, ի բոլոր սրտէ կ'աղօթենք Տիար Կարապետեանի եւ անոր ընտանեկան պարագաներու բարօրութեան եւ գործոց յաջողութեան համար: Այս առթիւ նաեւ յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք փայտեայ նոր խորանի նուիրատուներ՝ Տիարք Ալեքսեյ Ազարեանի, Կարէն Վանէցեանի, Վաղինակ Մինասեանի, Արսէն Աթաջանեանի եւ Վրասիմիր Զարգարեանի, ինչպէս նաեւ Մկրտութեան Աւագանի նուիրատուներուն՝ Տիարք Լեւոն Գէորգեանի, Նարեկ Պատիրեանի եւ Միսաք Բարսասանեանի: Թող օրինեալ ըլլայ կամբքը Ամենակալ Աստուծոյ որ մեզ արժանացուց այս պատմական օրումն, ծառայելու Իրեն եւ սպասարկելու Իր Տան»:

ԿԱՐՏԻՆԱԼ ԿՈՒՐՏ ՔՈՒՏԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

4 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 4-ին, Պատրիարքարանի մէջ Նորին Ամենապատուութիւն՝ Տ. Նուրիան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրն ընդունեց Քրիստոնէական Միասնութեան Պապական խորհուրդի նախագահ՝ Կարտինալ Կուրտ Քոխին: Հանդիպման ընթացքին Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր բարձր գնահատեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Կաթողիկ եկեղեցիներու միջեւ եղած եղբայրական յարաբերութիւններն ու համագործակցութեան ոգին: Կարտինալ Քոխ շնորհակալութիւն յայտնելով Պատրիարք Սրբազան Հօր, ուրախութեամբ յայնտեց, թէ իր համար մեծ պատիւ է գտնուիլ Հայոց Պատրիարքարանի կամարներուն տակ, ազգի մը Պատրիարքարանէն ներս, որ առաջինն ընդունած է Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնք, որն ունի քրիստոնէական խոր արմատներ, հարուստ մշակոյթ եւ հակառակ բազմաթիւ արհաւիրքներուն մինչեւ այսօր անսասան պահպանած է քրիստոնէական իր արժէքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ ՏԻԱՐ ԷՏՈՒԱՐԴ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

6 Նոյեմբեր, 2017-ին, պաշտօնական այցով Իսրայէլ կը գտնուէր ՀՀ Արտաքին Գործոց Նախարար՝ Պրն. Էտուարդ Նալպանտեան: Երեկոյեան Պրն. Նալպանտեան ընկերակցութեամբ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Պրն. Արմէն Մելքոնեանի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Պրն. Է. Նալպանտեանի այցը Իսրայէլ խորհրդանշական էր, քանի որ անիկա տեղի ունցեալ երկու երկիրներու միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեայ յոբելինական տարուայ ընթացքին: Անիկա լաւ հնարաւորութիւն էր անցեալ ճա-

նապարհը գնահատելու եւ յարաբերութիւններու զարգացման ուղղութեամբ նոր քայլեր ձեռնարկելու համար:

Այցի ընթացքին, Պրն. Նալպանտեան Իսրայէլի Վարչապետ Պրն. Պէնիամին Նաթանեահուի հետ հանդիպման ընթացքին հանգամանակից քննարկեցին հայ-իսրայէլական երկկողմ օրակարգի հարցերը՝ միջազգային կառոյցներէն ներս համագործակցութեան շուրջ: Քննարկուեցան նաեւ երկկողմ առեւտրատնտեսական կապերու աշխուժացման, գործարար կապերու խթանման, իրաւապայմանագրային դաշտի ընդլայնման եւ միջազգային կառուցներէն ներս փոխյարաբերութեանց սերտացման, տեղեկատուութեան, գիտութեան եւ կրթութեան, զբօսաշրջութեան, գիւղատնտեսութեան բնագաւառներու համատեղ ծրագիրներու իրականացման հնարաւորութիւններու մասին հարցեր: Անդրադարձ եղաւ նաեւ Երուսաղէմի մէջ հայկական հարուստ պատմամշակութային ժառանգութեան:

**«ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ» ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿ
ՏԻԿ. ԱՆՏՈՆԻԱ ԱՐՍԼԱՆԻ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ**

7 Նոյեմբեր, 2017-ին, Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ «Արտոյտներու ագարակը» (իտալերէն՝ «La masseria delle allodole») գրքի հեղինակ՝ Տիկ. Անտոնիա Արսլան: Հանդիպման աւարտին Տիկ. Արսլան Պատրիարք Սրբազան Հօր նուիրեց իր հեղինակած «Արտոյտներու ագարակը» գիրքը:

Գրող Անտոնիա Արսլան հայկական ծագում ունի: Անոր մեծ հայրը ժամանակին մականունը «Արսալեան»էն փոխած է «Արսլան»ի: Ընտանիքի յիշողութիւններու հիման վրայ, ան կը գրէ «Արտոյտներու ագարակը» վերնագրով պատմական վէպ մը, որ կը պատմէ Հայոց ցեղասպանութեան ժամանակ Թուրքիոյ մէջ գտնուող հայկական ընտանիքի մը ողբերգութեան մասին: Այս գիրքով ան փորձած է ցոյց տալ ողջ հայ ազգի ողբերգութիւնը, 1915-ին վերապրած ցեղասպանութիւնը: Գիրքն արժանացած է 15 գրական մրցանակներու, թարգմանուած է 20 լեզուներու եւ շատ անգամներ վերահրատարակուած է: Միայն Իտալիոյ մէջ այն հրատարակուած է ութ անգամ: 2007-ին Տաւիանի եղբայրներու կողմէ գիրքի հիման վրայ «Արտոյտների ագարակը» վերնագրով շարժապատկեր մը նկարահանուած է:

**ԿԻՒՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՄԻՋԵՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ, ՓՈՒՆԸՄԲՈՒՄԱՆ
ՅՈՒՇԱԳԻՐ-ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ**

9 Նոյեմբեր, 2017-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանի եւ Հայաստանի Ազգային Գրադարանի միջեւ ստորագրուեցաւ համագործակցութեան, փոխըմբռնման յուշակիր-պայմանագիր: Համագործակցութեան յուշագիր-պայմանագրի ստորագրման նպատակով Սուրբ Երկիր հրաւիրուած էր Հայաստանի Ազգային Գրադարանի Տնօրէն՝ Պրն. Տիգրան Զարգարեան: Յուշագիր-պայմանագրի ստորագրման արարողութեան ներկայ էին նաեւ Տնօրէն Ժողովի ատենապետ՝ Հոգեշնորհ Տ. Մամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան եւ Պատրիարք Սրբազան Հօր Գաւազանակիր եւ անձնական քարտուղար՝ Հոգեշնորհ Տ. Ներսէս Արդ. Արոյեան:

Յառաջիկային համագործակցութեան ընթացքին կ'իրականացուի Միոն ամսագրի բողոքներու եւ Մայր Ցուցակ Ձեռագրացի 11 հատորներու թուայնացում, գիրքերու թուային պատճեններու փախանցումներ եւ աշխատակիցներու փոխայցեր:

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ



Armenian Orthodox Patriarchate

Jerusalem, 26th Dec 2015

Project: St. James Cathedral structural works & renovation

Subject: Technical Summary sheet for the St. James project –Final

According to your request and for the needs of publishing a special edited newspaper subject; here is written all the issues related to the works done for the restoration of the project with mentioning the resulted **aspects and observations**:

P.S Kindly note that the project is summarized as per its chronological order

- Ballout construction won the bid and officially awarded this to start the work by 1st July 2015. The contractor had possessed the site in the 22nd of June preparing the safety measures around the project and the buffer zone
- The contractor applied his insurance for the project as per standards and called a specialized company to guarantee any prospected damage of the old paintings
- The project parts are: the southern narthex and upper gallery structural works, the main church roof pointing and then the st menas/Stephan roofs works. The works in the mentioned parts include some internal works as mentioned in the BOQ
- The contractor spent **10 days** in covering all the pictures and paintings in the southern narthex and upper gallery which are the two basic parts in the church for restoration
- The contractor installed the scaffolding on both southern narthex and upper gallery façade for implementing the needed pointing and stone patching works.
- The contractor cleaned the southern narthex upper vaults using lime with injection for cracks
- The contractor meanwhile cleaned the upper gallery façade using water jet and removed the old pointing. Then applied the adequate lime mortar with special mixture
- The contractor removed all old pointing layers in the surrounding parts of the main church roof/dome and the st menas/stephane roofs and facades and applied new lime pointing with adequate stone patching, painting of rails etc..
- The contractor applied the needed lime pointing for all the surfaces that are renovated
- The contractor removed the pointing on the southern narthex wall and main church wall facing this roof and then applied the needed pointing

The southern Narthex(specialized restoration module):

- 1) The contractor removed the tiles after marking them for the two locations and had been stored in an appropriate location
- 2) The contractor removed the debris on the southern narthex roof until reaching the structure of the vaults.

- 3) The contractor had returned back only 30% of the good soil after applying lime grout on the structural parts found of the vaults of the southern narthex waiting for the YTONG crushed aggregate
 - 4) *Apply the steel structure as per a detailed design prepared by the expert engineer (Leonardo Di Marco) , the specialized structure solved any future building movement as per a 3D models prepared by the engineer*
 - 5) Apply the YTONG and then the concrete slab on grade
 - 6) Apply the water outlets above the concrete slab and also the isolation layer coat
 - 7) Tiles and pointing
 - 8) Building old stones walls to cover the underneath stones found during digging and install new coping stone
 - 9) Finish works on the southern narthex façade and especially the bulging walls
- **The upper Narthex(external):**
 - 1) The contractor removed the tiles after marking them for the two locations and had been stored in an appropriate location
 - 2) The contractor found a lime screed direct below the tiles in the upper gallery and this lime screed is strong enough and will not be removed
 - 3) Apply the steel connections for the roof as per design prepared
 - 4) Close well the cracks using lime injection
 - 5) Paint the roof with isolation material
 - 6) Tiling the same removed old stone tiles with appropriate slope and good pointing grout
 - **The Main church :**
 - 1) Install a well packed and closed scaffolding system for the main church vault systems' restoration and main dome works (main church deck)
 - 2) Works of removal plaster and re-plaster using special materials and mixture as specified in the BOQ details
 - 3) Motive works for the main dome from inside
 - 4) Painting works using lime wash paint
 - **The internal south Narthex & upper gallery & St Menas:**
 - 1) The contractor applied all scaffolding towers for structural stabilization for the vaults' system in the main parts of the space
 - 2) Works of removal plaster and re-plaster for the humid parts using special lime material
 - 3) Painting works for all the space after drying the surfaces. Note that the painting will be revised during the (5) *YEARS GURANTEE* provided through the contractor

General Advantages of this project:

- a) The project's implementation in its new experience was done through a well oriented design team that included structural expertise from Italy & local engineers and one architect.
- b) The management of site in front of the Israeli Antiquity authority helped to diminish any intervention of the mentioned authority on the progress of the works and save time for the dedicated time plan
- c) The architect in cooperation with the fathers succeeded to save found crosses & old inscriptions found on the stones and they are documented with the church

- d) The project was implemented within the designed scope of work and budget with not more than 10% variations occurred and approved by the Fr. Baret
- e) The contractor offered an official 5 years of maintenance guarantee to this holy site where the renovation *will be tested and maintained*

Yours,

Architect Philip Dahabreh

Armenian Orthodox Church
SAINT JAMES CATHEDRAL - RESTORATION WORKS
Old city - JERUSALEM


Summary of Totals	George Ballout
PART 1 - UPPER GALLERY - EXTERNAL	₪263,500.00
PART 1 - UPPER GALLERY - INTERNAL(WITH PROVISIONAL)	₪64,700.00
PART 2 - THE SOUTHERN NARTHEX - EXTERNAL	₪476,675.00
PART 2 - THE SOUTHERN NARTHEX - INTERNAL	₪30,800.00
PART 3 - ARCHANGELS CHURCH - EXTERNAL	₪108,150.00
PART 3 - ARCHANGELS CHURCH - INTERNAL	₪62,400.00
PART 4 - ST. MENAS AND STEPHAN - EXTERNAL WORKS (Later stage)	₪110,300.00
The Main Church Platform JOB	₪60,000.00
Consultants' Supervision, design & management	₪80,000.00
TOTALS SUMMARY	₪1,256,525.00

Armenian Bankers in the Ottoman Empire

by
M.H. Bouldoukian
Deputy Governor
1985-1990
Banque Du Liban

Synopsis

The Book



An overview of Armenian Bankers operating in the Ottoman Empire from the 15th century onwards. Armenians in the Levant were bankers throughout history who have collaborated alongside with Armenian Merchants. Their ancestors were the KHOJAS, the CHELEBIS and the AMIRAS of Constantinople Armenians. Ample information on this class of citizens. Chapter B provides with practical information on Armenian Merchants and Bankers and their business practices in the Ottoman Empire; such as business law, types of merchants, definition of banker, the business of trades of the period, commercial organizations, trade activities. Issues such as letters of credit, negotiable contracts, money orders, payments systems, trade bills, money exchange activities and transfer agents.

Chapter C is about the fate of Armenian Capital at the end of the Ottoman Empire, 1915-1923. Families of reputed bankers and business entrepreneurs and enterprises that toiled throughout centuries in the Ottoman Empire for the capital formation and economic development and technological advancement of the Empire were detained in the end, their wealth confiscated and looted ungratefully by the envious apparatus of the Turkish Government.

Chapter D describes the overseas Armenian bankers in the Empire: in Egypt the region of Mohamed Ali in the 19th century and in Lebanon after 1922.

Chapter E explains briefly the Monetary System of the Ottoman Empire in the 19th century and the establishment of money exchange regulations.

Chapter F presents the list of most famous Armenian business enterprises from the 15th century till 1915; Finances and Financiers, Enterprises, Entrepreneurs and Armenian Amiras.

Chapter G is a recap of all Minority bankers in the 19th century operating in the Ottoman Empire, financing the Sultans, the Sublime Porte, Mint Farmers, Heads of Bankers Corporations; Bankers of Janissaries, Bankers of High Dignitaries, Bankers that were executed or their properties confiscated.

In chapter H, Conclusive Remarks. For their reputation, expertise and the successful functioning of the complex trade and exchange operations in the Empire, Armenian Bankers were all bestowed Nobility and Aristocratic titles, given Royal Medals of highest rank, as compensation for performance and loyalty.

The last chapter I, Annexes, the author presents live samples of bills of exchange used by Armenian Merchants and Bankers in four languages: Italian, Ottoman, French and Armenian.

Who can benefit from this book

Primarily, it must appeal bank executives and staff worldwide. Several topics discuss the services that was rendered by these bankers to the international and national communities in financing trade through bills of exchange, lending to dignitaries in the empire and how private banking operated when depositors of banks today did not exist.

The book is being historical, it must appeal a vast sector of societies interested in Levant history, especially the financing of economic activities of societies in the absence of modern banking and central banking. Risk taking in lending was perhaps one of the professional secrets of these bankers. In historical perspective, these bankers had learned their job from “Markets” rather than universities in performing their duties.

The book also appeals academics, professors, students and the public at large.

Finally, it must appeal the international communities interested in Levant history of the Ottoman Empire from 1500 till 1915 and beyond.

The author

A score of books and Award – winning academic papers have been authored on international banking, correspondent banking and banking systems of Lebanon and Armenia.

Former Vice Governor of the Central Bank of Lebanon, 58 years of banking career in major international banking institution, Bank of America, Chemical Bank. BACB, HSBC, BLF, BANK of Beirut and Credit Libanais at present. A central banking consultant at the EU’s TACIS program in five republics of the former Soviet Union, Central Bank of Russia. Tyumen Oblast, Kazakhstan, Uzbekstan, Georgia and Armenia from 1992 - 1993, and speaker in international conferences since 1977. Finally an academic from 1969 to 2009 having served four major universities in Lebanon. Extensive traveler since 1959.



Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Է Ր Ն Ե Ր

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 2016 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

- 1. Գոհար Տօնոյեան Սր. Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ ոսկի մատանի մը:
- 2. Ջուլիետա Ասատրեան Սր. Հրեշտակապետաց վանքին կը նուիրէ գոյգ մը ոսկի օդեր:
- 3. Տիկ. Մարի Միսիսիւեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին եւ կողմնակի սեղաններուն կը նուիրէ ճերմակ փուլագարդ ծածկոցներ:
- 4. Հայրենաբնակ Տիկ. Մուսաննա Գրիգորեան, Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:

(Յունուար)

5. Տիրամայր Լուսինէ Աթաջանեան եւ Մուսկուլայի Հայ Հաւատացեալ Տիկնանց Յանձնախումբը, Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն տասնմէկ դեղին ծաղկաւոր շուրջառ՝ առանց ճարմանդի:

6. Հայաստանէն Նունէ Միմոնեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ շղթայով Ս. Աստուածածնի փոքր պատկեր մը Մանուկ Յիսուսը ձեռքին եւ շղթայով խաչ մը:

7. Հայրենաբնակ Ալինա Հայրապետեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ մատանի մը՝ ոսկի շրջանակով եւ թանկագին քարով:

(Ապրիլ)

8. Կ. Պոլիսէն Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղային խորհուրդը Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն խոշոր փարչ եւ կոնք՝ հետեւեալ յիշատակարանով. «Յիշատակ է շնիչս եւ կոնքս ի վայելումն Ս. Յակոբեանց Մայրավանքին.- խնդրակատար Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղային խորհուրդէն, Օրթագիւղ - Կ. Պոլիս, Յունիս, 2016»:

9. Կ. Պոլիսէն Օրթագիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հաւատացեալներ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի երկու Ս. Սեղաններու կը նուիրեն ճերմակ ծածկոցներ:

10. Կ. Պոլիսէն Տիար Մկրտիչ Մերթշիմշէք Սր. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 90 ոսկեգօծ ճարմանդ:

(Յունիս)

11. Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրս Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին կը նուիրէ ասեղնագործ գորփուրայ մը՝ կարմիր մետաքսէ յատակի վրայ:

(Յուլիս)

12. Տիար Վարդան Մինասեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով խաչ մը:

13. Յասմիկ Ագարեան Սր. Յակոբեանց Մայր Տաճարի Սր. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը:

14. Ամերիկայի Ուոթերթաուն քաղաքի Սբ. Յակոբ եկեղեցւոյ Թադական Ծուխը Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 17 արծաթեայ ճարմանդ:

15. Կ. Պոլիսէն Փայլուն Սաթըլմիշ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ ՄՅ գրութեամբ արծաթեայ խոշոր բոժոժներ:

(Օգոստոս)

16. Ս. Աթոռոյս Միաբաններէն Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, Յոպպէի Հայոց Ս. Նիկո դայոս վանքին կը նուիրէ լման պատարագիչի զգեստ մը՝ սաղաւարտով եւ վակասով միասին:

17. Մաֆալիէն Տիկ. Գայիանէ Յարութիւնեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Սբ. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ շղթայով խաչ մը եւ ոսկի ականջօղեր՝ ադամանդէ քարերով:
(Նոյեմբեր)

18. Մի ոմն Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ ձեռաց խաչի երեսուն բռնիչ:

19. Հայաստանէն ժամանած ուխտաւոր Տիկ. Անահիտ Խաչատրեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ պզտիկ արծաթեայ խաչ մը:
(Դեկտեմբեր)

ՍԵԻՍՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ



Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Ճարաթ, 1 Յուլիս.- Գիւտ նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, պատարագեց եւ քարոզեց Տ. Գեորգ Արդ. Հայրապետեան:

Կիրակի, 2 Յուլիս.- Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. վրդ. Չաքարեան:

Հինգշաբթի, 6 Յուլիս.- Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մահակայ եւ Մեսրոպայ: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սամուէլ Ծ. վրդ. Աղոյեան:

Ճարաթ, 8 Յուլիս.- Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ, Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդիստոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց. ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 9 Յուլիս.- Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց, ապա միաբան հայրեր մեկնեցան Գեթսեմանի պարտէզ. Ս. Կոյսի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ, ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Նախագահեց՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ճարաթ, 15 Յուլիս.- Սրբոց երկուտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի երեքտասաներորդ Առաքելոյն: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէլճեան:

Կիրակի 16 Յուլիս.- Բարեկենդան Վարդավառի պահոց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ խորանի հիւսիսային կողմը գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ, պատարագեց եւ քարոզեց Տ. Պարեո Ծ. վրդ. Երեցեան:

Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածնի մատրան մէջ. ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Աղոյեան:

Ճարաթ, 22 Յուլիս.- Յիշատակ Տապանակին Հնոյ եւ տօն նորոյս Ս. Եկեղեցոյ: Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածնի մատրան մէջ. ժամարարն էր Տ. Ներսէս Արդ. Աղոյեան:

Նախատօնակէն ետք Միաբանութիւնը «Օրինեցէք զՏէր» շարականը երգելով քարձրացաւ Պատրիարքարան:

Իրիկնադէմին Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեացէ՛» ի եւ Հսկման արարողութիւնները. հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 23 Յուլիս.- Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ սեղանին վրայ մատոյց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

Երկուշաբթի, 24 Յուլիս.- Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. վրդ. Չաքարեան:

Ճարաթ, 29 Յուլիս.- Սրբոյն Թադեոսի Առաքելոյն մերոյ եւ Սանդիստոյ կուսին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Ս. Գլխադրի խորանին վրայ. ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. վրդ. Աղոյեան:

Կիրակի, 30 Յուլիս.- Բ. Կիրակի զկնի Վարդավառի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Ս. Կարապետի խորանին վրայ. ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ճարաթ, 5 Օգոստոս.- Սրբոց Որդւոց եւ Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի խորանին վրայ, ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի 6 Օգոստոս.- Գ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Աստուածածնի սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ծաբաթ, 12 Օգոստոս.- Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի խորանին վրայ. ժամարարն էր Տ. Աղան Աբդ. Գոզչեան:

Կիրակի 13 Օգոստոս.- Դ. Կիրակի զկնի Վարդավառի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կարապետի խորանին վրայ ի Ս. Յակոբ. ժամարարն էր Տ. Տիրան Աբդ. Յակոբեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ խաղողի օրհնութիւն:

Ծաբաթ, 19 Օգոստոս.- Եփեսոսի Ս. Ժողովոյն երկու հարիւր հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնի Գերեզմանին վրայ, ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան:

Կիրակի, 20 Օգոստոս.- Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնի գերեզմանի վրայ. ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ծաբաթ, 26 Օգոստոս.- Տօն Ծողակաթի Ս. Էջմիածնի՝ ըստ տեսեանն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. վրդ. Երեցեան:

Կէսօրէ վերջ Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գերթեմանի պարտէզ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը:

Գիշերասկզբին, նոյն Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեացէ»ի եւ Հսկման կարգեր եւ սպա Առաւօտեան ժամերգութիւն: Արարողութիւնները վերջ գտան գիշերուան ժամը 10-ին:

Կիրակի, 27 Օգոստոս.- Վերափոխումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, միաբան հայրեր ինքնաշարժով մեկնեցան Գերթեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տ. Պարետ Ծ. վրդ. Երեցեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, մատոյց օրուան Ս. Պատարագը եւ յաւուր պատշաճի քարոզեց: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան»ի արարողութիւն նախագահութեամբ Ամեն. Ս. Պա-

տրիարք Հօր, սպա Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք:

Երեկոյեան Մայր Տաճարի մէջ կատարուեցաւ «Անդաստան» ժամերգութիւն եւ նախատօնակ նախագահութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Աբբ. Ղարիպեանի:

Երկուշաբթի, 28 Օգոստոս.- Յիշատակ մեռելոց, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխադրի խորանին վրայ, ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթնեան:

Ծաբաթ, 2 Սեպտեմբեր.- Գիշերաւոյն եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեց ի Ս. Յակոբ, սպա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աստուածածնայ խորանին վրայ, ժամարարն էր՝ Տ. Թէոդորոս Վրդ. Չաքարեան:

Կիրակի, 3 Սեպտեմբեր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ: Ժամարարն էր՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Երեքշաբթի, 5 Սեպտեմբեր.- Սըրբոցն Յովակիմայ եւ Աննայի, ծնողաց Ս. Աստուածածնի եւ կանանցն իւղաբերից: Ս. Պատարագ մատուցուեցաւ Գերթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարի Տեսուչ՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեան:

Ծաբաթ, 9 Սեպտեմբեր.- Սրբոց Առաքելոցն Թովմայի, Յակոբայ եւ Ծմաւոնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի խորանի վրայ, ժամարարն էր՝ Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կիրակի, 10 Սեպտեմբեր.- Գիւտ Գօտուոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գերթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ. ժամարարն էր՝ Տ. Ծնորիք Աբդ. Պալոյեան:

Ծաբաթ, 16 Սեպտեմբեր.- Նիկիոյ Ս. Ժողովոյն երեք հարիւր ութ եւ տասն հայրապետացն: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, սպա Ս. Գլխադրի խորանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ, ժամարարն էր՝ Տ. Ներսէհ Աբդ. Աղոյեան:

Կիրակի, 17 Սեպտեմբեր.- Բարեկենդան Ս. Իսաչի պահոց: Ժամերգությունը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ հայկական բաժնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ. ժամարարն էր Տ. Գեորգ Արդ. Հայրապետեան: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Հինգշաբթի, 21 Սեպտեմբեր.- Ծընունդ Ս. Աստուածածնի ի յԱննայէ: Գիշերային ժամերգությունը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ ինքնաշարժով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր գերեզմանին վրայ պատարագեց եւ քարոզեց հանդիսապետ սրբազանը: Ս. Պատարագէն յետոյ կատարուեցաւ հանրապետական մաղթանք Հայաստանի Հանրապետութեան անկախութեան առիթով:

Ճարթթ, 23 Սեպտեմբեր.- Տօն եկեղեցւոյ ի նաւակատիս Ս. Իսաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Գլխաղորի խորանին վրայ: Ժամարարն էր՝ Տ. Գեղամ Ծ. Վրդ. Չաքարեան: Կէսօրէ ետք ժամը 3-ին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Իսաչվերացի մեծահանդէս նախատօնակին, որմէ յետոյ, ըստ սովորութեան, Ս. Իսաչափայտի մատունքը թափօրով փոխադրուեցաւ Ս. Գլխաղորի մատուռէն Աւագ խորան: Գիշերասկզբին, Մայր Տաճարի մէջ պաշտուեցան «Եկեացէ»ի եւ Հսկման կարգեր, հանդիսապետութեամբ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի:

Կիրակի, 24 Սեպտեմբեր.- Տօն Վերացման Սրբոյ Իսաչին: Առաւօտեան կատարուեցաւ ժամերգութիւն եւ «Անդաստան» ըստ սովորութեան: Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիւանապետ՝ Տ. Արշակ Եպս. Իսաչատրեան: Կէսօրէ վերջ, ժամը 3-ին Մայր Տաճարի մէջ կատարուեցաւ Իսաչվերացի մեծահանդէ «Անդաստան»ը, հանդիսապետութեամբ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ ի ներ-

կայութեան տեղացի եւ ուխտաւոր հաւատացեալներու:

Երկուշաբթի, 25 Սեպտեմբեր.- Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղոր, ժամարարն էր՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս եւ ազգիս բարերարներ՝ Կարապետ եւ Գրիգոր Մելքոնեան հարագատներու հոգիներուն համար:

Ճարթթ, 30 Սեպտեմբեր.- Տօն Իսաչի, Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր՝ Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 1 Հոկտեմբեր.- Բարեկենդան Վարագայ Ս. Իսաչի պահոց: Գիշերային ժամերգությունը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ճարթթ, 7 Հոկտեմբեր.- Սրբոցն Գեորգայ Չօրավարին, Աղոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Գիշերային ժամերգությունը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբանությունը մեկնեցաւ Ղապոց Ս. Գեորգ վանքը, ուր համանուն եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան: Ս. Պատարագէն յետոյ Միաբանությունը հիւրասիրուեցաւ Ս. Գեորգ վանքի Հոգեշնորհ Տեսչին կողմէ:

Կէսօրէ ետք Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբանությունը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն եւ Ս. Գերեզմանի ուխտէն ետք, երեկոյեան ժամերգութիւնն ու Վարագայ Իսաչի նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 8 Հոկտեմբեր.- Տօն Վարազայ Սրբոյ Իսաչի: Առաւօտեան ժամը 6:45- ին Միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, Պատանատեղոյն եւ Գողգոթայի ուխտէն ետք ուղղուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները: Ապա Ս. Գերեզմանի վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ. Պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբան եւ Կիպրոսի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Տ. Խորէն Արք. Տողրամանեան:

Ճաբաթ, 14 Հոկտեմբեր.- Սրբոց Եօթանասուն եւ երկու աշակերտացն Զրիստոսի: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Տաճարի գաւիթը, Աւագ դրան հիւսիսը գրտնուող Ս. Գէորգ խորանի վրայ: Ժամարարն էր՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի, 15 Հոկտեմբեր.- Դ. Կիրակի զկնի Իսաչի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան հայրեր փոքր խումբով սարկաւազներ եւ ժառանգաւոր սաներ մեկնեցան Ռամիլ քաղաք: Ս. Պատարագը մատուցուեցաւ Հայոց Ս. Գէորգ մատրան մէջ: Պատարագեց եւ քարոզեց՝ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ճաբաթ, 21 Հոկտեմբեր.- Տօն Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մեր (Տօն ազգային եւ եկեղեցական): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ խորանի վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կիրակի, 22 Հոկտեմբեր.- Ե. Կիրակի զկնի Իսաչի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան հայրեր Լուսարարապետ Սրբազան Հօր նախագահութեամբ մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Ճաբաթ, 28 Հոկտեմբեր.- Սրբոց Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի,

Ղուկասու եւ Յովահաննու: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան հայրեր՝ նախագահութեամբ Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի, մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը ըստ սովորութեան կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի գաւիթը՝ Հայոց Յովհաննու Աւետարանչի մատրան մէջ: Սակայն անձրեւի պատճառով Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարէն ներս՝ Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Աղան Արդ. Գոգչեան:

Կէսօրէ ետք ժամը 3-ին Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Փրկիչ: 1947 թուականէն ի վեր Ս. Փրկիչի մատուռը կը մնար անգործածելի, մատուռն ու խորանը նորոգուեցան այս տարի: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը օժեց Ս. Խորանը, պատկերները եւ մկրտութեան Աւագանը՝ համաձայն կարգաց եւ կանոնաց Հայց. Առաքելական եկեղեցւոյ:

Կիրակի, 29 Հոկտեմբեր.- Զ. Կիրակի զկնի Իսաչի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան հայրեր թափօրով մեկնեցան Ս. Փրկիչ: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կատարեց եկեղեցւոյ օժման կարգը: 1947 թուականէն եօթանասուն տարիներ ետք մատուցուեցաւ առաջին Ս. Պատարագը. ժամարարն էր Տ. Տիրան Արդ. Յակոբեան: Քարոզեց՝ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ի գոհունակութիւն Երուսաղէմի մեր հաւատացեալներուն:

Երկուշաբթի, 30 Հոկտեմբեր.- Սրբոցն Ղունկիանոսի հարիւրապետին, Յովսէփայ Աստուածահօրն, Յովսէփայ Արիմաթացւոյն եւ բարեկամին Զրիստոսի Ղազարու եւ քերց նորա՝ Մարթայի եւ Մարիամու: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա Միաբան հայրեր մեկնեցան Գեթսեմանի պարտէզ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի զերեզմանին վրայ, անհանգստութեան պատճառով Տաճարին Տեսուչ՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայնեանի փոխարէն պատարագեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մազունտեան:

Ճարթթ, 4 Նոյեմբեր.- Սրբոց Երկուսասան վարդապետացն՝ Ռեթեոսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիրիլի Երուսաղեմացոյն, Եփրեմի Խուրին ասորոյ, Բարսղի Կեսարացոյն, Գրիգորի Նիսացոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացոյն, Յովհաննու Ոսկեբերանին եւ Կիրիլի Աղեքսանդրացոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Պարեո Օ. Վրդ. Երեցեան:

Կէսօրէ ետք ժամը 2:15-ին, Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն, ինչպէս նաեւ Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք երեկոյեան ժամերգութիւնն ու Գիւտ Խաչի նախատօնակը պաշտուեցան վերջնոյս կից՝ Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 5 Նոյեմբեր.- Գիւտ Ս. Խաչի: Առաւօտեան ժամը 5:30-ին միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, Հայոց Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ պաշտուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ, ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան: Ապա կատարուեցաւ եռադարձ Մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղոյն շուրջ գլխաւորութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, որ ամպիոփանիի տակ, կենաց փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը լցնող բազմութիւնը: Քրիստոսի Սր. Գերեզմանի առջեւ երգուեցաւ «Խաչի Քո Քրիստոս» շարականը, որուն ընթացքին հանդիսապետ Սրբազան Հայրը խնկարկեց Սր. Գերեզմանին շուրջ: Արարողութիւնները աւարտեցան կէսօրին՝ Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ:

Ճարթթ, 11 Նոյեմբեր.- Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Սր. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Սր.

Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազազեան:

Կիրակի, 12 Նոյեմբեր.- Ը. Կիրակի, զկնի Ս. Խաչի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր նախագահութեամբ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ, ժամարարն էր Տ. Շնորհք Արք. Պալոյեան:

Ճարթթ, 18 Նոյեմբեր.- Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Վրդ. Յովհաննիսեան: Յաւարտ Ս. Պատարագի ըստ սովորութեան, կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյս բարերարուհի Աղանի Ճաւահիրճեանի եւ իր զաւակներու՝ Գրիգորի եւ Սիմոնի հոգիներուն համար:

Կիրակի 19 Նոյեմբեր.- Թ. Կիրակի զկնի Խաչի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց եւ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Գէորգ Արք. Հայրապետեան:

Կիրակի, 26 Նոյեմբեր.- Ժ. Կիրակի զկնի Խաչի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի հիւսիսային կողմը գտնուող Ս. Յովհաննու Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէհ Արք. Ալոյեան:

Պատրաստեց՝

ԳԵՂԱՄ Ծ. ՎՐԴ. ԶԱՔԱՐԵԱՆ

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Բ2. 3 Յուլիս.- Երեկոյեան ժամը 4-ին, Ամերիկայէն ուխտաւորներ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Կիր. 9 Յուլիս.- Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի կազմակերպութեամբ, Աստուածաշնչական սերտողութեան խումբէն 50 ուխտաւորներ այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գ2. 11 Յուլիս.- Երեկոյեան ժամը 4-ին, Գանատահայ դերասանուհի Տիկ. Արսիւնէ Խանճեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Բ2. 3 Օգոստոս.- Առաւօտեան ժամը 10:00-ին, Երուսաղէմի Հապէշ եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Ապա Ամբակոմ այցելեց Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ուր. 4 Օգոստոս.- Երեկոյեան ժամը 4-ին, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Քոնկրէսման՝ Պրն. Ֆրանք Փալոն, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Բ2. 7 Օգոստոս.- Երեկոյեան ժամը 4-ին, Նիւ Եորքէն Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Աբրահամ քահանայ Մալխասեան ուխտաւորներու փոքրիկ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ճբ. 12 Օգոստոս.- Ամերիկայի Մէսսէչուսէթս նահանգի Ֆրէյմինկիէմ քաղաքի Սրբոց Թարգմանչաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Գրիգոր քահանայ Սապունճեան, ընկերակցութեամբ Նիւ Եորքի Սուրբ Ներսէս Ընծայարանի տեսուչ՝ Արժանապատիւ Տ. Մարտիրոս քահանայ Չեւեանի,

իր ծխականներով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գ2. 15 Օգոստոս.- Առաւօտեան ժամը 10-ին, Հրեայ Բարբի Yehuda Breitkept այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Գ2. 16 Օգոստոս.- Առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարքարան եկաւ եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Պապական Նուիրակը:

Գ2. 23 Օգոստոս.- Հին Բաղաքի նոր ոստիկանապետ՝ Պրն. Խայիմ Շմուէլի պաշտօնի ստանձնման արարողութեան ներկայ գտնուեցան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Մեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան եւ դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Կորիւն վարդապետ Բաղդասարեան:

Կիր. 27 Օգոստոս.- Բեթղէիէմի տարածքի նոր ոստիկանապետ՝ Պրն. Մոշէ Ավիի պաշտօնի ստանձնման արարողութեան ներկայ գտնուեցաւ Սուրբ Աթոռոյս դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Կորիւն վարդապետ Բաղդասարեան:

Գ2. 29 Օգոստոս.- Ամերիկայի Ընդհանուր հիւպատոսարանի արարողակարգի պատասխանատու՝ Պրն. Անտրի Տամմ պաշտօնավարութեան շրջանը աւարտելուն առիթով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան, Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ հարաւ-արեւմտեան Ֆլորիտայի եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Փիթըր Իյթըն:

Գ2. 30 Օգոստոս.- Առաւօտեան ժամը 10-ին, Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հոգեշնորհ Տ. Ֆրանչէսկօ Փաթօն, ընկերակցութեամբ իր փոխանորդ՝ Տ. Տոպրոմիր Ճասթալի եւ Տ. Աթանասի, այցելեցին Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունե-

ցան Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրբ Տեղեաց մէջ կատարուող նորոգութեանց վերաբերեալ հարցեր:

Էջ. 31 Օգոստոս.- Իսրայէլի Արտաքին Գործոց Նախարարութեան Կրօնից Վարչութեան պետ՝ Տիկ. Ռեկել Շարոն, այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Էջ. 4 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Երուսաղէմ հին քաղաքի նորանշանակ Ոստիկանապետ՝ Տիար Խաիմ Շմուէլ, իր նոր պաշտօնը ստանձնելուն առիթով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Նոյն օրը երեկոյեան ժամը 6-ին, Բերթելեմի նորանշանակ զինուորապետ՝ Տիար Մոշէ Ավի ընկերակցութեամբ նախկին զինուորապետ՝ Տիար Տանի Բոհէնի, քրիստոնէայ համայնքներու պատասխանատու՝ Տիար Քֆիր Շլոմոյի եւ Երուսաղէմի Ներքին Գործոց Նախարարութեան քրիստոնէայ համայնքներու պատասխանատու Տիար՝ Սէզար Մարժիէի, նոր պաշտօնը ստանձնելուն առիթով այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը բոլոր հիւրերուն նուիրեց վերջերս հրատարակուած հրէայ պատմաբան Եսիր Օրոնի հեղինակած Հայոց Յեղասպանութեան նուիրուած գիրքը:

Էջ. 11 Սեպտեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին, Երուսաղէմի Ղպտի եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Անպա Անտոնիոս այցելեց Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Գերաշնորհ Տ. Անպա Անտոնիոս Պատրիարք Սրբազան Հօր նուիրեց Աստուածամօր զեղեցիկ սրբապատկեր մը:

Էջ. 14 Սեպտեմբեր.- Հայաստանէն Արժանապատիւ Տ. Մեսրոպ քահանայ

Արամեան եւ Մոսկուարնակ գործարար եւ բարերար՝ Տիար Ռուբէն Վարդանեան այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Էջ. 18 Սեպտեմբեր.- Հայաստանէն՝ Մասիսի Ս. Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Աշոտ քահանայ Մաֆարեան եւ Արթիկի՝ Լնպատավանքի հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Լեւոն քահանայ Յովհաննիսեան 40 հոգինոց ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը: Խումբին հետ Երուսաղէմ ժամանած էր նաեւ Մխչեանի՝ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Միքայէլ քահանայ Նուրիհանեան:

Ուր. 22 Սեպտեմբեր.- Հայաստանէն՝ Արգաւանդի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Գրիգոր քահանայ Յովհաննիսեան ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Շք. 23 Սեպտեմբեր.- Ամերիկայէն՝ Ֆիլատելֆիոյ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Օշական վարդապետ Կիւլիկիւեան, ուխտաւորներու փոքրիկ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Նոյն օրը երեկոյեան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Դիւանապետ՝ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեան, Խաչվերացի տօնին առիթով հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ:

24 Սեպտեմբեր.- Երեկոյեան ժամը 7-ին, Նոթր-Տամ պանդոկին մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս Պրն. Յոլակ Մոմնեանի, տօնախմբուեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 26-ամեակը, որուն ասնակցեցաւ Լուսաւարապետ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեանս կարգ մը հոգեւոր հայրերու:

Գջ. 26 Սեպտեմբեր.- Պահայիներու համաշխարհային կեդրոնի ներկայացուցիչ

Տիար Դաւիթ Փրիմէն այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Դժ. 27 Սեպտեմբեր.- Ամերիկայէն Ս. Ուիստիս միաբաններէն Հոգեշնորհ Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Մագուտեան ժամանեց Ս. Աթոռ:

Բժ. 16 Հոկտեմբեր.- Հայաստանէն՝ Արարատեան Հայրապետական Թեմի Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցւոյ ծիսակատար քահանաներէն՝ Արժանապատիւ Տ. Եսայի Քահանայ Արթնեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին, Շուէտական եկեղեցւոյ խորհուրդի անդամներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ծբ. 21 Հոկտեմբեր.- Երեկոյեան ժամը 7-ին, Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան վարչութիւնը եւ Երիտասարդուիեաց յանձնախումբը իր անդամանդամուհիներով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Բժ. 30 Հոկտեմբեր.- Սուրբ Փրկչի մատրան բարերարներ՝ Տիարք Նարեկ Պատիրեան, Լեւոն Գէորգեան, Տիգրան Գրիգորեան, Արտակ Մելքոնեան, Սարգիս Խաչատրեան, Արման Յարեան, Արսէն Աթաջանեան Սուրբ Փրկչի վանքի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ծնորիք Աբեղայ Պալոյեանի եւ Հոգեշնորհ Տ. Էմմանուէլ Վարդապետ Աթաջանեանի ուղեկցութեամբ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Ծբ. 4 Նոյեմբեր.- Հրեայ գրող, հրապարակախօս, «Արարատցիները» գիրքի հեղինակ՝ Տիգրան Օրա Ախիմէի, ընկերակցութեամբ՝ Դոկտ. Ալիւայի, փոքրիկ խումբով այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպումէն ետք Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց Յեղասպանութեան 102-րդ ամեակին առիթով տպագրուած Օրա Ախիմէիի հեղինակած «Արարատցիները» գրքի մասին սեմինար:

Նոյն օրը երեկոյեան ժամը 7:30-ին Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Փրանսայէն ժամանած հայկական նուագարաններու «Սպիտակ» խումբին համերգը, որու ընթացքին ներկայացուեցան հայկական ժողովրդական, աշուղական ու գուսանական երգեր: Երեկոն իր լրումին հասաւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի փակման եւ օրհնութեան իօսքով:

Բժ. 6 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 10:30-ին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ընդունեց աշխարհի ամենէն մեծ հայ գրականութեան պահոցի՝ Հայաստանի Ազգային Գրադարանի տնօրէն՝ Տիար Տիգրան Չարգարեանը:

Բժ. 13 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին, Պատրիարքարան այցելեցին եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցան Հայաստանէն՝ Տաւուշի Թեմի փոխառաջնորդ՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Վարդապետ Մխիթարեան, Սենթ Փեթերսպուրկէն՝ Ս. Յարութիւն եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Եփրեմ Քահանայ Չարգարեան, Կալինինկրատէն՝ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Թորոս Քահանայ Եսայեան եւ սրբանկարիչ՝ Տիար Արտեմ Մելքոնեան:

Նոյն օրը ժամը 11:30-ին, Հայաստանէն Երուսաղէմ ժամանած ուխտաւորներ, առաջնորդութեամբ Կոնդի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հավիւ՝ Արժանապատիւ Տ. Դանիէլ Քահանայ Բաղումեանի եւ ընկերակցութեամբ՝ Մովսէս գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Աբէլ Քահանայ Քարտաշեանի այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ գաւազանակիր՝ Տ. Ներսէսի Աբեղայ Արղեանի այցելեց Պատրիարքութեան Սայր Դիւան: Այցի ընթացքին Սայր Դիւանի տնօրէն՝ Պրն. Արշակ Բանուչեան, թարգմանիչ՝ Մուհամմատ Մաֆատի եւ քարտուղար՝ Սերեոժա Սարկաւազ Պետրոսեան Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուցին հին վկայագրերու թուայնացման ընթացքի, ընթացիկ աշխատանքներու եւ ապագային իրագործելի ծրագիրներու մասին:

Գ2. 15 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Սուրբ Երկրի Համապարանի Դոկտ. Ստեֆըն Փըֆան: Հանդիպման ընթացքին Տօք. Փըֆան Պատրիարք Սրբազան Հօր նուիրեց «The Nazareth Jesus Knew» գիրքը:

Ե2. 16 Նոյեմբեր.- Կեսօրէ ետք ժամը 3-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր ընդունեց Երուսաղէմի Հին քաղաքի նախկին ոստիկանապետ Տիար Ալի Ռոֆին:

Ուր. 17 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 11-ին, Փրանսայի Թեմի առաջնորդ՝ Գե-րաշնորի Տ. Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Գ2. 21 Նոյեմբեր.- Երեկոյեան ժամը 4-ին, Հայաստանէն Արժանապատիւ Տ. Ժիրայր Քահանայ Խաչատրեան, ընկերակցութեամբ Արժանապատիւ Տ. Սմբատ Քահանայ Սարգսեանի, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ե2. 23 Նոյեմբեր.- Ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորի Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան Հայաստանէն ժամանած նոր աշակերտներու հետ միասին այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը: 14 աշակերտներէն 3-ը համշէնահայեր են, 11-ը Հայաստանէն:




**Պատրաստեց՝
ՆԵՐՍԵՔ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ**

ԵՂԻՎԱՐԴԻ ԽՈՒՆԵՐԷՆ

Ծանծաղամտութիւն է պատճառաբանել թէ դարուն ոգին եւ ըմբռնումները շատ մը բաներու կարգին վտանգած են նաեւ կրօնական ըմբռնումներու եւ աւանդութեանց շէնքը: Ճիշդ է թէ աշխարհ կ'ապրի շրջան մը, որ շատ նման է հին աշխարհի վախճանին, թէ շատ բան ջնջուած ու փոխուած է միտքերէն, թէ շատ յոյսեր խորտակուեցան ներկայ մարդկութեան, զորս ան սնոյց իր սկզբնական օրերուն: Լայն խրամատներ բացուած են կեանքի եւ անոր նշանակութեան միջեւ: Սակայն ինչպէս բնութիւնը, նոյնպէս կեանքը կը հպատակի, հայթայթելով եւ ապահովելով յաջորդականութիւն մը ժամանակներու, եւ փոխ-յարաբերութիւն մը զանազան կերպի մշակոյթներու եւ հայեցողութեանց: Ինչպէս կան լուսաւոր եւ խաւար շրջաններ, նոյնպէս իրար կը յաջորդեն կեանքի սրբազան ու աշխարհիկ երեսներ: Ոմանց համար այս վիճակները յեղափոխիչ՝ եւ ուրիշներու համար հակազդեցութիւններ կը թուին, իրողութիւն է որ անոնք սերտօրէն կապուած են իրարու, պէտք չէ սարսափիլ անոնց իրերայաջորդ նկարագրէն:

«Ազգային եւ եկեղեցական անդրադարձումներ» Երուսաղէմ 2017

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Պատրիարքական Ս. Աթոռոյս կողմէ 1000-ական տպաքանակով լոյս տեսան Եղիվարդի «ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ», «ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՉԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐՈՒՒ» եւ «ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆՔ» անուամբ գեղատիպ երեք հատորները:

«ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ» 479 էջերէ բաղկացած հատորը լոյս ընծայուեցաւ ազնիւ մեկենասութեամբ Տիար Շահէ Պոյանեանի, իր հօր՝ Գեորգ Պոյանեանի յիշատակին:

«ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՉԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐՈՒՒ» 343 էջերէ բաղկացած հատորը լոյս ընծայուեցաւ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի հաստատման 90-ամեակի բարերաստիկ առիթով, կարգադրութեամբ՝ Թեմի բարեջան առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի եւ մեկենասութեամբ՝ նոյնինքն Արեւմտեան Թեմին:

«ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆՔ» 222 էջերէ բաղկացած հատորը լոյս ընծայուեցաւ ազնիւ մեկենասութեամբ Տիկին Արփի Մարտիրոսեանի եւ զաւակներուն Կարպիս, Վիգէն եւ Սելան Մարտիրոսեաններու, ի յիշատակ իրենց սիրեցեալ ամուսնոյն եւ հօր՝ Յովսէփ Մարտիրոսեանի:

Հատորներուն մէջ ամփոփուած են գլխաւորաբար Պատրիարքութեանս պաշտօնաթերթ՝ Սիոնէն առնուած խմբագրականներ եւ յօդուածներ, որոնք կու գան անգամ մը եւս ընթերցողին մտքին ու սրտին առաջ պարզելու իրաւ նկարագիրը իր ժողովուրդով ու եկեղեցիով մտահոգ հայ հոգեւորականին, բանալով միաժամանակ ընթերցողին աչքերուն առաջ ժամանակակից պատմութիւնն ու ընթացքը իրերու, որոնք կը վերիվայրէին մեր Ազգային եւ Եկեղեցական կեանքը Սփիւռքէն, Հայրենիքէն եւ մանաւանդ Երուսաղէմէն ներս: Մոյն հատորները, որ ձեւով մը պատմութիւնն են Սուրբ Երկրի հայ բնակչութեան եւ մանաւանդ վանքաբնակ ժողովուրդին - Բ. Համաշխարհային պատերազմին, ինչպէս նաեւ Պաղեստինի Արաբ-Հրեայ բախումներու ընթացքին - հարազատ արտացոլացումն են Եղիվարդի ներաշխարհին, երբ ան իր ամբողջ էութեամբ տէր կը կանգնէր այս Սրբազան Հաստատութեան, որ կարծէք իրեն սահմանուած էր նախախնամութեան կողմէ:

ՀՈԳԵՃՆՈՐՀ Տ. ԱԲԵՏԻՍ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՓՐԱՃԵԱՆ



Աւագանի անունով Մատթեոս: Ծնած է 10 Դեկտեմբեր 1966-ին Լիբանան, Պէյրուս: Սկզբնական կրթութիւնը ստացած է Անթիլիասի Մարտիկեան Ազգային Վարժարանը: Ապա, 1979-ին կ'աշակերտէ Մեծի Տանն Կիլիկիոյ՝ դպրեվանքին մինչեւ 1982: 1981-ի Մայիս ամսուն դպիր կը ձեռնադրուի ձեռամբ՝ Գերաշնորհ Տ. Տաթև Արքեպիսկոպոս Սարգիսեանի: 1982-1985 կ'աշխատի իբրև ելեքտրագործ: 1985-ին Երուսաղէմ գալով՝ իր ուսումը կը շարունակէ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի յարկէն ներս: 1987 Յունուար 6-ին, Սուրբ Ստեփանոսի տօնին, սարկաւազ կը ձեռնադրուի ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճեանի: Սարկաւազական չորս տարիներու ուսման ընթացքին զուգընթաց, վարած է մատակարարութեան պաշտօնը իբրև տեսուչ մատակարար: 1991-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ օրուան Պատրիարք՝ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի: 1994-2006 տարիներուն եղած է Մարտիկեան Թանգարանի Տեսուչ: 1996-1999 տարիներուն կ'ուսանի Երբայական Համալսարանին մէջ: 1998-1999-ին կը վարէր Աւագ Թարգմանի պաշտօնը: 1999-2014 եղած է Կալուածոց Տեսուչի օգնական: 1999-2017 տարիներուն կը վարէր Մայր Դիւանի հին վկայագրերու գրասենեակի տեսուչի պաշտօնը: 2002-ին՝ ուսուցիչ Ժառանգաւորաց Վարժարանի: 2002-2007 տարիներուն ուսանած է իրաւաբանութիւն: 2004-ին ստացած է վարդապետական չորս աստիճաններ, ձեռամբ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի: 2005-2010 տարիներուն տեսուչն էր Հայֆայի, Եաֆայի եւ Ռամլէի եկեղեցիներու: 2005-2014 տեսուչ՝ Եաֆայի եւ Ռամլէի եկեղեցիներու: 2016-ի Յուլիս 6-ին կը նշանակուի Յորդանանահայոց Առաջնորդ եւ Պատրիարքական Փոխանորդ: 2017-ի Օգոստոս 10-ին ստացաւ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Նուրիան Արքեպիսկոպոս Մանուկեանի:

Սարկաւազական ձեռնադրութիւն





Սարկաւազական ձեռնադրութիւն
Պատարագիչ՝ Ներսէս Արդ. Արդեան



Խաչվերացի Մեծահանդէս Անդաստան



Տօն Այլակերպութեան Տեառն
Պատարագիչ՝ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայր
Սպասարկողներ՝ Տ. Ներսէս Արք. Արղեան եւ Տ. Ադան Արք. Գոզեան



Աւետիս Վրդ. Իփրանեան. ծայրագոյն վարդապետական աստիճան կը ստանայ







Չախեն Եղ. Ամեն. Պատրիարք Հայրը ԱՄՆ-ի կոնկրետի անդամ Տիար. Փրանք Փայուն եւ իր դուստրը



Պատրիարք Ս. Հայր կ'օժէ Ս. Փրկչի մատրան Մկրտություն Աւագանը



Կարտինալ Լեոնարսո Սանտրիի այցը



Կարտինալ Կուրտ Զոխի այցը



Հիւր հոգեւորականներ Հայաստանէն եւ Ռուսիայէն



Ս. Փրկչի մատրան բարերարներու այցը Պատրիարքարան

«Արտաքին Գործոց Նախարար Տիար Էդուարդ Նալբանդեանի եւ Իսրայելի
«Դեսպան Տիար Արմեն Մելքոնեանի այցը



Կիւլպէնկեան Մատենադարանի եւ Հայաստանի Ազգային գրադարանի միջեւ
համագործակցութեան, փոխըմբռնման յուշագիր-պայմանագիր ստորագրուեցաւ

ՈՒԽՏԱԲՈՐԱՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ



Մր. Թարգմանչաց Վարժարանի 2017 տարւոյ խմբանկարը

Սրբոց Թարգմանչաց վարժարանի շրջանաւարտները եւ ուսուցչական կազմը.
Տեսուչ՝ Տ. Նորայր Վրդ. Գագազեանի գլխաւորութեամբ:



Սր. Թարգմանչաց վարժարանի Երկրորդականի եւ մանկապարտեզի հունձքը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

90 ամեակ «Միոն»ի	Ն.Ա.Մ.	3
Այրի Կնոջ լուման -----	Ն.Ա.Մ.	5
PATRIARCH YEGHSHE DERDERIAN'S ----- VIEWS ON THE ARMENIAN PEOPLE AND THE ARMENIAN CHURCH	Trans by: Fr. Krikor Maksoudian	7
Արցախի մելիքությունները որպես ----- Հայոց պետականության դրսևորում	Արտակ Մաղալեան	16
Խաչվերացի քարոզ -----	Արշակ Եպս. Խաչատրեան	19
Առածներ (հոսկէ- հոնկէ)		22
Ռէալիզմը Օննիկ Զիֆթէ-Սարաֆի ----- նորավէպերում	Տաթևիկ Մերջանեան	24
Կամային որակների քննությունը Լեւոն Բաշալեանի «Միւզենիի վարպետ նորավէպում	Տաթևիկ Մերջանեան	36
Քաղաքականության և իրաւունքի ----- գոյարանական իմքերը	Գեորգ Յակոբեան	42
Երբ սայլակից իջնելը եւ քայլելը շատերին ----- հեքիաթ է թւում	Ներսէս Աբղ. Ալոյեան	51
Այլեւայլը -----	Ներսէս Աբղ. Ալոյեան	55
St. James Cathedral structural works & renovation.....		61
Armenian Bankers in the Ottoman Empire -----	Bouldoukian	64
Բարեպաշտական նուէրներ -----	Սեւան Արք.Ղարիպեան	66
Եկեղեցական կեանք -----	Գ. Ծ. Վրդ. Չաքարեան	68
Պաշտօնականք -----	Ներսէս Աբղ. Ալոյեան	73
Նոր հրատարակություններ -----		77
Հոգը. Տ. Աւետիս Ծ. Վրդ. Իփրանեան -----		78
Նկարներ		79

«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սիոն»ի խմբագրությունը կը փափաքի ամբողջացնել և արդիականացնել բաժանորդներու ցանկը:
Բաժանորդագրուէք նորագոյն շրջանի «Սիոն»ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցով և կամ
այցելել մեր կայքէջը:

Հանճեցէք լրացնել սոյն հարցաթերթիկը՝ նշելով «Սիոն» ստանալու Ձեր նախընտրած տարբերակը:

Կրնաք դիմել նաեւ մեր կայքէջին:

(Հանճեցէք գրել զլիսագիր և ընթերնելի, անգլերէն, English / French)

Անուն. _____

Մականուն. _____

Տիպոս. _____

Կազմակերպութիւն. _____

Հասցէ. _____

Կայքէջ _____ Email address _____

Տարեկան Բաժանորդագրութիւն՝ \$ 150 USD

NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our website and send your request for subscription. We will soon have the PDF version of SION on our website.

Name: _____

Title: _____

Organization: _____

Address: _____

Yearly Subscription \$150 USD

Send your checks to:
Armenian Patriarchate of Jerusalem
P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

patriarchateofjerusalem@yahoo.com

or

sionapj@gmail.com

or

mkojayan@sbcglobal.net

Գլխավոր խմբագիր՝ Մինաս Գոնայեան

Խմբագիր՝ Տ. Ներսէս Աբեղայ Արղեան

Editor-in-Chief: Minas Kojayan Editor:

Fr. Nerseh Aloyan

Cover Design - M.K

Cover Picture: Garo (Jerusalem)

Technical Assistant: Ayman Tahhan (St. James Press)

